

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
10 (1)**

Երևան 2022

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գզոյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անումյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,
Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շենապյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

***Цехаспанагитакан андес* (“Журнал исследований геноцида”)**

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член
Национальной академии наук Республики Армения, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартirosян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной академии наук Республики Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории Национальной академии наук Республики Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Ցեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ:

Ցեղասպանագիտական հանդեսում տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար:

Ցեղասպանագիտական հանդեսն ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում:

Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes ("Journal of Genocide Studies") (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tshitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанагитакан андес ("Журнал исследований геноцида") (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом "Музей-институт Геноцида армян" (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в "Журнале исследований геноцида," отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда "Музей-институт Геноцида армян." Фонд "Музей-институт Геноцида армян" не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

"Журнал исследований геноцида" индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Նարեկ Մ. Պողոսյան

Էլիտիզիդ. հիմնական օրինակները..... 9

Լիլիթ Հր. Հովհաննիսյան

Կիլիկիան ԱՄՆ պեպրական դեպարտամենտի 1919–1920 թթ.

դիվանագիտական փաստաթղթերում.....40

Ռորերտ Ա. Թաթոյան

Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիդի նահանգում հայերի

ու սատրիկների բնաջնջման վերաբերյալ բրիտանացի դիվանագետ և

հեղափոխյալ մայոր Նոյելի տեղեկագիրը.....64

Դավիթ Վ. Գասպարյան

Ցեղասպանության արդացողումը գեղարվեստական գրականության մեջ84

Արծուի Հ. Բախչինեան

Մի հարուած Գիւր Մխիթարեանի «Դրուագներ հայկական Գողգոթայէն»

անսրիպ յուշագրութիւնից.....97

Էթիկայի կանոններ 110

Ցուցումներ հեղինակներին 111

CONTENT

ARTICLES

Narek M. Poghosyan

Eliticide: The Main Examples 9

Lilit Hr. Hovhannisyan

Cilicia in the Documents of the U.S. State Department in 1919–192040

Robert A. Tatoyan

*British Diplomat and Spy Major Noel's Report on the Extermination of Armenians
and Assyrians in Diarbekir Province during the Armenian Genocide*64

David V. Gasparyan

Reflection of the Genocide in the Fiction.....84

Artsvi H. Bakhchinyan

*An Excerpt from Kud Mkhitarian's Unpublished Memoires
“Episodes from Armenian Golgotha”*97

Ethical Guidelines 110

Instruction for Authors.....111

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Нарек М. Погосян

Элителизм: основные примеры..... 9

Лилит Гр. Оганисян

Киликия в документах государственного департамента США в 1919–1920 гг.40

Роберт А. Татоян

Донесение британского дипломата и шпиона майора Ноэля об истреблении армян и ассирийцев в провинции Диарбекир во время Геноцида армян.....64

Давид В. Гаспарян

Отображение Геноцида в художественной литературе84

Арцви Г. Бахчинян

*Отрывок из неизданных мемуаров Кюда Мхитаряна
“Фрагменты армянской Голгофы”*97

Правила этики..... 110

Руководство для авторов.....111

ԷԼԻՏԻՑԻԴ. ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Նարեկ Մ. Պողոսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Էլիտայի ու մտավորականության ոչնչացման խնդիրը կարևոր տեղ է զբաղեցնում ինչպես ցեղասպանությունների, զանգվածային սպանությունների, այնպես էլ տվյալ ազգին կամ պետությանը մտավոր ներուժից զրկելու և վերահսկողության տակ վերցնելու համատեքստում: Պատմության ընթացքում գրանցվել են այնպիսի դեպքեր, երբ տարբեր ռասայական, էթնիկ, կրոնական խմբերի ոչնչացման կամ մշակութային ցեղասպանության իրագործման նպատակով դրանց էլիտաները կանխամտածված թիրախավորվել են: Այս հանգամանքով է պայմանավորված, որ թեման արժանացել է «ցեղասպանություն» (genocide) եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինի ուշադրությանը. նա մտավորականության և էլիտայի ոչնչացումը դիտարկել է ցեղասպանության իրագործման սոցիալական, ֆիզիկական և մշակութային ասպեկտներով: Սակայն հետաքրքիրն այն է, որ մտավորականության ոչնչացումը տևական ժամանակ որևէ հատուկ բնորոշում չի ստացել, մինչև որ 1992 թ. կիրառության մեջ է դրվել «eliticide» կամ «elitocide» եզրույթը:

Եվ քանի որ էլիտիցիդի երևույթը համեմատաբար քիչ է ուսումնասիրված, հոդվածում փորձել ենք ներկայացնել և վերլուծել դրա ամենաակնառու օրինակները՝ Հայոց ցեղասպանության ընթացքում հայ մտավորականության և վերնախավի ոչնչացումը, Լեհաստանում նացիստական Գերմանիայի իրագործած էլիտիցիդը, ինչպես նաև Տիբեթում, Կամբոջայում, Բուրունդիում, Բանգլադեշում, Բոսնիայում տեղի ունեցած էլիտիցիդի դեպքերը:

Բանալի բառեր՝ մտավորականություն, վերնախավ, Ռաֆայել Լեմկին, զանգվածային սպանություններ, մտավոր ներուժ, Հայոց ցեղասպանություն, երիտթուրքեր, նացիստական Գերմանիա, Լեհաստան, Տիբեթ, Կամբոջա, Բուրունդի, Բոսնիա, Կարմիր կիներներ, մտավորականության դեմ ուղղված արշավ, ընտրողական ցեղասպանություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 05.01.2022: Ընդունվել է տպագրության՝ 15.03.2022:

The article was submitted on 05.01.2022 and accepted for publication on 15.03.2022.

Статья поступила 05.01.2022 и была принята к публикации 15.03.2022.

Ինչպես հղել՝ Նարեկ Մ. Պողոսյան, «Էլիտիցիդ. հիմնական օրինակները», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 1 (2022), 9-39:

How to cite: Narek M. Poghosyan, “Eliticide: The Main Examples,” *Ts’eghaspanagitakan handes* 10, no. 1 (2022): 9-39.

Как сослаться: Нарек М. Погосян, “Элитид: основные примеры,” *Цехаспанагитакан андес* 10, no. 1 (2022): 9-39.

Ներածություն

Յուրաքանչյուր կրոնական, էթնիկ և ռասայական խմբի հասարակական կյանքում էական դերակատարություն ունեն էլիտաները կամ վերնախավը: Ուշագրավ է, որ «Էլիտա» (լատ.՝ *eligere*, ֆր.՝ *elite*) բառը 17-րդ դարում օգտագործվել է հատուկ որակի ապրանքներ նկարագրելու համար: Հետագայում այդ բառի կիրառության դաշտն ընդլայնվում է՝ վերաբերելով այնպիսի բարձր սոցիալական խմբերի, ինչպիսիք են հեղինակավոր գորամասերը և ազնվականության բարձր դասերը: Մինչև 19-րդ դարի վերջը Եվրոպայում և 1930-ական թթ. Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում այս եզրույթը լայնորեն չի կիրառվել հասարակական և քաղաքական գրություններում. այդ շրջանում այն տարածվում էր էլիտաների սոցիոլոգիական տեսությունների համատեքստում, մասնավորապես Վիլֆրեդո Պարետի գրություններում¹:

Ըստ «Բրիտանիկա» հանրագիտարանի՝ էլիտաները անհամաչափ ուժ և ազդեցություն ունեցող փոքր խմբեր են: Ընդունված է տարբերակել *քաղաքական* և *մշակութային էլիտա* հասկացությունները: Առաջինում ընդգրկված անհատների դիրքը հնարավորություն է տալիս հզոր հաստատություններում, կազմակերպություններում և շարժումներում ազդել քաղաքական արդյունքների վրա: Մշակութային էլիտայում ընդգրկված անհատները բարձր կարգավիճակ և ազդեցություն ունեն ոչ քաղաքական ոլորտներում, ինչպիսիք են արվեստը, գրականությունը, բարեգործական կազմակերպություններն ու քաղաքացիական միավորումները²:

Եվ պատահական չէ, որ էլիտաները մեծ դերակատարություն ունեն հանրային կյանքի կազմակերպման և պետական կառավարման հիմնական ոլորտներում, որոնց շրջանակներում էլ պետք է դիտարկել մտավորականությանը:

Մտավորականությունը հաճախ բնորոշվում է «ինտելիգենցիա» (*Intelligentsia*) եզրույթով, որի հիմքում լատիներեն «*intellegentia*» բառն է, որ նշանակում է ընկալում, ճանաչողական ուժ, ըմբռնման ունակություն: 1825 թ. Դեկաբրիստների ապստամբության հետևախորքին Ռուսաստանում «*intelligentsia*» (ռուս.՝ *интеллигенция*) եզրույթը տարածում է գտնում և վերափմաստավորվում: Եվրոպայում այն տարածվում է ավելի ուշ՝ միայն 1860-1870-ականներին³: Մերիամ-Վեբսթերի բացատրական բառարանի համաձայն՝ ինտելիգենցիան ներառում է այն մտավորականներին, որոնք ղեկավարներ կամ առաջամարտիկներ են արվեստում և սոցիալ-քաղաքական ոլորտում, այլ կեպ ասած՝ կազմում են հասարակության էլիտան⁴:

Պատմության ընթացքում բազմաթիվ են այն օրինակները, թե ինչպես են տարբեր ռասայական, էթնիկ և կրոնական խմբերի ոչնչացման կամ մշակութային ցեղասպանության իրագործման նպատակով դրանց էլիտաները կանխամտածված թիրախավորվել: Այնպես որ, մտավորականության և էլիտայի ոչնչացումը կարևոր տեղ

1 Tom Bottomore, *Elites and Society* (London and New York: Routledge, 1993), 1.

2 John Higley, “Elites,” <https://www.britannica.com/topic/elite-sociology>, դիտվել է 10.11.2021:

3 Stephen Eric Bronner, *Reclaiming the Enlightenment: Toward a Politics of Radical Engagement* (New York: Columbia University Press, 2004), 68.

4 Merriam-Webster Dictionary, “Definition of the intelligentsia,” <https://www.merriam-webster.com/dictionary/intelligentsia>.

է գրավում ինչպես զանգվածային սպանությունների, այնպես էլ տվյալ ազգին կամ պետությանը մտավոր ներուժից զրկելու ու վերահսկողության տակ վերցնելու համատեքստում:

Այդպիսի դեպքեր հայտնի են նաև հայոց պատմությունից, ինչպես, օրինակ, երբ որ 703 թ. արաբ զորավար Կասիմը հայերի բարձրացրած ապստամբության վրեժը լուծելու համար հրամայում է զինաթափ անել հայ նախարարներին (նրանց իր մոտ էր հրավիրել՝ իբր հաշվառում կատարելու և ռոճիկ վճարելու) և ստիպել Նախճավանի և Խրամի եկեղեցիները մտնել, ապա հրկիզել դրանք⁵: Եվ հայ նախարարներին ողջակիզմամբ դաժանաբար սպանելու հետ է կապված, որ 705-ն արաբներն անվանել են «Կրակի տարի»⁶: Թեև այս իրադարձությունը հայ նախարարությունները թուլացնում է, սակայն դա այնպիսի սաստիկ բողոք է հարուցում հայոց աշխարհում, որ Վելիդ ամիրապետը, որ հրահանգել էր հայ նախարարական տոհմերի ոչնչացումը, ստիպված է լինում փոխել իր ոստիկանապետին⁷:

Մմանատիպ իրադարձություն տեղի է ունեցել նաև Կիլիկիայում, երբ մոնղոլական օգնական ջոկատի զորահրամանատար Փիլարդուն, որ մահմեդականություն էր ընդունել, ցանկանալով վերահսկողության տակ վերցնել երկրի արտաքին քաղաքականությունը, 1307 թ. նոյեմբերի 17-ին դավադրություն է կազմակերպում: Նա իր մոտ՝ Անարգաբա քաղաք, հյուրասիրության է հրավիրում Լևոն Դ-ին, Հեթումին, նրա եղբորորդի Թորոսին, Օշին սպարապետին և նշանավոր իշխանների և կազմակերպում նրանց սպանությունը⁸: Այս իրադարձությունը մեծապես խաբխրում է հայ-մոնղոլական դաշինքը և թուլացնում Կիլիկիայի հայոց պետականությունը:

Էլիտիցիդի երևույթի վերաբերյալ Ռաֆայել Լեմկինի դիտարկումները և դրանց զարգացումը

Հատկանշական է, որ էլիտայի ու մտավորականության ոչնչացման խնդրին ուշադրություն է դարձրել նաև իրավաբան և ցեղասպանություն հանցագործության դեմ պայքարի առաջամարտիկ Ռաֆայել Լեմկինը: «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ նա ներկայացրել է «ցեղասպանություն» եզրույթը՝ ցեղասպանության գործիքակազմն առանձնացնելով քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական ասպեկտների ներքո: Նա անդրադարձել է նաև Եվրոպայում նացիստների՝ մտավորականությանը ոչնչացնելու թեմային որպես սոցիալական ոլորտում ցեղասպանության իրագործման տեխնիկայի մաս:

5 Հայ ժողովրդի պատմություն, խմբ.՝ Աղայան Է. Բ., Առաքելյան Բ. Ն., Ավետիսյան Հ. Ա., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ., հ. 2 (ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984), 329:

6 Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 2 (Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1967), 375-377:

7 Նույն տեղում:

8 Angus Stewart, "The assassination of King Het'um II: the conversion of the Ilkhans and the Armenians," *Journal of the Royal Asiatic Society* 15, no. 1 (2005): 49-57.

Ըստ Լեմկինի՝ ցեղասպանությունն իրականացվում է մարդկանց կյանքի տարրեր բնագավառների վրա համաժամանակյա հարձակմամբ: Դրանցից մեկն էլ սոցիալական ոլորտն է, որտեղ հարձակումն իրականացվում է՝ խաթարելով ազգի սոցիալական համախմբումը և սպանելով կամ հեռացնելով այնպիսի տարրի, ինչպիսին է մտավորականությունը, որն ապահովում է հոգևոր առաջնորդությունը: Այս համատեքստում իրավաբանն ուշադրություն է հրավիրում «Mein Kampf»⁹-ում Հիտլերի հետևյալ հայտարարությանը. «Հոգիներից ամենամեծը կարող է լուծարվել, եթե նրա կրողը ռետինե մահակով սպանվի»¹⁰:

Անդրադառնալով սոցիալական ոլորտում նացիստների վարած ցեղասպանական քաղաքականության նրբերանգներին՝ Լեմկինը նշում է. «Ազգի սոցիալական կառուցվածքը, որը կենսական նշանակություն ունի ազգի զարգացման համար, օկուպանտը ձգտում է նաև այնպիսի փոփոխությունների ենթարկել, որոնք կարող են թուլացնել ազգային հոգևոր ռեսուրսները: Հարձակման առանցքային կետը եղել է ինտելիգենցիան, քանի որ այս խումբը հիմնականում ապահովում է ազգային առաջնորդությունը և դիմադրություն է կազմակերպում նացիֆիկացման նկատմամբ: Սա ակներև է հատկապես Լեհաստանում և Սլովենիայում, որտեղ մտավորականությունն ու հոգևորականությունը մեծ մասամբ հեռացվել են մնացած բնակչությունից և արտաքսվել Գերմանիա՝ հարկադիր աշխատանքի»¹¹:

Հետաքրքրական է, որ «ցեղասպանություն» եզրույթի հեղինակը էլիտայի կամ մտավորականության ոչնչացումը դիտարկում է նաև նացիստների իրականացրած ֆիզիկական ցեղասպանության եղանակների, մասնավորապես զանգվածային սպանությունների իրագործման լույսի ներքո. «Զանգվածային սպանությունների տեխնիկան կիրառվում է հիմնականում լեհերի, ռուսների, հրեաների, ինչպես նաև գրավյալ բոլոր երկրների ոչ համագործակցային խմբերի անունից առաջատար անձանց դեմ: Լեհաստանում, Բոհեմիա-Մորավիայում և Սլովենիայում մտավորականությունը «լուծարվում» է, քանի որ նրանք միշտ համարվել են ազգային իդեալների հիմնական կրողներ, իսկ բռնազավթման ժամանակ հատկապես կասկածվում էին որպես դիմադրության կազմակերպիչներ»¹²:

Ըստ այդմ՝ նա կարևորում է մտավորականների առկայությունը նացիստների նկատմամբ դիմադրության կազմակերպման հարցում՝ բերելով չեխ մտավորականների օրինակը: Գերմանացիները նրանց համարում էին վտանգավոր տարր, հետապնդումների էին ենթարկում և բանտերում պահում, քանի որ նրանք կրում էին չեխական ազգային ոգին և կարող էին հայրենասիրական զգացումներ բորբոքել¹³:

9 Հայ.՝ «Իմ պայքարը», Ադոլֆ Հիտլերի ինքնակենսագրական գիրքն է, որտեղ նկարագրվում է Հիտլերի՝ անտիսեմիտիզմի հետևորդ դառնալու պատճառները, քաղաքական գաղափարախոսությունը և Գերմանիայի ապագայի նրա տեսականը: St'u Adolf Hitler, *Mein Kampf* (New York: Reynal & Hitchcock, 1939):

10 Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress* (Washington: Carnegie Endowment for International Peace, 1944), xi.

11 Նույն տեղում, 83:

12 Նույն տեղում, 88-89:

13 Նույն տեղում, 139:

Բացի այդ՝ հատկանշական է, որ Լեմկինը մտավորականների ոչնչացումը դիտարկում է նաև մշակութային ցեղասպանության համատեքստում: Ցեղասպանության պատմական դեպքերի իրագործման բաղադրիչների մեթոդոլոգիական բաժանման մասին իր «Ցեղասպանության վերանայված նախագծում» ցեղասպանության իրագործման մեթոդների և տեխնիկայի շրջանակներում է դիտարկում մշակութային ցեղասպանությունը, որը, ըստ նրա, ներառում է նաև մշակութային խոշոր դեմքերի, առաջնորդների ոչնչացումը¹⁴:

Լեմկինը պնդում էր, որ «մշակութային ցեղասպանությունը շատ ավելին է, քան պարզապես չափավոր հարկադրանքով բռնի ձուլման քաղաքականությունը». այն տեղի է ունենում ինչպես երեխաներին մի խմբից մեկ այլ խումբ հարկադիր տեղափոխմամբ, այնպես էլ ազգի մտավորականության ոչնչացմամբ, անձնական գրույցներում ազգային լեզվի օգտագործման արգելքով, գրքերի այրմամբ, պատմական կամ կրոնական հուշարձանների ոչնչացմամբ և կամ այլ նպատակներով դրանց օգտագործմամբ¹⁵:

Հրեա իրավաբանը կարևորում է մտավորականության դերը՝ մշակույթում ունցած համամարդկային նշանակության ներդրումների առումով: Ըստ նրա՝ մեր ամբողջ մշակութային ժառանգությունը բոլոր ժողովուրդների ներդրումների արդյունքն է: «Մենք դա լավագույնս կարող ենք հասկանալ, եթե գիտակցենք, թե որքան աղքատ կլինեք մեր մշակույթը, եթե Գերմանիայի դատապարտած այսպես կոչված ստորադաս ժողովուրդներին, ինչպես հրեաներն են, թույլ չտային ստեղծել Աստվածաշունչ կամ ծնել Այնշտայն, Սայինոգա, կամ եթե լեհերը հնարավորություն չունենային աշխարհին տալ Կոպեռնիկոս, Շոպեն, Կյուրի, չեխերը՝ Հուս և Դվորժակ, հույները՝ Պլատոն և Սոկրատես, ռուսները՝ Տոլստոյ և Շոստակովիչ»¹⁶, – նշում է Լեմկինը:

Ինչպես տեսնում ենք, Լեմկինը մտավորականների կամ էլիտայի ոչնչացումը դիտարկում է ցեղասպանության իրագործման սոցիալական, ֆիզիկական և մշակութային ասպեկտներով: Սակայն հետաքրքիրն այն է, որ մտավորականության ոչնչացումը տևական ժամանակ որևէ հատուկ բնորոշում չի ունեցել մինչև «eliticide» կամ «elitocide» եզրույթի՝ կիրառության մեջ դրվելը: Այն կազմված է ֆրանսերեն «élite» (ընտրյալ) և լատիներեն «caedere» (կտրել, սպանել) բառերից¹⁷: Այս եզրույթն առաջին անգամ օգտագործել է բրիտանացի լրագրող Մայքլ Նիկոլսոնը 1992 թ. Բոսնիա և Հերցեգովինայում Բիելինայի կոտորածները նկարագրելու համար, երբ սերբերը հարձակվել էին մահմեդական և խորվաթ քաղաքական ակտիվիստների և համայնքի հայտնի առաջնորդների վրա¹⁸:

14 John Docker, “Structure and event: Settler Colonialism, Time, and the Question of Genocide,” in *Empire, Colony, Genocide: Conquest, Occupation, and Subaltern Resistance in World History*, ed. Dirk Moses (New York and Oxford: Berghahn Books, 2008), 88-89.

15 John Cooper, *Raphael Lemkin and the Struggle for the Genocide Convention* (New York: Palgrave MacMillan, 2008), 91.

16 Genocide - A Modern Crime by Raphael Lemkin, April 1945, <http://www.preventgenocide.org/lemkin/freeworld1945.htm>.

17 Paul R. Bartrop, Steven L. Jacobs, *Modern Genocide [4 volumes]: The Definitive Resource and Document Collection*, (CA: ABC-CLIO, 2015), 2232.

18 Cathie Carmichael, “Genocide and Population Displacement in Post-Communist Eastern Europe,” in eds.

«Eliticide»-ը կամ էլիտասպանությունը վերաբերում է որևէ խմբի ղեկավարության, կրթված մարդկանց և հոգևորականության սպանությանը: Այն ավելի շատ դիտարկվում է տեսական առումով, քանի որ էլիտասպանությունն օրենքի տեսանկյունից որպես առանձին հանցագործության տեսակ չի սահմանվել, և, ի տարբերություն ցեղասպանության, դրա վերաբերյալ չկա միջազգային կոնվենցիա: Ըստ Մամուել Տոտենի և Փոլ Բարտրոպի հեղինակած «Ցեղասպանության բառարանի» (Dictionary of Genocide)¹⁹ էլիտասպանությունը հաճախ իրականացվում է ցեղասպանության սկզբում՝ խմբին այն անձանցից զրկելու համար, որոնք կարող են ղեկավարել հանցագործների նկատմամբ դիմադրությունը: Այն նաև նպատակայնորեն օգտագործվում է թիրախավորված խմբի քաղաքացիների շրջանում վախ սերմանելու և ահռելի կորուստի մտավախություն առաջացնելու համար¹⁹:

Նկատենք, որ էլիտիցիդներն ունենում են սոցիալական և քաղաքական խոր հետևանքներ, որոնք թուլացնում են տվյալ համայնքի սոցիալական, քաղաքական, մշակութային և բարոյական համակարգը, ազգային և կրոնական խմբերին դարձնում խոցելի՝ նվաճումների և տիրապետության առջև, և ի վերջո դրանք կարող են հանգեցնել ազգային բոլոր համայնքների ոչնչացմանը:

Պատմականորեն երբ որևէ պետություն նվաճել է մեկ այլ պետության տարածքը, այդ երկիրը թուլացնելու և հպատակեցնելու համար շատ հաճախ դիմել է տվյալ պետության մշակութային, տնտեսական, ռազմական և քաղաքական վերնախավի ոչնչացման գործելակերպին: Բայց խնդիրն այլ է, երբ վերնախավի ոչնչացումը տեղի է ունենում ցեղասպանական նպատակներով՝ որևէ կրոնական, ռասայական և էթնիկ խմբի ոչնչացման համատեքստում:

Ծագումով լեհ ավստրալացի սոցիոլոգ Յան Պակուլսկին նկատում է, որ էլիտիցիդները ցեղասպանություններից տարբերվում են զոհերի շերտավորված (կամ ուղղահայաց), ինչպես նաև կատեգորիկ (կամ հորիզոնական) թիրախավորմամբ: Թե՛ էլիտիցիդները և թե՛ ցեղասպանություններն ունեն տուժածության նկարագրական բնույթ: Բոլոր էլիտիցիդները հանգեցնում են «հակադարձ անհամամասնության օրենքի», ըստ որի՝ սպանվածները կամ առավել տուժածները թիրախավորված համայնքի այն անդամներն են, որոնք առավել բարձր կարգավիճակ ունեն²⁰:

Իսկ հետազոտող Դենիս Գրացը նշում է՝ պարտադիր չէ, որ էլիտիցիդի գործողությունները հանգեցնեն ցեղասպանության, թեև մեծապես հնարավոր են դարձնում այն: Էլիտար տարրին վերացնելով՝ խմբին «գլխատում են», այսինքն՝ անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծում նրան կառավարելու համար²¹:

Ի տարբերություն ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործու-

Donald Bloxham, Dirk Moses, *The Oxford Handbook of Genocide Studies* (New York: Oxford University Press, 2010), 521.

19 Samuel Totten and Paul R. Bartrop, with contributions by Steven L. Jacobs, *Dictionary of Genocide*, vol. 1 (Westport, Connecticut, London: Greenwood Press, 2008), 129-130.

20 Jan Pakulski, "State Violence and the Eliticide in Poland 1935-49," in *Violence and the State*, eds. Matt Killingsworth, Matthew Sussex, Jan Pakulski (Manchester: Manchester University Press, 2016), 43.

21 Dennis Gratz, "Eliticide and Genocide in B&H," http://www.war-crimes-genocide-memories.org/fajlovi/lectures/08_lectures_gratz.pdf, դիտվել է՝ 16.10.2021:

թյունների՝ էլիտիցիդի երևույթը մինչ օրս օրենքով չի սահմանվել որպես հանցագործության առանձին տեսակ և համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Հաճախ այն շփոթում են պոլիտիցիդի (politicide)²² հետ (միայն քաղաքական հակառակորդների հետապնդում), որի հետ այս երևույթը կարող է ամբողջովին կամ միայն մասամբ համընկնել²³: Իսկ երբեմն էլ էլիտիցիդի երևույթը դիտարկվում է կլասիցիդի (classicide) շրջանակներում որպես բուրժուազիայի, հասարակության ինտելեկտուալ հատվածների ոչնչացում²⁴: Թեև «կլասիցիդ» (classicide) եզրույթն առաջին անգամ 1972 թ. կիրառել է ավստրալացի բժիշկ և քաղաքական գործիչ Ֆրեդերիկ Շվարցը²⁵, այնուամենայնիվ այն հանրայնացրել է սոցիոլոգ Մայքլ Մանը: Ըստ նրա սահմանման՝ «կլասիցիդ» նշանակում է «բոլոր սոցիալական դասերի զանգվածային դիտավորյալ սպանություն»²⁶: Մեկ այլ հետազոտող՝ բրիտանացի սոցիոլոգ Մարտին Շոուն, ընդգծում է ցեղասպանությունների իրագործման դասակարգային չափման կարևորությունը՝ անդրադառնալով նաև հասարակության մեջ բարձր կարգավիճակ ունեցող և կրթված մարդկանց վրա հարձակումներին²⁷:

Էլիտայի ոչնչացումը կարևորվում է նաև ցեղասպանության՝ որևէ խմբի մասնակի ոչնչացման մտադրության համատեքստում: ՄԱԿ-ի նշանակած փորձագետների հանձնաժողովը, որը պետք է քննել նախկին Հարավսլավիայում միջազգային իրավունքի խախտումները, փաստարկ է ներկայացնում, որ եթե թիրախավորված է խմբի ընդհանուր ղեկավարությունը (քաղաքական, վարչական, գործարար, կրոնական առաջնորդներ, ակադեմիկոսներ, մտավորականներ և այլք), ապա այն կարող է լինել ցեղասպանության վաղ ապացույց՝ անկախ սպանվածների իրական թվից²⁸:

Այս կապակցությամբ Քինի (Նյու Հեմփշիր) պետական քոլեջի Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրության պրոֆեսոր Ջեյմս Վոլերը պատահական չի համարում, որ 1992 թ. Բոսնիա և Հերցեգովինայի Պրիլեդոր քաղաքի Կերատերմ բանտային

22 Ցեղասպանագիտության մեջ «պոլիտիցիդ» (քաղաքական սպանություն) հասկացության ներքո նկատի է առնվում նախապես ընտրված խմբի ֆիզիկական ոչնչացումը կամ արտաքսումն այն պատճառով, որ այդ խմբի անդամները պատկանում են որոշակի քաղաքական հոսանքի: «Պոլիտիցիդ» եզրույթը շրջանառության մեջ են դրել սոցիոլոգներ Թեդ Գուրը և Բարբարա Հարֆը, որոնք այդ եզրույթն օգտագործում են՝ նկարագրելու այն մարդկանց խմբերի սպանությունը, որոնք թիրախավորվել են ոչ թե իրենց ընդհանուր էթնիկական կամ համայնքային հատկությունների, այլ «ռեժիմի և գերիշխող խմբերի նկատմամբ իրենց հիերարխիկ դիրքի կամ քաղաքական ընդդիմության պատճառով»: Տե՛ս Barbara Harff, Ted Robert Gurr, "Toward Empirical Theory of Genocides and Politicides: Identification and Measurement of Cases since 1945," *International Studies Quarterly* 32, no. 3 (1988): 360:

23 Jan Pakulski, "State Violence and the Eliticide in Poland 1935-49," in *Violence and the State*, eds. Matt Killingsworth, Matthew Sussex, Jan Pakulski (Manchester: Manchester University Press, 2016), 43.

24 Bartolomé Clavero, *Genocide or Ethnocide, 1933-2007: How to Make, Unmake, and Remake Law with Words* (Milano: Giuffrè Editore, 2008), 117.

25 Frederick Charles Schwarz, *The Three Faces of Revolution* (Washington, DC: Capitol Hill Press, 1972), 51-53.

26 Michael Mann, *The Dark Side of Democracy: Explaining Ethnic Cleansing* (Cambridge: Cambridge University Press, 2005), 17.

27 Martin Shaw, *What Is Genocide?* (Cambridge: Polity Press, 2015), 72.

28 UN Document S/1994/674, May 27, 1994, paragraph 94, https://www.icty.org/x/file/About/OTP/un_commission_of_experts_report1994_en.pdf, դիտվել է 05.11.2021:

ճամբարի անվտանգության հրամանատար Դուշկո Սիկիրիցայի գործով Նախկին Հարավսլավիայի Միջազգային քրեական տրիբունալը որոշում է կայացրել, որ «մասամբ ոչնչացնելու մտադրությունը կարող է հաստատվել, եթե կան ապացույցներ, որ ոչնչացումը կապված է խմբի մի զգալի հատվածի հետ, ինչպիսին է նրա ղեկավարությունը»²⁹: Իսկ մեկ այլ բոսնիացի սերբի՝ Գորան Ելիսիչի գործով դատարանն ընդունում է, որ ցեղասպանության մտադրությունը կարող է նաև կապված լինել ավելի սահմանափակ թվով անձանց ոչնչացման հետ, որոնց ընտրել են՝ հաշվի առնելով այն ազդեցությունը, որ նրանց անհետացումը կունենա խմբի գոյատևման վրա³⁰:

Ցեղասպանագետներ Սամուել Տոտենի և Փոլ Բարտրոպի կարծիքով՝ անցյալ դարի ընթացքում էլիտասպանություն է տեղի ունեցել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության տարիներին (1915-1923), Կամբոջայում Կարմիր կիմերների կառավարման ժամանակ (1975-1979), նախկին Հարավսլավիայի տարբեր քաղաքներում 1990-ականներին³¹: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ցեղասպանության իրագործման ժամանակ էլիտիցիդի կարևոր օրինակներից է նաև 1971 թ. Պակիստանի բանակի՝ Բանգլադեշի մտավորականության թիրախավորումը:

Հայոց ցեղասպանության ընթացքում տեղի ունեցած էլիտիցիդը

Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման ծրագրի իրականացումը սկսվում է բանակում ծառայող հայերի զինաթափումից և ոչնչացումից³², որոնց հետևում է հայ մտավորականության սպանողը: 1915 թ. ապրիլի 24-ին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթի հատուկ հրամանով³³ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ համայնքի 235-270 ճանաչված ներկայացուցիչներ՝ առաջնորդները և մտավորականությունը, առաջին ալիքով ձերբակալվում և տեղափոխվում են Անկարայի մոտ գտնվող երկու համակենտրոնացման ճամբարներ³⁴: Գործողությունը սկսվում է երեկոյան, երբ ոստիկանները մուտք են գործում հայկական թաղամաս և տղամարդկանց բռնի տանում տեղի ոստիկանական բաժանմունքներ: Իսկ գործողու-

29 James Waller, *Confronting Evil: Engaging Our Responsibility to Prevent Genocide* (Oxford: Oxford University Press, 2016), 77.

30 Նույն տեղում:

31 *Dictionary of Genocide*, 129-130.

32 1915 թ. փետրվարին երիտթուրքական իշխանությունները որոշում են զինաթափել բանակում ծառայող հայերին և տեղափոխել աշխատանքային գումարտակներ: Այնտեղ ընդգրկված հայ զինվորները պարբերաբար մահապատժի են ենթարկվում, թեև որոշ հմուտ աշխատողների խնայում են մինչև 1916 թ.: Ավելի մանրամասն տե՛ս Ronald Grigor Suny, *“They Can Live in the Desert but Nowhere Else”: A History of the Armenian Genocide* (Princeton and Oxford: Princeton University Press, 2017), 244, 248-249:

33 1915 թ. ապրիլի 24-ին Թալեաթ փաշայի շրջաբերականը տե՛ս Paul R. Bartrop, *Steven Leonard Jacobs, Modern Genocide: The Definitive Resource and Document Collection*, Vol. 1 (Santa Barbara, Denver, Oxford: ACB-CLIO, 2015), 154-155.

34 Simone Pierluigi, “Is the Denial of the “Armenian Genocide” an Obstacle to Turkey’s Accession to the EU?,” in *The Armenian Massacres of 1915–1916 a Hundred Years Later: Open Questions and Tentative Answers in International Law*, ed. Flavia Lattanzi, Emanuela Pistoia (Rome: Springer, 2018), 276.

թյան երկրորդ փուլով արդեն ձերբակալվում 500-600 պոլսահայ մտավորական³⁵:

Առաջնահերթ խնդիր էր պարզել ձերբակալվածների ինքնությունը. այդ նպատակով նրանց մեկ օր պահում էին ոստիկանական բաժանմունքում և կենտրոնական բանտում: Կ.Պոլսում գործողությունները ղեկավարում էր ոստիկանության պետ Բեդրի բեյը: Մտավորականների դեմ ուղղված գործողությունները նախապես պլանավորված էին, քանի որ մի քանի շաբաթ առաջ ոստիկանության պետը կնքված հրամաններ էր ուղարկել մայրաքաղաքի բոլոր ոստիկանական բաժանմունքներին՝ նախատեսված օրը դրանք բացելու³⁶: Այդ հրամաններում ներկայացված էին ձերբակալության ենթակա հայ մտավորականության ցուցակները³⁷:

Միայն Ստամբուլում մի քանի շաբաթվա ընթացքում էլիտայի 2345 ներկայացուցիչ է ձերբակալվում. նրանց մեծ մասամբ մահապատժի են ենթարկում³⁸: Ձերբակալված մտավորականներին մեղադրանքներ առաջադրելու նպատակով՝ բանտարկությունից անմիջապես հետո թուրքերը սկսում են խուզարկել նրանց բնակարանները, սակայն չեն կարողանում մեղադրական կյուրեր գտնել³⁹: Եվ ուշագրավ է, որ այդպես էլ նրանցից ոչ մեկին պատերազմի շրջանում սաբոտաժի, լրտեսության կամ այլ հանցագործության մեղադրանք չի առաջադրվել, և ոչ ոք չի ենթարկվել քրեական պատասխանատվության⁴⁰: Նույնիսկ Անկարայում հապճեպ կազմակերպված դատարանը ոչ մի մեղադրական փաստ չի կարողանում գտնել⁴¹:

Այս գործողության համատեքստում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Ստամբուլում ընդհանուր 600 հազ. բնակչից 150 հազարը հայեր էին, իսկ տեղի հայ մտավորականությունը բավական ստվար էր և առանձնահատուկ տեղ էր գրավում հայ ժողովրդի հոգևոր կյանքի կերտման գործում⁴²: Երիտթուրք ջարդարարներն այսպիսի գործելակերպով հայ ժողովրդի մտավոր ներուժը ոչնչացնելու նպատակ էին հետապնդում, ինչն առանցքային էր Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի բնաջնջելու ճանապարհին: Եվ պատահական չէ, որ պատմաբանները մտավորականության ոչնչացումը որակում են որպես Օսմանյան կայսրությունում ապրող հայ ժողովրդի գլխատում⁴³: Ռաֆայել Լեմկինն այս առիթով ընդգծում է, որ երիտ-

35 Christopher Walker, "World War I and the Armenian Genocide," in *The Armenian People from Ancient to Modern Times, Vol. II: Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century*, ed. Richard Hovannisian (New York: St. Martin's Press 1997), 252.

36 Yves Ternon, *Enquête sur la négation d'un génocide* (Marseille: Editions Parenthèses, 1989), 26.

37 Գրիգորիս Պալաքեան, *Հայ Գողգոթան: դրուագներ հայ մարտիրոսագրություննէն՝ Պեղինէն դէպի Զոր՝ 1914-1920* (Երևան, Հայաստան, 1961), 78:

38 Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (New York/Oxford: Berghahn Books), 2003, 221.

39 Վոլֆգանգ Գուստ, *Հայերի ցեղասպանությունը, աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը* (Երևան, Հայաստան, 2002), 16:

40 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 221.

41 Գուստ, *Հայերի ցեղասպանությունը*, 16:

42 Արամայիս Մնացականեան, «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը և ազգային վերածնունդը», *Յուշամպնեան Մեծ Եղեռնի (1915-1965)*, (Պեյրոյք, Ջարթօսք, 1965), 35:

43 Donald Bloxham, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the*

թուրքերը Կ.Պոլսում, ապա կայսրության այլ մասերում հայ մտավորականության ու վերնախավի ոչնչացմամբ մի հարվածով վնասում էին հայ ժողովրդի ուղեղը⁴⁴։

Օսմանյան իշխանություններն այդպիսով փորձում էին հայ ժողովրդին գրկել ինքնակազմակերպման և դիմադրական պայքարի հնարավորությունից, քանի որ այս գործում մտավորականությունը կարող էր վճռորոշ դերակատարություն ստանձնել։ Հենց դրանով է պայմանավորված, որ հայ ժողովրդին բնաջնջելու ծրագրերում մտավորականության և վերնախավի ոչնչացումն առանցքային տեղ էր զբաղեցնում։

Դա արտացոլված է նաև ներքին գործերի նախարար և մեծ վեզիր Թալեաթի գլխավորությամբ Օսմանյան կայսրության մի խումբ ղեկավար գործիչների գաղտնի հանդիպման ժամանակ ընդունված որոշումների գրառման մեջ, որը հայտնի է «Տասը պատվիրաններ» անվամբ (դրա գոյության մասին հանրությունն իմացել է 1919 թ. Կ. Պոլսի հայկական լրագրերից)։ «Տասը պատվիրաններ»-ում հատուկ ընդգծվում է հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու և հայերին պետական գերատեսչություններից ու պաշտոններից հեռացնելու անհրաժեշտությունը⁴⁵։

Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն նշում է, որ ինքը ծանոթ է հայ մտավորականներից շատերի հետ ու հետաքրքրված է նրանց ճակատագրով։ Եվ երբ որ Թալեաթի հետ խոսում է նրանց աքսորի մասին, վերջինս նշում է, թե Կ.Պոլսի հայերը նամակագրություն են հաստատել ռուսների հետ, և ինքը բոլոր հիմքերն ունի կասկածելու, որ նրանք հեղափոխություն են նախապատրաստում կենտրոնական կառավարության դեմ⁴⁶։ Թալեաթը մտավորականների ձերբակալության գործողությունը բնութագրում է լոկ անվտանգության միջոցառում, քանի որ նրանց մեջ գուցե կային վտանգավոր անձինք⁴⁷։

Օսմանյան իշխանությունները փորձում էին հայ մտավորականությանը մեղադրել ապստամբություն հրահրելու համար, սակայն դա իրականում լոկ պատրվակ էր նրանց ձերբակալելու և ոչնչացնելու։ Երիտթուրքներն արդեն ամիսներ առաջ էին նախապատրաստվել հայկական վերնախավի բնաջնջմանը և արդեն փետրվարի վերջին աշխատանքից ազատում էին հայազգի պաշտոնատար անձանց ու ծառայողներին⁴⁸։

Ըստ եկեղեցական և հասարակական գործիչ Գրիգորիս Պալաքյանի՝ 1915 թ. ընթացքում հայկական էլիտան, մասնավորապես քաղաքական վերնախավը, սպաստղական դիրքորոշում էր որդեգրել. ապստամբելու որևէ մտադրություն չունեի և անգամ ընդունակ չէր ըմբռնելու հայ ժողովրդին սպառնացող վերահաս վտանգը։ Հայ

Ottoman Armenians (Oxford: Oxford University Press, 2005), 70.

44 “Lemkin’s Hairenik Weekly Article 50 Years Later: A Powerful Reminder,” Asbarez, December 19, 2008, <https://asbarez.com/lemkins-hairenik-weekly-article-50-years-later-a-powerful-reminder/>.

45 Ռուբեն Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)*, (Երևան, Լուսակն, 2009), 168-171.

46 Henry Morgenthau, *Ambassador Morgenthau’s Story* (Garden City, N.Y.: Doubleday, Page, 1918), 326-327.

47 Ֆրիտյոֆ Նանսեն, *Խարված ժողովուրդ. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակարարի գիտական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան* (Երևան, Գասպրիստ, 2009), 275:

48 Ջոն Կիրակոսյան, *Երիտթուրքերը պարմության դարապարհի առաջ (1915-ից մինչև մեր օրերը)*, գիրք երկրորդ (Երևան, Հայաստան, 1983), 21:

քաղաքական կուսակցությունների վերնախավում նույնիսկ այնպիսի մոտեցումներ կային, որ եթե իրենք օգնեն երիտթուրքական կառավարությանը, ապա նրանք հայերին գոհացնելու նպատակով կիրականացնեն 1913 թ. ծնունդ առած հայաբնակ վեց նահանգների բարենորոգումների ծրագիրը⁴⁹։ Կարճ ասած՝ հայկական վերնախավը բոլորովին պատրաստ չէր հայ ժողովրդի ոչնչացման սցենարին։

Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հրապարակախոս Սապահ-Գյուլյանն ընդգծում է, որ Կ.Պոլսում, ինչպես նաև Օսմանյան կայսրության շատ շրջաններում բազմաթիվ հայ մտավորականներ, այդ թվում՝ ուսուցիչներ ու նույնիսկ հոգևորականներ, «Միություն և առաջադիմություն» (İttihat ve Terakki) երիտթուրքական կուսակցության ջատագույններն էին⁵⁰։

Եվ ուշագրավ է, որ հայ մտավորականության ոչնչացման գործընթացը տեղի էր ունենում հակառակ այն հանգամանքին, որ հայկական վերնախավի որոշ ներկայացուցիչներ ուղղակի երիտթուրքերի մտերիմ ընկերներն էին⁵¹։ Նույնիսկ դեպքեր են հայտնի, որ հայ մտավորականները փրկել են երիտթուրք գործիչների կյանքը։

Թերևս դրանով է պայմանավորված, որ հայ մտավորականները որևէ կերպ չէին պատկերացնում, որ իրենց կարող են ձերբակալել, առավել ևս աքսորել ու սպանել. նրանք դրա մասին գլխի էին ընկնում միայն այն ժամանակ, երբ արդեն մահվան ճանապարհին էին։

Այդպես, երբ որ ոստիկանները գալիս են դաշնակցական նշանավոր գործիչ Ակնունուն ձերբակալելու, նա ապշած հարցնում է ոստիկանապետին, թե Թալեաթից լուր ունի։ Ոստիկանապետը նրան է ներկայացնում ձերբակալման հրամանագիրը Թալեաթի ստորագրությամբ, որին Ակնունին զարմացած պատասխանում է, թե ինքը քիչ առաջ ճաշի է եղել Թալեաթի մոտ. ինչո՞ւ իրեն ոչինչ չի ասել։ Ըստ երևույթին, Ակնունին չէր կարող պատկերացնել, թե Թալեաթն իր նկատմամբ այդքան դավադիր քայլի կգնա, քանի որ ինքը 1909 թ. մարտի 31-ի հակահեղափոխության ժամանակ ապաստան էր տվել նրան՝ վտանգի ենթարկելով սեփական կյանքը⁵²։

Հայտնի է, որ Խալիլ բեյը Գրիգոր Զոհրապի մոտ է ապաստանել այն ժամանակ, երբ երիտթուրքերը հալածանքի էին ենթարկվում Նազիմ փաշայի հեղաշրջման ժամանակ։ Բայց երբ որ 1915 թ. Զոհրապի կինը հուսահատորեն դիմում է Խալիլ բեյին՝ խնդրելով պաշտպանել ամուսնուն, նա կտրականապես հրաժարվում է որևէ օգնություն ցուցաբերելուց⁵³։ Նույնկերպ դաշնակցական զինյալ Ազարիգը թաքստոց է տրամադրում դոկտոր Նազիմին 1909 թ. հակահեղափոխության ժամանակ⁵⁴։ Սա-

49 Պալաքեան, *Հայ Գողգոթան*, 56-58, 72։

50 Ստեփանոս Սապահ-Գյուլեան, *Պալաքեանապրոնները* (Պեյրուք, 1974), 24-25։

51 Յոհաննես Լեփսիուս, *Գերմանիան և Հայաստանը 1914-1918: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու*, հ. 1 (Երևան, Գրական հայրենիք, 2006), 29։

52 Պալաքեան, *Հայ Գողգոթան*, 59։

53 Ալեքսանդր Խատիսեան, *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը* (Պեյրուք, Համազգային, 1968), 67։

54 Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London, New York: I. B. Tauris, 2006), 73.

կայն երիտթուրք գործիչների հետ հայկական էլիտայի ներկայացուցիչների հարաբերությունները որևէ ազդեցություն չեն ունենում հայերին ոչնչացնելու երիտթուրքերի ծրագրերի վրա:

Թալեաթը, հաշվի առնելով, որ երկրի մայրաքաղաքում տարբեր երկրների դիվանագետներ, վաճառականներ ու լրագրողներ են ապրում, կարծում էր, որ մտավորականների ոչնչացումը հատուկ ընթացակարգ է պահանջում, դրա համար էլ նա բավարարվում է Կ.Պոլսում մտավորականների⁵⁵ ձերբակալմամբ և այն հայերի տեղահանմամբ, որոնք երկար ժամանակ չէր, որ բնակվում էին այդտեղ⁵⁶:

Պոլսահայերին ձերբակալելուց և բանտում փակելուց հետո տեղափոխում են ներկալման վայրեր: Մի խումբն ուղարկվում է Չանքըրի (թուրք.՝ Çankiri), իսկ մյուս մասը՝ արքտրվում Այաշ⁵⁷: Չանքըրի ուղարկված մտավորականները ազատ են արձակվում, սակայն պայմանով, որ նրանք մնան հսկողության տակ, իսկ Այաշ ուղարկվածները բանտարկվում են կայազորում⁵⁸: Այաշի արքտրականների մեծ մասին մի քանի ամիս անց սպանում են Անկարայի մոտ գտնվող կիրճերում⁵⁹, իսկ Չանքըրիի մտավորականներին տեղափոխում Անկարայի բանտ, ապա արքտրի ճանապարհին՝ Յոզղաթի⁶⁰ մոտ, սպանում⁶¹:

Պետք է նկատել, որ երիտթուրք ջարդարարները, հաշվի առնելով հայ հոգևորականության դերը հայ ժողովորդի կյանքում ազգային-հոգևոր մշակույթի ձևավորման գործում, հատուկ դաժանություն էին դրսևորում հենց նրանց դեմ, ինչը տվյալ դեպքում որպես մշակույթային ցեղասպանության կամ էթնոցիդի յուրօրինակ դրսևորում է⁶²: Ուստի պատահական չէ, որ 1915 թ. դեկտեմբերի 14-ին Հալեպի դեկավարությանն ուղարկված հեռագրում նշվում է, թե բնաջնջման ենթակա ամենակարևոր խումբը հոգևորականությունն է, և նրանց վերջնական հաստատման լավագույն վայրն այն է, որտեղ նրանց կկոտորեն⁶³:

Ընդհանուր առմամբ շատ քիչ մտավորականների է տարբեր միջամտությունների

55 Կ.Պոլսից տարագրված հայ մտավորականության կենսագրությունները տե՛ս Թեոդիկ, *Յուշարձան նահապտակ մկրտդրականութեան* (Երևան, Նավասարդ, 1990), 20-111:

56 Hans-Lukas Kieser, *Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide* (Princeton: Princeton University Press, 2018), 242.

57 Kévorkian, *The Armenian Genocide*, 253.

58 Zaven Der Yeghiayan, *My Patriarchal Memoirs* (Barrington: Mayreni Publishing, 2002), 63.

59 Պալաքեան, *Հայ Գողգոթան*, 87-95:

60 Շրջան և քաղաք Թուրքիայում՝ Անկարայի մարզում:

61 Raymond Kevorkian, “The Extermination of Ottoman Armenians by the Young Turk Regime (1915-1916),” 3 June 2008, Science Pro, <https://www.sciencespo.fr/mass-violence-war-massacre-resistance/en/document/extermination-ottoman-armenians-young-turk-regime-1915-1916.html>.

62 Սեդա Պարսամյան, «Հայ մտավորականության և հոգևորականության բնաջնջումը որպես մշակույթային ցեղասպանության դրսևորում», *Յեղասպանագիտական հանդես* 4, no. 2 (2016), 57-63: Հոգևորականների դեմ բարբարոսական դրսևորումների մասին տե՛ս Շուշան Խաչատրյան, *Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ* (Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2020), 139-144:

63 Taner Akçam, *Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide* (London: Palgrave Macmillan, 2018), 35-36.

շնորհիվ հաջողվում փրկվել⁶⁴։ Նրանցից ոմանք (Գրիգորիս Պալաքյան, Արամ Անտոնյան, Երվանդ Օտյան, Թեոդոսի և այլք) մտավորականների տեղահանության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ հետազայում հուշեր ու տարբեր ստեղծագործություններ են գրում։

Հայ մտավորականության թիրախավորում տեղի է ունենում նաև Օսմանյան կայսրության՝ հայերով բնակեցված այլ շրջաններում։ Եվ այս առումով հետաքրքրական է, որ դեռևս ապրիլի 24-ի ձերբակալությունից առաջ հայերով խիտ բնակեցված Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգներում, ինչպես նաև Սեբաստիայի (Սվազի) ողջ տարածքում երիտթուրքերը սկսել էին կալանավորել մտավորականության ներկայացուցիչներին՝ սկզբում քաղաքական գործիչներին, ապա՝ ուսուցիչներին, առևտրականներին, փաստաբաններին ու հոգևորականներին։ Իսկ հունիսի սկզբին ձերբակալվել են հայ բժիշկները⁶⁵։ Այսինքն՝ էլիտիցիդը ոչ թե տեղային, այլ համատարած բնույթ ուներ։

Հայ մտավորականության ներկայացուցիչներին (հատկապես քաղաքական և կրոնական առաջնորդներին) ոչնչացնելու նպատակով նույնպես երիտթուրքերը հատուկ նախատեսված գործողություններ էին մշակում։ Օրինակ՝ 1914 թ. օգոստոսին «Հատուկ կազմակերպության» ստորաբաժանումները ձևավորելու համար Էրզրում են մեկնում Բեհաեդդին Շաքիրը և այլ երիտթուրք բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ փորձելով իրականացնել դաշնակցական ղեկավարներին ասպարեզից հեռացնելու ծրագիրը⁶⁶։

Ուշագրավ է, որ հայ մտավորականների թիրախավորման նպատակով երիտթուրքերն օգտվել էին հայ լուսենների ու մատնիչների ծառայություններից։ Կ.Պոլսում թիրախավորման ենթակա հայ մտավորականության հատուկ ցուցակը կազմել էր Վահե Իհսանը (Եսայան), և ոստիկանատանը ստանալով հայ մտավորականների ցուցակները և հասցեները՝ ոստիկաններն իրենց զոհերի տներն էին շտապում։ Ներխուժումներն այնքան հանկարծակի էին լինում, որ զոհերից շատերը չէին հասցնում իրենց հետ վերցնել նույնիսկ ամենաանհրաժեշտ իրերը⁶⁷։

Եվ բոլորովին պատահական չէ, որ հենց Վահե Իհսանն է դառնում վրիժառու Արշավիր Շիրակյանի առաջին թիրախը (Կ.Պոլսում Իհսանին սպանում է 1920 թ. մարտի 27-ին)։ Ըստ Շիրակյանի հուշերի՝ Իհսանը օգնել էր կազմել 1915 թ. ձերբակալված և տեղահանված նշանավոր հայերի ցուցակը և որպես դավաճան արհամարիված էր իր հայրենակիցներից, հարազատներից և անգամ սեփական երեխաներից⁶⁸։

Սակայն, ըստ Գրիգորիս Պալաքյանի, ձերբակալված մտավորականների ցուցակի գլխավոր հեղինակը պեշիկթաշցի գաղտնի ոստիկան Արթին Մկրտչյանն էր, որին

64 Թեոդոսի, «Ամէնուն փարեցոյցը». 1916-1920 (Հալէպ, Կիլիկա հրատարակչութիւն, 2009), 114-116։

65 Գուստ, *Հայերի ցեղասպանությունը*, 16։

66 Taner Akcam, *From Empire to Republic Turkish Nationalism & The Armenian Genocide* (London/New York: Zad Books, 2004), 163-164.

67 Մնացականեան, «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը և ազգային վերածնունդը», 35-37։

68 Arshavir Shiragian, *The Legacy memoirs of an Armenian Patriot* (Boston: Hairenik Press, 1976), 108, <https://hairenik.com/vfp/arshavir-shiragian/>.

նաև Հարուն էին կոչում, իսկ պատիրարքարանի գործակատար Գամեր Շիրինյանը պատրիարքարանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկություն էր փոխանցում Թալեաթին⁶⁹։ Եվ մատնիչ Արթին Մկրտչյանը Վահե Իսսանի պես հայտնվում է հայ վրիժառուների տեսադաշտում (Սողոմոն Թեփիրյանը 1919 թ. մարտի վերջին սպանում է նրան)⁷⁰։

Պալաքյանն ընդգծում է, որ Թալեաթը հայ և թուրք լրտեսների ու դավաճանների բանակ էր գործի դրել, որպեսզի տեղեկանա Կ.Պոլսի հայության կյանքի մանրամասնություններին։ Իսկ մի շարք «ճարպիկներ» էլ, այդ թվում՝ Հմայակ Արամյանցը, ջանում էին Կ.Պոլսի հայոց պատրիարքին համոզել, որ հայերին որևէ վտանգ չի սպառնում⁷¹։ Լրտեսներից էր նաև հավատուրաց Հիտայեթը, որը, Թեոդիկի բնորոշմամբ, «անվերջ չարիքներ գործածե՛լ պոլսաբնակ ազգայնոց, գրպանը պարարտացնելու միակ տեսականով»⁷²։ Հատկանշական է, որ հայ մտավորականությանը թիրախավորելու նպատակով 1914 թ. սկզբներից ոստիկանական վարչությունում հատուկ բաժին էր ստեղծվել, որ լրտեսների ներկայացրած տվյալների հիման վրա պետք է կազմեր մտավորականների քաղաքական անկետան, բնութագիրը⁷³։

Պատահական չէ, որ երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունը բաժանվում է երեք հիմնական փուլերի, որոնցից երկրորդը մտավորականության ոչնչացման գործընթացն է, որի հիմնական նպատակն էր ի չիք դարձնել մոտալուտ կոտորածների ժամանակ ինքնակազմակերպման ու ինքնապաշտպանության հնարավոր որևէ փորձ, ինչպես նաև հայությանը զրկել մշակույթից և գիտակրթական ներուժից։ Իսկ հայ մտավորականության ոչնչացմանը հետևում է ցեղասպանության երրորդ փուլը, որի ընթացքում սիրիական անապատ են տեղահանվում կանայք, երեխաներն ու ծերերը։ Թուրք զինվորները, ոստիկանները, քրդական ավազակախմբերն ու տեղի բնակիչները սպանում են հարյուրհազարավոր մարդկանց։ Շատերը մահանում են սովից, համաճարակային հիվանդություններից։

1915 թ. ապրիլի 24-ին Կ.Պոլսում հայ մտավորականների ձերբակալությունը երբեմն դիտարկվում է «Genocide Watch» կազմակերպության նախագահ Գրեգորի Սթենթոնի առաջ քաշած տասը փուլերի շրջանակում⁷⁴՝ ներառվելով 7-րդ՝ ցեղասպանության նախապատրաստման փուլում⁷⁵։ Եվ այսպիսով, ստացվում է, որ հայկական վերնախավի և մտավորականության հատուկ թիրախավորումը հատուկ տեղ էր զբաղեցնում

69 Պալաքեան, *Հայ Գողգոթան*, 56-57։

70 Գոհար Խանումյան, «Սողոմոն Թեփիրյանը և «Նեմեսիս» գործողությունը։ Հատուկ գործի մասին ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշման 100-ամյակի առթիվ», *Վեմ համահայկական հանդես* 68 no. 4 (2019), 73։

71 Պալաքեան, *Հայ Գողգոթան*, 56-57։

72 Թեոդիկ, «Ամենուն ցարեցոյցը», 180։

73 Ստեփան Պողոսյան, *Հայոց ցեղասպանության պատմություն* (Երևան, Հայաստան, 2009), հատոր 2, 599։

74 Gregory H. Stanton, “The Ten Stages of Genocide,” <http://genocidewatch.net/genocide-2/8-stages-of-genocide/> ղիտվել է 01.12.2021։

75 The Genocide Education Project, “Ten Stages of Genocide,” 9, https://genocideducation.org/wp-content/uploads/2016/03/ten_stages_of_genocide.pdf, ղիտվել է 01.12.2021։

կայսրության տարածքում բնակվող հայ ժողովրդին ցեղասպանության ենթարկելու և նրանց հայրենիքին տիրանալու Օսմանյան իշխանությունների ծրագրերում: Դրանով է պայմանավորված, որ Օսմանյան կայսրությունում հայ մտավորականների տեղահանություններն ու սպանություններն առանձնակի նշանակություն են ձեռք բերել Հայոց ցեղասպանության հիշողության համատեքստում: Այդ իսկ պատճառով 1915 թ. Կ.Պոլսում հայ մտավորականների ձերբակալության օրը՝ ապրիլի 24-ը, համարվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Մտավորականների տեղահանության օրը երբեմն անվանում են նաև «Կարմիր կիրակի»:

Ուշագրավ է, որ արդեն 1919 թ. մարտին Հայոց ցեղասպանությունը վերապրած արևմտահայ մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ Կ.Պոլսում Մեծ եղեռնի զոհերի չորրորդ տարեկիցի կապակցությամբ հիշատակի միջոցառումների կազմակերպման նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով: Հանձնախմբի որոշմամբ՝ ոգեկոչման միջոցառումները պետք է իրականացվեն ապրիլի 24-ին, սակայն, հավանաբար հայոց պատրիարքի վատառողջության պատճառով, այն մեկ օրով հետաձգվում է: Եվ 1919 թ. ապրիլի 25-ին Կ.Պոլսի Բերա թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցում տեղի է ունենում Հայոց ցեղասպանության զոհերի հոգեհանգստի պատարագ⁷⁶: Արևմտահայ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Հակոբ Սիրունին այս մասին իր հուշերում գրել է. «Մեր սարքած սգատօսը այլևս աւանդական դարձաւ: Այն օրէն որդեգրուեցաւ Ապրիլ 24-ը իբր համազգային սուգի խորհրդանշան»⁷⁷:

Այդպես Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրն առաջին անգամ նշվում է Կ.Պոլսում 1919 թ.՝ դեպքերի չորրորդ տարեկիցին: Դրանից սկսած՝ հայերն ամբողջ աշխարհում նշում են այդ օրը: Սակայն հարկ է նկատել, որ զոհերին նվիրված ոգեկոչումները սգահանդեսների տեսքով միայն 1919-ից չեն սկսվել և դրանից առաջ նույնպես տեղի են ունեցել⁷⁸:

Թուրք ժխտողականներին մեծապես անհանգստացնում է այն փաստը, որ հենց ապրիլի 24-ի իրադարձությունների հետ է կապված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը և նրանք փորձում են նսեմացնել այս օրվա նշանակությունը⁷⁹: Այս համատեքստում հետաքրքրական է, որ Թուրքիայում Գալիպոլիի (Գարդանեղ, Չանաքքալե) մարտերի տարեկիցը, որը նշվում է ամեն տարի մարտի 18-ին⁸⁰, Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցի օրը ստվերելու համար 2015 թ. տեղափոխվում և նշվում է ապրիլի 24-ին⁸¹:

76 «Ոգեկոչման ակունքներում. լրանում է ապրիլ 24-ը որպես սգո և հիշատակի օր նշելու 90-ամյակը», http://www.genocide-museum.am/arm/pr_mrch_31_09.php, դիտվել է 11.11.2021:

77 Նույն տեղում:

78 Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 1)», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no 1 (2018), 105:

79 Yusuf Sarinay, “What Happened on 24 April 1915?” Marmara University, <https://turksandarmenians.marmara.edu.tr/en/what-happened-on-24-april-1915/>, դիտվել է 10.10.2021:

80 “Turkey marks 105th anniversary of Çanakkale Victory,” 18 March 2020, *Daily Sabah*, <https://www.dailysabah.com/turkey/turkey-marks-105th-anniversary-of-canakkale-victory/news>, դիտվել է 10.10.2021:

81 Ibrahim Kalin, “Turks, Armenians and the two memories of April 24,” 23 April 2015, *Al Jazeera*, <https://www.aljazeera.com/opinions/2015/4/23/turks-armenians-and-the-two-memories-of-april-24>, դիտվել է 10.10.2021:

Ապրիլի 24-ը որպես Գալիպոլիի ճակատամարտի հիշատակման օր հռչակելու՝ Թուրքիայի նախագահ Էրդողանի որոշման առիթով բրիտանական «The Independent» պարբերականի հոդվածագիր Ռոբերտ Ֆիսկը հատուկ հոդված է հրապարակում՝ «Գալիպոլիի հարյուրամյակը Հայոց ցեղասպանությունը թաքցնելու ամոթալի փորձ է» խորագրով, որում հեղինակը նկատում է, որ Թուրքիայի նման քայլը նպատակ ունի քող գցել Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունների հիշողության վրա⁸²:

Լեհաստանում նացիստական Գերմանիայի իրագործած էլիտիցիդը

Լեհաստան ներխուժելուց անմիջապես հետո նացիստական Գերմանիայի իրականացրած «Intelligenzaktion» գործողությունը մտավորականության ոչնչացմանն ուղղված արշավ էր, որով թիրախավորվում է լեհ մտավորականությունը (ուսուցիչներ, քահանաներ, բժիշկներ, այլ նշանավոր անձինք):

1939 թ. աշնանից մինչև 1940 թ. գարուն տևած այս գործողության հետևանքով սպանված 100 հազ. մարդկանցից մոտ 61 հազարը լեհ մտավորականներ էին, որոնց նացիստները քաղաքական թիրախ էին ճանաչել 1939 թ. սեպտեմբերի պատերազմից առաջ՝ 1937-1939 թթ. կազմված մեղադրանքի հատուկ գրքի (Sonderfahndungsbuch Polen) հիման վրա⁸³: Այն կազմել էին Գեստապոն (պետական գաղտնի ոստիկանությունը) և «Zentralstelle IIP Polen» (Կենտրոնական միավոր IIP-Լեհաստան) ստորաբաժանումը (նախապատերազմական Լեհաստանում բնակվող գերմանական փոքրամասնության որոշ ներկայացուցիչների օգնությամբ) գերմանական ներխուժումից երկու տարի առաջ: Այն 61 հազ. անունից բաղկացած այբբենական ցուցակ⁸⁴ էր: Լեհաստանի վրա գերմանական ներխուժմանը հետևելու էր նույնականացումը, որից հետո ցուցակագրված լեհերը պետք է անմիջապես գնդակահարվեին: Այն իրականացվում էր լեհ ժողովրդի բնաջնջման գործողությունների շրջանակներում (ծածկագրային անվանումը՝ «Թաննենբերգ գործողություն» (գերմ.՝ Unternehmen Tannenberg)), որն էլ իր հերթին «Օսթ» գլխավոր պլանի մասն էր⁸⁵:

Հատկապես հայտնի է «Intelligenzaktion Pommern» նացիստական գործողությունը, որի նպատակն էր Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին ոչնչացնել լեհ մտավորականությանը Պոմերանյան վոյեվոդությունում և հարակից այլ տարածքներում: Միայն 1939 թ. աշնանն այս գործողության շրջանակում սպանվում է 23 հազ. լեհ⁸⁶:

82 Robert Fisk, "The Gallipoli centenary is a shameful attempt to hide the Armenian Holocaust," 19 January 2015, *Independent*, <https://www.independent.co.uk/voices/comment/the-gallipoli-centenary-is-a-shameful-attempt-to-hide-the-armenian-holocaust-9988227.html>, դիտվել է 10.10.2021:

83 Jan Moor-Jankowski, "Holocaust of Non-Jewish Poles During WWII," Archived 16 May 2016 at the Wayback Machine Polish American Congress, Washington, <https://web.archive.org/web/20160516004415/http://www.pacwashmetrodiv.org/events/holoc04/moor-jankowski.htm>, դիտվել է 11.10.2021:

84 *Sonderfahndungsbuch Polen. Specjalna księga gończa dla Polski*, wstęp i opracowanie Grzegorz Bębnik, (Katowice: Warszawa, 2019).

85 Krystyna Teller, "Intelligenzaktion...", February 6, 2018, <https://www.polishnews.com/intelligenzaktion>.

86 Jan Moor-Jankowski, "Holocaust of Non-Jewish Poles During WWII,"

Մտավորականության թիրախավորումը շարունակվում է նաև «AB-Aktion» (Außerordentliche Befriedungsaktion)⁸⁷ գործողության ընթացքում: «AB-Aktion»-ը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում լեհ մտավորականությանը ոչնչացնելու ծածկագիրն էր, որը մշակել և վերահսկել են օկուպացված լեհական տարածքների գեներալ-նահանգապետ Հանս Ֆրանկը և նրա տեղակալ Արթուր Զեյս-Ինկվարտը: Գործողությունն անցկացնելու որոշումն ընդունվել էր դեռևս 1939 թ. սեպտեմբերին⁸⁸:

1939 թ. «Sonderaktion Krakau» (Հատուկ գործողություն Կրակով) ծածկագրով նացիստները ձեռնամուխ են լինում Կրակովի համալսարանի պրոֆեսորների ոչնչացման գործընթացին: Նույն թվականի նոյեմբերի 6-ին պրոֆեսորադասախոսական կազմին հրավիրում են հանդիպման՝ քննարկելու համալսարանի ճակատագիրը, և ձերբակալում: Ձերբակալված 183 պրոֆեսորներ և ակադեմիական անձնակազմի այլ ներկայացուցիչներ ուղարկվում են Զաքսենհաուզենի և Դախաուի համակենտրոնացման ճամբարներ, որտեղ էլ նրանցից շատերը սպանվում են⁸⁹:

1940 թ. ընթացքում նացիստական ստորաբաժանումները Լեհաստանի խոշոր քաղաքներում ձերբակալում են մոտ 30 հազ. լեհի: Ձերբակալվածները պահվում էին մի շարք բանտերում, որտեղ նրանց դաժան հարցաքննության էին ենթարկում նացիստ պաշտոնյաները: Վարշավայի, Կրակովի, Ռադոմի, Կելցեի, Նովի Սաչի, Տարնոուի, Լյուբլինի և Վինիցի բանտերում որոշ ժամանակ մնալուց հետո ձերբակալվածները տեղափոխվում են նացիստական համակենտրոնացման ճամբարներ, հատկապես Օսվենցիմ, ինչպես նաև Զաքսենհաուզեն և Մաութհաուզեն նորաստեղծ ճամբարներ: Լեհ մտավորականության մոտ 3500 ներկայացուցիչ մահապատժի է ենթարկվում զանգվածային սպանությունների վայրերում՝ Վարշավայի մերձակայքում գտնվող Պալմիրիում, Ֆիրլեշում, Ռադոմին հարակից Վինցենտինովում և Սկարժիսկո-Կամիենսայի մոտ գտնվող Բլիժին անտառում⁹⁰:

Գերմանիայի նախաձեռնած՝ մտավորականների ոչնչացման արշավի վառ օրինակ է նաև 1941 թ. հուլիսին Լվովի լեհ մտավորականության, մասնավորապես Լվովի համալսարանի մոտ 45 գիտնականի և մանկավարժի սպանությունը, որը հայտնի է որպես Լվովի պրոֆեսորների սպանություն⁹¹:

Խնդիրն այն է, որ գերմանացիները հաշվի էին առնում այն հանգամանքը, որ միջ-

<http://www.warsawuprising.com/paper/jankowski1.htm>, դիտվել է 11.10.2021:

87 Թ-արգմ.՝ Արտակարգ խաղաղեցման գործողություն:

88 Сергей Воропаев, Альберт Егиязаров, *Энциклопедия Третьего Рейха* (Москва: Локид-Миф, 1996), 11.

89 Patrice M. Dabrowski, Poland: The First Thousand Years (DeKalb: Northern Illinois University Press), 409; Yagelonian University in Krakow, “80th Anniversary of Nazi Sonderaktion Krakau,” https://en.uj.edu.pl/en_GB/news/-/journal_content/56_INSTANCE_SxA5QO0R5BDs/81541894/143861139, դիտվել է 02.11.2021:

90 Shoah Resource Center, The International School for Holocaust Studies, “AB-Aktion,” https://www.yadvashem.org/odot_pdf/Microsoft%20Word%20-%205710.pdf, դիտվել է 10.10.2021:

91 Zygmunt Albert, “The Murder of Lwów Professors by German Authorities in July 1941,” https://www.lwow.com.pl/Lwow_prof.html, դիտվել է 05.10.2021; Zygmunt Albert, *Każń profesorów lwowskich, lipiec 1941: studia oraz relacje i dokumenty* (Wrocław: Wydawnictwo Uniwersytetu Wrocławskiego, 1989).

պատերազմական ժամանակաշրջանում Լվովը Լեհաստանի մշակութային և գիտական կարևոր կենտրոններից էր: Հատկապես հայտնի էին Լվովի Յան Կազիմիրի համալսարանը⁹² և Լվովի պոլիտեխնիկական համալսարանը: Վարչավայից հետո Լվովը Լեհաստանում երկրորդ խոշոր գիտահետազոտական կենտրոնն էր⁹³:

Լեհ հասարակությանը ինտելեկտուալ կյանքի բոլոր ձևերից զրկելու նպատակով գերմանական քաղաքականությունը ներառում էր նաև լեհական արվեստի, ճարտարապետության և թանգարանային հավաքածուների ոչնչացումը. արվեստի ամենաթանկարժեք գործերն ուղարկվում են Գերմանիա⁹⁴:

Լեհ մտավորականությանը ոչնչացնելով՝ նացիստական Գերմանիան նպատակ ուներ ոչնչացնել բոլոր այն մարդկանց, որոնք կարող էին դիմադրություն կազմակերպել և սպառնալիք դառնալ նացիստական նպատակների իրականացման ճանապարհին, ինչը ենթադրում էր լեհական պետության գերմանացում⁹⁵: Ադոլֆ Հիտլերի դիտարկմամբ՝ լեհ մտավորական վերնախավն իր մեջ կարող էր թաքցնել ապագա լեհական դիմադրության սերմերը⁹⁶: Պատահական չէ, որ 1940 թ. հոկտեմբերի 2-ի ելույթում Հիտլերը հայտարարում էր, որ լեհ մտավորականության բոլոր ներկայացուցիչները պետք է սպանվեն⁹⁷: Ըստ ցեղասպանագետ պրոֆեսոր Քոլին Թաթցի՝ Հիտլերը ձգտում էր քանդել լեհական ազգային պետությունը մտավորականության ցեղասպանության միջոցով՝ չնայած որ դրա հետևանքով բնակչության 90 տոկոսը ողջ էր մնում⁹⁸:

Էլիտիցիդի այլ օրինակներ. Տիրեթ, Կամբոջա

Պատմաբան Ադամ Ջոնսն Էլիտիցիդի օրինակ է համարում Չինաստանի գործադրած ճնշումները 1959 թ. Տիրեթում բարձրացված ապստամբության վրա, որը միտված էր տիրեթական բնակչության առավել կրթված հատվածի և առաջնորդների թիրախավորմանը⁹⁹: Չինական իշխանությունների նախաձեռնած գործողությունների հետևանքով հազարավոր տիրեթցիներ են սպանվում, իսկ տասնյակ հազարավորներն էլ

92 1939 թ. Լվովում խորհրդային իշխանության հաստատումից հետո համալսարանը կոչվել է ուկրաինացի գրող, բանաստեղծ, գիտնական, հրապարակախոս Իվան Ֆրանկոյի անունով:

93 Józef Krętosz “Likwidacja kadry naukowej Lwowa w lipcu 1941 roku,” w *Niezwykła więź Kresów Wschodnich i Zachodnich*, eds. Krystyna Heska-Kwaśniewicz, Alicja Ratuszna & Ewa Żurawska (Katowice: Uniwersytet Śląski 2012), 13.

94 Mateusz Gniazdowski, “Damages Inflicted on Poland by the Germans during the Second World War: An Outline of Research and Estimates,” in *Polish-German Relations and the Effects of the Second World War*, ed. Witold Góralski (Warszawa: Polish institute of international affairs, 2006), 14.

95 Piotr Madajczyk, Grzegorz Motyka, Wanda Jarzabek, Mariusz Zajączkowski, Tomasz Stryjek, Joanna Szymoniczek, *Social Engineering in Central and South-East Europe in the Twentieth Century Reconsidered* (Warszawa: Instytut Studiów Politycznych Polskiej Akademii Nauk, 2017), 97.

96 Gniazdowski, “Damages Inflicted on Poland,” 14.

97 Dabrowski, *Poland*, 409.

98 Colin Tatz, *With Intent to Destroy: Reflecting on Genocide* (London/New York: Verso, 2003), 19.

99 Adam Jones, *Genocide: A Comprehensive Introduction* (London and New York: Routledge, 2017), 356.

ստիպված են լինում փախչել, այդ թվում՝ նաև Դալայ Լաման¹⁰⁰:

Տիրերում վերացվում են տեղի կառավարական և կրթական հաստատությունները¹⁰¹: Տիրության գրեթե բոլոր վանքերն ավերվում են: Ընդհանուր առմամբ, նկատի էր առնվում այն հանգամանքը, որ Տիրերում վանականությունը զանգվածային երևույթ էր: Միայն խոշոր վանական կենտրոններում բնակվում էր մինչև 10 հազար վանական¹⁰²: Եվ տարբեր գնահատականների համաձայն՝ 1950-ականներին վանականները կազմում էին Տիրերում ապրող տղամարդկանց 20-30 տոկոսը¹⁰³: Ըստ Պանչեն Լամայի¹⁰⁴ ներկայացրած տվյալների՝ միայն 110 հազար տիրեթցի վանական մահանում է հալածանքներից, իսկ հարյուրհազարավոր մարդիկ ստիպված են լինում դավանափոխվել (անցնել աշխարհիկ կյանքի)¹⁰⁵:

Հարկ է նկատել, որ մտավորականության ոչնչացումն առանցքային տեղ է զբաղեցրել Կամբոջայում 1975-1979 թթ. իրագործված ցեղասպանության ժամանակ, որի ընթացքում գաղափարախոսությունը կարևոր դեր էր կատարում: Պոլ Պոտը և Կամբոջայի կոմունիստական կուսակցության հոսանքներից Կարմիր կիներները նպատակ ունեին Կամբոջային վերադարձնել Կիմերների կայսրության «առասպելական անցյալը», կանգնեցնել օտարերկրյա օգնության և արևմտյան մշակույթի ազդեցությունը ու վերադարձնել պետությանը ագրարային սոցիալիզմը: Հենց նրանց պատկերացրած գաղափարական շրջանակներում էր տեղավորվում մտավորականության դեմ սկսված արշավը: Եվ այն անձինք, որոնց Կարմիր կիներները դիտարկում էին որպես մտավորականներ, հայտնվում էին ցեղասպանական գործողությունների թիրախում: Այդպես թիրախավորվում են բժիշկները, փաստաբանները, ուսուցիչները, նույնիսկ մարդիկ, որոնք ակնոց էին դնում կամ օտար լեզու գիտեին¹⁰⁶:

Սակայն պարադոքսալ է, որ այսպիսի գործողությունները համակարգում էին հենց Կարմիր կիմերների առաջնորդները, որոնցից շատերը բարձրագույն կրթություն ստացած անձինք էին¹⁰⁷ և այլ կրթված մարդկանց տեսնում էին որպես պետության

100 Nicole Ng, “Tibet uprising 60 years on: The fight continues,” *Deutsche Welle*, 09 March 2009, <https://www.dw.com/en/memories-of-1959-fleeing-from-tibet-with-the-dalai-lama/a-5213673>, դիտվել է 10.10.2021:

101 Maura Moynihan, “Genocide in Tibet,” *The Washington Post*, 25 January 1998, <https://www.washingtonpost.com/archive/opinions/1998/01/25/genocide-in-tibet/27c0891c-57f1-4a7c-b873-a1071d93cbfd/>, դիտվել է 10.10.2021:

102 Melvyn C. Goldstein, *A History of Modern Tibet, Volume 4: In the Eye of the Storm, 1957-1959* (Berkeley: University of California Press, 2019), 3.

103 Melvyn C. Goldstein, “Tibetan Buddhism and Mass Monasticism,” դիտվել է 01.11.2021:

104 Պանչեն Լաման տիրեթական բուդդայականության Գելուգ դպրոցում Դալայ Լամայից հետո երկրորդ լաման է՝ կրոնական ուսուցիչը:

105 Ding Ziling & Jiang Peikun, “Tibetans’ Rights and Chinese Intellectuals’ Responsibility,” in *Tibet Through Dissident Chinese Eyes: Essays on Self-Determination*, eds. Cao Changching and James D. Seymour (New York: M. E. Sharpe, 1998), 31.

106 “Khmer Rouge: Cambodia’s years of brutality,” 16 November 2018, *BBC*, <https://www.bbc.com/news/world-asia-pacific-10684399>, դիտվել է 01.11.2021:

107 Օրինակ՝ Կարմիր կիմերների առաջնորդ Պոլ Պոտը կրթություն էր ստացել Ֆրանսիայում՝ Փա-

պոտենցիալ թշնամի և կոռումպացված դասի անդամներ: Նրանք նաև կարծում էին, որ կրթված մարդիկ Կամբոջան դարձրել են արտասահմանյան երկրների խամաճիկը: Եվ պատահական չէ, որ կրթվածներից, մտավորականներից շատերը հատուկ թիրախավորումից խուսափելու համար ստիպված էին անգրագետ ձևանալ: Նրանք կարող էին գոյատևել՝ միայն իրենց գիտելիքներն ու մասնագիտությունները թաքցնելով: Այնուամենայնիվ, հազարավոր ուսուցիչներ և դասախոսներ չեն կարողանում խուսափել մահից¹⁰⁸:

Մտավորականության ոչնչացման արշավի իրագործման հարցում Կարմիր կիներներն ամենայն հավանականությամբ հաշվի էին առնում նաև այն հանգամանքը, որ հասարակությանը զրկելով մտավոր ներուժից՝ կարող էին ավելի վերահսկելի դարձնել, որպեսզի իրենց վարած կամայական քաղաքականության նկատմամբ դիմադրական գործընթացներ տեղի չունենային: Սակայն հարկ է նկատել, որ Կամբոջայում մտավորականների ոչնչացման գործընթացն այնպիսի ծանր հետևանքներ է ունեցել, որ մինչ օրս երկրի կրթական համակարգում զգացնել է տալիս¹⁰⁹:

Եվ բավական ուշագրավ է այն հանգամանքը, որ մասնագիտական վերնախավի այն քիչ ներկայացուցիչների մեծամասնությունը, որ կարողացել էր ողջ մնալ ցեղասպանության իրագործման ժամանակ, հեռանում է երկրից Պոլ Պոտի կառավարման ավարտից հետո: Օրինակ՝ 1970-ականների սկզբին Կամբոջայում որակավորված 450 բժիշկներից միայն 43-ն է մնում երկրում: 1983 թ. սեպտեմբերի զեկույցում ներկայացված են Պոլ Պոտի իշխանության օրոք սպանվածների հետևյալ թվերը՝ 594 բժիշկ, դեղագործ և ատամնաբույժ, 675 իրավաբան և պրոֆեսոր, 18000 ուսուցիչ, 10550 ուսանող, 191 լրագրող և 1120 արվեստագետ¹¹⁰:

Կարմիր կիներների թիրախավորման տակ են հայտնվում նաև վանականները: Նրանցից 25168-ը սպանվում է: Եթե մինչ Պոլ Պոտի կառավարումը կար մոտ 50000 վանական, ապա կառավարման ավարտից հետո միայն 800-1000-ն է Կամբոջայում գտնվող տաճարներ վերադառնում, թեև մյուսները դեռևս Թաիլանդի փախստականների ճամբարներում էին¹¹¹:

Կարմիր կիներների իրականացրած մտավորականների ոչնչացումը և նրանց թիրախավորումը մեծապես կապված է հակամտավորականության (antintellectualism) փիլիսոփայական վարդապետության հետ, որը բանականությանը ստորադաս տեղ է հատկացնում կամ ժխտում իրերի իրական բնույթը հասկանալու ունակությունը¹¹²: Այլ

րիզի համալսարանում՝ մասնագիտանալով ռադիոէլեկտրոնիկայի ոլորտում:

108 *A History of Democratic Kampuchea (1975-1979)* (Documentation Center of Cambodia (DC-Cam): Phnom Penh, 2007), 44.

109 Annie Dale, "The Violence of Cambodia's Past Threatens Educational Dreams Today," 27 June 2013, <https://berkleycenter.georgetown.edu/posts/the-violence-of-cambodia-s-past-threatens-educational-dreams-today>, դիտվել է 10.11.2021:

110 Tom Fawthrop, Helen Jarvis, *Getting Away with Genocide?: Elusive Justice and the Khmer Rouge Tribunal* (London/Ann Arbor, MI: Pluto Press, 2004), 15-16.

111 Նույն տեղում:

112 Hugh Holman, *A Handbook to Literature* (Indianapolis: ITT Bobbs-Merrill, 1985), 27.

կերպ ասած՝ այդպիսի գաղափարական մոտեցմամբ՝ անվստահություն և թշնամանք է սերմանվում մտավորականության և մտավոր աշխատանքի նկատմամբ:

Բուրունդիում տեղի ունեցած էլիտիցիդը

1972 թ. Բուրունդիում իրականացված զանգվածային սպանությունները, որոնք «Ikiza»¹¹³ անվանումն են ստացել, հաճախ բնութագրվում են որպես Աֆրիկայի Մեծ լճերի շրջանում տեղի ունեցած առաջին ցեղասպանությունը:

1966 թ. Բուրունդիում միապետությունը վերանում է, և դրա փոխարեն ստեղծվում է Բուրունդիի Հանրապետությունը: Թուրսի կառավարության ձևավորմամբ այս էթնիկ խմբի ներկայացուցիչները սկսում են գերիշխող դերակատարություն ունենալ բանակում և կառավարությունում, իսկ հույությունների մասնակցությունը պետական ինստիտուտներում երկրորդական պլան է մղվում: Օրինակ՝ 1967 թ. ինը նահանգապետներից միայն մեկն էր հույժ¹¹⁴: Հույությունների դուրս մղումը պետական հաստատություններից դառնում է 1972 թ. Բուրունդիում տեղի ունեցած զանգվածային սպանությունների հիմնական պատճառներից մեկը:

Դժգոհություններն ավելի են խորանում այն ժամանակ, երբ որ 1965 թ. օրենսդիր մարմնի ընտրություններում հույություններին հաջողվում է լիակատար վերահսկողություն հաստատել խորհրդարանում¹¹⁵: 1972 թ. ապրիլի 27-ին ժանդարմներիայի հույժու անդամներն ապստամբություն են սկսում լճափնյա Ռումոնգ և Նյանզա-Լակ քաղաքներում ու հայտարարում Մարտյագոյի Հանրապետություն ստեղծելու մասին: Ռումոնգում և Նյանզա-Լակում զինապահեստների վերահսկողությունը վերցնելուց հետո ապստամբները սկսում են սպանել իրենց հանդիպած յուրաքանչյուր թուրսի, ինչպես նաև այն հույություններին, որոնք հրաժարվում են միանալ իրենց¹¹⁶:

Մայիսի 30-ին ռազմական դրություն հայտարարելուց հետո նախագահ Միկոմբե-բոն անհապաղ ռազմական օգնություն է խնդրում Զաիրի նախագահ Միբուտուից: Օդանավակայանը պահող Զաիրի դեսանտայինների հետ Բուրունդիի բանակը շարժվում է երկրի շրջաններ¹¹⁷: Միշել Միկոմբեբոյի գլխավորած թուրսիական կառավարությունը ռազմական ուժերն օգտագործում է հույժու ապստամբների դեմ պայքարելու և ցեղասպանություն իրականացնելու համար՝ սպանելով հույժու մեծամասնության թիրախավորված անդամներին:

Հույժու խաղաղ բնակիչների սարսափելի սպանող շարունակվում է մինչև օգոստոս ամիսը, և գրեթե յուրաքանչյուր կրթված հույժու սպանվում կամ արքայություն է: Մի քա-

113 Բանտու լեզվախմբի կիրունդի լեզվից թարգմանվում է՝ աղետ, պատուհաս, արհավիրք:

114 René Lemarchand, "The Burundi Killings of 1972," Online Encyclopedia of Mass Violence, 2008, <http://migs.concordia.ca/documents/The-Burundi-Killings-of-1972Lemarchand.pdf>, դիտվել է 20.10.2021:

115 Israel W. Charny, *Encyclopedia of Genocide*, Vol. 1 (Santa Barbara: ABC-CLIO, 1999), 510.

116 René Lemarchand, "The Burundi Genocide," in *Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts*, eds. Samuel Totten, William S. Parsons, Israel W. Charny (New York, London: Routledge, 2004), 324-325.

117 Նույն տեղում, 325:

նի ամսվա ընթացքում սպանվում է մինչև 150 հազ. մարդ (հիմնականում հույթու), որ կազմում էր բնակչության շուրջ հինգ տոկոսը: Սակայն տվյալներ են շրջանառվում, որ ավելի մեծ թվով զոհեր են գրանցվել՝ 150-300 հազ.¹¹⁸:

Այս իրադարձությունների ժամանակ հատուկ թիրախավորվում է հույթու վերնախավը՝ պայմանավորված նրա ներկայացուցիչների զբաղեցրած հասարակական դիրքով, ունեցած գումարով ու կրթությամբ: Հույթու դպրոցականների ու ուսանողների մի ամբողջ սերունդ ոչնչացվում է¹¹⁹: Այսինքն՝ ոչնչացվում է նաև պոտենցիալ էլիտան:

Եկեղեցին նույնպես հարվածի տակ է հայտնվում: Հունիսի սկզբին «New York Times»-ի լրագրող Մարվին Հոուն, Բուժումբուրայից գեկուցելով, նշել է, որ «ասում են, թե սպանվել են տասներկու հույթու քահանա և հազարավոր բողոքական հովիվներ, դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ»¹²⁰:

Թուրսիների վերահսկողության տակ գտնվող կառավարությունը համարում էր, որ կաթոլիկ եկեղեցին հույթուներին ձեռնադրելու քաղաքականություն է վարում, ուստի կառավարության գործողությունների հետևանքով կաթոլիկ եկեղեցին ևս ճնշումների է ենթարկվում¹²¹:

Դեպքերի ժամանակակից Ռոջերը Վիլյամսը Նյու Յորքում հրապարակվող «World» ամսագրում նշում է. «Մինչ աշխարհն այլ տեղ է նայում, կենտրոնական Աֆրիկայի մի փոքրիկ երկիր «ընտրողական ցեղասպանությամբ» ոչնչացնում է ընդդիմադիր վերնախավին»¹²²:

Եվ քանի որ թուրսիները կանխամտածված արշավ էին սկսել հույթու էլիտային ոչնչացնելու համար, տեղի ունեցած իրադարձությունները որակվում են որպես «ընտրողական ցեղասպանություն» (selective genocide)¹²³:

Բուրունդիական սփյուռքի ներկայացուցիչ Պիտեր Տարատարան Բուրունդիում տեղի ունեցած իրադարձությունները դիտարկում է որպես «ընտրողական ցեղասպանություն» (սպանություններ, որոնց ժամանակ օգտագործվում են հույթու էլիտայի, քահանաների, ուսանողների, գործարարների ցուցակները) և մտավոր ցեղասպանություն¹²⁴: Իսկ պատմաբան Ադամ Ջոնսը կարծում է, որ Բուրունդիի ցեղասպանությունը դասական էլիտիցիդ էր՝ ուղղված կրթված տարրի ոչնչացմանը: Թեև շատ հույթու կանայք

118 Lemarchand, "The Burundi Killings of 1972."

119 Reginald Kay, Burundi since the genocide (Minority Rights Group, 1987), Report No. 20, 13.

120 Marvine Howe, "Slaughter in Burundi: How Ethnic Conflict Erupted," *New York Times*, 11 June 1972, <https://www.nytimes.com/1972/06/11/archives/slaughter-in-burundi-how-ethnic-conflict-erupted-slaughter-in.html>, դիտվել է 23.11.2021:

121 Amy McKenna, ed., *The History of Central and Eastern Africa (Britannica Guide to Africa)* (New York: The Rosen Publishing Group, 2011), 27.

122 Roger Williams, "Slaughter in Burundi," *World*, 21 November, 1972, 20.

123 Rene Lemarchand and David Martin, *Selective Genocide in Burundi* (London: Minority Rights Group, 1974).

124 "Preliminary Conference Program, The Thirteenth Meeting of the International Association of Genocide Scholars 9th – 13th July 2017," The University of Queensland, Brisbane, Australia, <https://law.uq.edu.au/files/25595/IGS2017%20Preliminary%20Program%20-%20Full%20%28170527%29.pdf>, դիտվել է 12.11.2021:

նույնպես սպանվում են, սակայն հիմնական թիրախը (կրթված) հույժու տղամարդիկ էին. այն դասական գենդերցիդ էր նրանց դեմ¹²⁵:

Բանգլադեշում տեղի ունեցած էլիտիցիդը

Մտավորականության ոչնչացումն ուղեկցել է նաև 1971 թ. Բանգլադեշում Պակիստանի իրագործած ցեղասպանությանը: Պակիստանի պետության ձևավորումից հետո Արևելյան Պակիստանի (Բանգլադեշի) բնակչության հանդեպ կենտրոնական կառավարությունը խտրականության էր դնում, որը տեսանելի էր հատկապես լեզվի ու մշակույթի բնագավառում: Բենգալացիների դժգոհությունը վերածվում է բողոքի շարժման, որը ղեկավարում էին մտավորականները: Հենց դրանով էր պայմանավորված մտավորականությանը թիրախավորելու Պակիստանի գործելակերպը:

1971 թ. մարտի 25-ին պակիստանյան բանակը, սկսելով «Լուսարձակ»¹²⁶ գործողությունը, հարձակվում է Դաքքայի համալսարանի վրա այնտեղ գտնվող մտավորականներին ոչնչացնելու նպատակով¹²⁷: Միայն մարտի 25-ին նրանք սպանում են 200-ից ավելի ուսանողի, 10 դասախոսի և 12 աշխատակցի¹²⁸: Մարտի 25-27-ն ընկած ժամանակահատվածում պակիստանցի զինվորականները Դաքքայի համալսարանի դասախոսներից շատերին սպանում են հենց բնակարաններում¹²⁹:

Պակիստանի ռազմաքաղաքական ղեկավարությունն այդպիսով նպատակ ուներ սպանել բոլոր հայտնի մտավորականներին և արհեստավարժ մասնագետներին բանգլադեշիներին գիտական և մասնագիտական ներուժից զրկելու համար:

Դաքքայի համալսարանի վրա հարձակման լուրն արագ տարածվում է Բանգլադեշում՝ ավելի բորբոքելով երկրում առկա հակապակիստանյան տրամադրությունները: «Լուսարձակ» գործողության սկսվելուց հետո՝ արդեն մարտի 26-ին, բենգալական «Ավամի լիգայի»¹³⁰ առաջնորդ Շեյխ Մուհջիբուր Ռահմանը հայտարարում է Բանգլադեշի անկախությունը հռչակելու մասին¹³¹: Դրանից հետո Բանգլադեշում սկսվում է

125 Adam Jones, “The Great Lakes Genocides: Hidden Histories, Hidden Precedents,” in *Hidden Genocides: Power, Knowledge, Memory*, ed. Alexander Laban Hinton, Thomas La Pointe, Douglas Irvin-Erickson (New Brunswick: Rutgers University Press, 2013), 133.

126 Բենգալական ազգայնական շարժումը զսպելու նպատակով Բանգլադեշում Պակիստանի բանակը 1971 թ. մարտին իրականացրած պլանավորված ռազմական գործողության ծածկանունը: Sten Ganguly, *Sumit Conflict Unending: India-Pakistan Tensions Since 1947* (New York: Columbia University Press, 2002), 60:

127 “Telegram 978 From the Consulate General in Dacca to the Department of State, 29 March 1971, 1130Z,” US Department of State, <https://2001-2009.state.gov/documents/organization/48049.pdf>, դիտվել է 23.11.2021:

128 Maloy Dutta, “Pak Army killed 200 students, 10 teachers at DU on March 25,” 25 March 2015, <https://www.observerbd.com/2015/03/25/79918.php>, դիտվել է 23.11.2021:

129 Rafiqul Islam, “Massacre of the Bengali intellectuals in 1971,” *Dhaka Tribune*, December 14, 2019, <https://www.dhakatribune.com/magazine/arts-letters/2019/12/14/massacre-of-the-bengali-intellecuals-in-1971>, դիտվել է 23.11.2021:

130 Ավամի լիգան (այլ կերպ՝ Բանգլադեշի ժողովրդական լիգա) Բանգլադեշի ձախակենտրոն քաղաքական կուսակցություններից է, որը հիմնադրվել է 1949 թ. Արևելյան Պակիստանում:

131 “বিদ্যুৎ দে, “বঙ্গবন্ধুর স্বাধীনতা ঘোষণার টেলিগ্রাফিক বার্তা,” *BDNews24*, 31 March 2017,

դիմադրական պայքարը: Եվ ուշագրավ է, որ դիմադրության առաջնորդները Ավամի լիզայի քաղաքական գործիչներն էին, բենգալացի քաղաքացիական վարչակազմը, ոստիկանությունը, բանակը, ոսանողները և մտավորականները¹³², ինչը մեծապես անհանգստացնում էր Պակիստանի իշխանություններին: Դաքքան դառնում է պակիստանյան բանակի և Բանգլադեշի անկախության համար պայքարող ջոկատների հիմնական ռազմադաշտը:

1971 թ. նոյեմբերին Հնդկաստանը զորքեր է ուղարկում՝ հինդուիստներին և բենգալացիներին ցեղասպանությունից պաշտպանելու: Եվ նույնիսկ պատերազմի վերջին շաբաթվա ընթացքում, երբ արդեն պարզ էր, որ Պակիստանը պարտվել է, և Բանգլադեշում անկախ պետության ստեղծումն անխուսափելի է, պակիստանյան բանակը սկսում է հատուկ ջանքեր գործադրել ավելի շատ բանգլադեշցի մտավորականների և էլիտայի ներկայացուցիչների ոչնչացնելու ուղղությամբ¹³³: Թերևս այսպիսի գործելակերպ որդեգրելու հանգամանքը պայմանավորված էր նաև Բանգլադեշի նկատմամբ պակիստանյան իշխանությունների ատելության մեծ չափաբաժնով: Այդ սպանողը հատկապես ինտենսիվ բնույթ է ստանում 1971 թ. դեկտեմբերի 12-14-ն ընկած ժամանակաշրջանում, երբ մեծ թվով մտավորականների ու մասնագետների դուրս են հանում իրենց տներից և սպանում¹³⁴: Այդ իսկ պատճառով ամեն տարի դեկտեմբերի 14-ը Բանգլադեշում նշվում է որպես նահատակված մտավորականների օր¹³⁵:

Ամերիկացի հետազոտող պրոֆեսոր Ռուդոլֆ Ռումելը 1997 թ. հրատարակած «Դեմոցիդի»¹³⁶ վիճակագրություն. ցեղասպանություններն ու զանգվածային սպանությունները՝ 1900 թ.-ից սկսած» վերնագրով իր աշխատության մեջ ընդգծում է, որ պակիստանյան գեներալիտետը պլանավորել էր սպանել Բանգլադեշի մտավորական,

<https://opinion.bdnews24.com/bangla/archives/46455>, դիտվել է 26.11.2021:

132 Rounaq Jahan, “Genocide in Bangladesh” in *Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts*, eds. Samuel Totten, William Parsons, Israel Charney (New York, London: Routledge, 2004), 300.

133 Philip Hensher, “The war Bangladesh can never forget,” *The Independent*, 19 February 2013, <https://www.independent.co.uk/news/world/asia/war-bangladesh-can-never-forget-8501636.html>, դիտվել է 23.11.2021:

134 Rounaq Jahan, “The Bangladesh Genocide,” in *Teaching about Genocide: Issues, Approaches, and Resources*, ed. Samuel Totten (Greenwich: Information Age Publishing, 2004), 148.

135 “Bangladesh pays solemn tribute to martyred intellectuals of 1971,” *Dhaka Tribune*, 14 December 2020, <https://www.dhakatribune.com/bangladesh/2020/12/14/pm-pays-tributes-to-martyred-intellectuals-2>, դիտվել է՝ 23.11.2021:

136 Ռուդոլֆ Ռումելը կիրառության մեջ է դրել «դեմոցիդ» (democide) եզրույթը, որը կազմված է հունարեն «demos» (հին հուն.՝ δῆμος) բառից, որ նշանակում է ժողովուրդ, և լատիներեն «caedere» բառից, որ նշանակում է սպանել: Դեմոցիդի համար անհրաժեշտ և բավարար պայման է, որ կառավարությունը դիտավորյալ սպանի անգեն մարդու կամ մարդկանց: Սակայն, ի տարբերություն ցեղասպանության հայեցակարգի, այն սահմանափակվում է միայն դիտավորյալ սպանությամբ: Ըստ Ռումելի՝ դեմոցիդը ներառում է կառավարության կազմակերպած ցանկացած սպանություն, այդ թվում՝ ցեղասպանություն, պոլիտիցիդ և զանգվածային սպանություն: Ավելի մանրամասն տե՛ս Rudolph Rummel, “Definition of Democide,” <https://www.hawaii.edu/powerkills/DBG.CHAP2.HTM>, դիտվել է 14.10.2021: Տե՛ս նաև Rudolph Rummel, *Death by Government* (New Brunswick, New Jersey: Transaction Publishers, 1994), 31-43.

մշակութային և քաղաքական էլիտային¹³⁷:

Հատկանշական է, որ Բանգլադեշում մտավորականների խեղման ծրագիրը կազմել էր առնվազն 10 հոգուց բաղկացած մի խումբ: Տարածված կարծիք կա, որ դեկտեմբերի 14-ի սպանությունները կազմակերպել է գեներալ մայոր Ռաո Ֆարման Ալին, որն Արևելյան Պակիստանի նահանգապետի ռազմական խորհրդականն էր: Պատերազմի ավարտից հետո նահանգապետարանում թողած նրա օրագրի էջում հայտնաբերվել է մտավորականների ցուցակ: Նման ցուցակի առկայությունը հաստատել է նաև անձամբ Ֆարման Ալին՝ միաժամանակ հերքելով, թե ցեղասպանություն իրագործելու մտադրություն են ունեցել¹³⁸:

Կուշտիայի համալսարանի պրոֆեսոր Ռաշիդ Ասկարին նշում է, որ որոշ անսկզբունքային մտավորականներ, ինչպես նաև համալսարանականներ, որոնք դեմ էին Բանգլադեշի ազատագրական պայքարին, օգնում էին պակիստանյան բանակին գտնել մտավորականներին¹³⁹: Ենթադրվում է, թե ցուցակը, որը պարունակում էր բենգալացի մտավորականների անունները և հասցեները, կազմվել էր դեռևս 1970 թ. աշնանը: Թիրախավորված մտավորականներից բացի՝ պակիստանյան բանակը սպանում էր նաև նրանց ընտանիքի անդամներին¹⁴⁰:

1971 թ. մարտի 28-ին Դաքքայում ԱՄՆ գլխավոր հյուպատոս Արչեր Բլոուդի «Ընտրողական ցեղասպանություն» (Selective Genocide) վերնագրով զեկույցը ևս մատնանշում է մտավորականների ընտրողական սպանության առաջին դեպքերի մասին¹⁴¹: Մարտի 30-ին Բլոուդը «Սպանություններ համալսարանում» հաղորդման մեջ նշում է. «Նրանք [դասախոսները] կարծում էին, որ ենթակա են վերացման»¹⁴²:

Եվ միայն տարիներ հետո՝ 1993 թ., Բանգլադեշի կառավարությունը որոշում է Դաքքայի Ռայեր Բազար (Rayer Bazaar) վայրում, որտեղ տեղի է ունեցել մտավորականների սպանողը, 1971 թ. Բանգլադեշի ազատագրական պատերազմի ընթացքում զոհված մտավորականներին նվիրված հուշարձան կառուցել¹⁴³, որը նախագծում են ճարտարապետներ Ֆարիդ Ուդդին Ահմեդն ու Ջամի ալ Շաֆին: Կառուցումն ավարտ-

137 Rudolph Rummel, *Statistics of Democide: Genocide and Mass Murder Since 1900* (University of Virginia, and Rutgers University: Transaction Publishers, 1997), 153:

138 Banglapedia - the National Encyclopedia of Bangladesh, "Killing of Intellectuals," https://en.banglapedia.org/index.php/Killing_of_Intellectuals, դիտվել է՝ 12.10.2021:

139 Rashid Askari, "Our martyred intellectuals," 14 December 2005, *The Daily Star*, <http://archive.thedailystar.net/2005/12/14/d51214020321.htm>, դիտվել է՝ 23.11.2021:

140 Jenefer Coates, "Bangladesh - the Struggle for Cultural Independence," *Index on Censorship* 1, no. 1 (1972): 28, <https://doi.org/10.1080/03064227208532144>:

141 U.S. Department of State Archive, Foreign Relations, 1969-1976, vol. E-7, South Asia, 1969-1972 Released by the Office of the Historian, "FM AMConsul Dacc TO SECSTATEWASHDC Immediate 2989," <https://2001-2009.state.gov/r/pa/ho/frus/nixon/e7txt/47241.htm>, դիտվել է՝ 23.11.2021:

142 U.S. Consulate (Dacca) Cable, Killings at University, 30 March 1971, Confidential, 3, <https://nsarchive2.gwu.edu/NSAEBB/NSAEBB79/BEBB4.pdf>, դիտվել է՝ 23.11.2021:

143 Banglapedia - the National Encyclopedia of Bangladesh, "Badhya Bhumi Smriti Soudha," https://en.banglapedia.org/index.php/Badhya_Bhumi_Smriti_Soudha, դիտվել է՝ 14.10.2021:

վում է 1999 թ., իսկ բացումը տեղի է ունենում նույն թվականի դեկտեմբերի 14-ին¹⁴⁴:

Բանգլադեշում իրագործված ցեղասպանությունից արդեն 49 տարի անց՝ 2020 թ. դեկտեմբերին, Բանգլադեշի կառավարությունը հաստատում է պակիստանյան բանակի գործողությունների հետևանքով նահատակված 1222 մտավորականների ցանկը¹⁴⁵:

Բոսնիայում տեղի ունեցած էլիտիցիդը

Մտավորականության ոչնչացման կամ էլիտիցիդի դեպքեր են գրանցվել նաև 1990-ականներին՝ Հարավսլավական պատերազմների ընթացքում: Մասնավորապես՝ 1992 թ. ապրիլին Բոսնիայի սերբական ուժերը էթնիկ գտումների արշավ են սկսում Բոսնիայի արևելյան և արևմտյան մասերում ապրող մահմեդականների դեմ: Իսկ Սերբիայից եկած զինված խմբավորումները հարձակվում են Սերբիայի և Բոսնիայի սահմանի մոտ գտնվող քաղաքների վրա՝ ներառյալ Բիելինա և Զվորնիկ համայնքների: Բոսնիացի այն քաղաքացիական անձինք, որոնք մտավորականներ, մասնագետներ կամ քաղաքական առաջնորդներ էին, թիրախավորվում և սպանվում են¹⁴⁶: Ամերիկացի լրագրող Մարկ Դաները քաղաքների վրա հարձակման՝ սերբերի գործողությունների ծրագրում առանձնացնում է «գլխատումը» (decapitation), որ նախատեսում էր մահապատժի ենթարկել քաղաքի ղեկավարներին ու մտավորականությանը¹⁴⁷: Իսկ մեկ այլ ամերիկացի լրագրող Փիթեր Մասսը, որ պատերազմի ժամանակ մեկնել էր Բալկանյան թերակղզի որպես թղթակից, անդրադառնալով Բոսնիայում տեղի ունեցած դեպքերին, «էլիտիցիդը» սահմանում է որպես համայնքի քաղաքական և տնտեսական ղեկավարության համակարգված սպանություն, որպեսզի համայնքը չկարողանա վերածնվի¹⁴⁸:

Հետաքրքրական է, որ Բոսնիայի արևելքում և արևմուտքում սերբերն այդ տարածքները գրավելուց և իրենց կառավարման հաստատումից հետո են ոչնչացնում բոսնիական ու խորվաթական էլիտային: Բոսնիացի իրավաբան Դենիս Գրացը պնդում է, որ սերբերի գործողությունները ցեղասպանական են, քանի որ բոսնիական համայնքին մտավոր շերտից զրկել են, որպեսզի այն քայքայեն և նրա ինքնությունը ջնջեն¹⁴⁹:

144 Mustafa Zaman, “Mustafa Icons of History,” *The Daily Star*, 12 December 2003, <https://www.thedailystar.net/magazine/2003/12/02/coverstory.htm>, դիտվել է 27.11.2021:

145 “Bangladesh govt approves primary list of 1,222 martyred intellectuals,” *Tribune India*, December 14, 2020, <https://www.tribuneindia.com/news/world/bangladesh-govt-approves-primary-list-of-1-222-martyred-intellectuals-184161>, դիտվել է 27.11.2021:

146 Martin Mennecke, Eric Markusen, “Genocide in Bosnia and Herzegovina,” in *Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts*, eds. Samuel Totten, William S. Parsons, Israel W. Charny (New York, London: Routledge, 2004), 417.

147 Mark Danner, “Endgame in Kosovo,” *The New York Review of Books*, May 6, 1999, p. 8, http://www.mtholyoke.edu/~jwestern/ir317/mark_danner10.htm, դիտվել է 27.11.2021:

148 Peter Maass, *Love Thy Neighbor: A Story of War* (New York: Vintage, 1997), 39.

149 Gratz, “Eliticide and Genocide in B&H.”

* * *

Այսպիսով, էլիտայի թիրախավորումն ու ոչնչացումը կարևոր տեղ է գրավել ցեղասպանական տարրեր արշավների ընթացքում: Այս առումով հետաքրքրական է այն հարցը, թե ինչով է յուրահատուկ էլիտիցիդի ներկայացված դեպքերից յուրաքանչյուրը:

Հայոց ցեղասպանության ժամանակ վերնախավի ոչնչացումը համատարած բնույթ է ունեցել, թեև առավել հայտնի է 1915 թ. ապրիլի 24-ին Կ.Պոլսի հայ մտավորականների ձերբակալությունը և սպանությունը: Այս ցեղասպանության առանձնահատկությունն այն է, որ էլիտիցիդը Օսմանյան կայսրության տարածքում հայերի բնաջնջման անբաժանալի մասն էր կազմում, դրա համար էլ այն դիտարկվում է որպես ցեղասպանության իրագործման առանձին փուլ:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության ընթացքում տեղի ունեցած էլիտիցիդի՝ Լեհաստանում, Տիբեթում, Բուրունդիում, Բանգլադեշում և Բոսնիայում էլիտայի ոչնչացումը ոչ թե թիրախավորված էթնիկ կամ կրոնական խմբի ամբողջական բնաջնջման շրջանակներում էր, այլ տվյալ խմբի ինքնությունը ջնջելու և ըստ այդմ նաև մշակութային ցեղասպանության ենթարկելու ենթատեքստում: Իսկ Կամբոջայի ցեղասպանության ժամանակ մտավորականության ոչնչացումն ավելի շատ տեղավորվում էր հակամտավորականության արշավի համատեքստում. Կամբոջայում մահմեդական չամերը, վիետնամցիները, թաիները և մյուս ազգային փոքրամասնությունները նույնպես թիրախավորվել են¹⁵⁰, սակայն Կարմիր կիներները¹⁵¹ հիմնականում սեփական էթնիկ խմբին պատկանող ժողովրդին էին ցեղասպանության ենթարկում, ինչը դիտարկվում է որպես ինքնացեղասպանություն կամ ներքին ցեղասպանություն (autogenocide)¹⁵²: Ուստի, Կամբոջայում մտավորականների ոչնչացմամբ ոչ թե ինքնության ջնջման խնդիր էր լուծվում, այլ դրանով Կարմիր կիներները փորձում էին կամբոջացիներին ավելի վերահսկելի դարձնել:

Հատկանշական է, որ թիրախավորումից առաջ մտավորականների ցուցակագրման ու նույնականացման երևույթը հենց Հայոց ցեղասպանության իրագործմամբ է սկիզբ առնում: Այս պրակտիկան օգտագործում են նաև նացիստները Լեհաստանում և պակիստանյան բանակը Բանգլադեշում: Եվ եթե երիտթուրքերը Կ.Պոլսի հայ մտավորականների ցուցակը կազմելու համար օգտվել էին հայ լրտեսների ծառայություններից, ապա լեհ մտավորականության ցուցակը կազմելու համար գերմանացիներին օգնել էին նախապատերազմական Լեհաստանում բնակվող գերմանական փոքրամասնության որոշ ներկայացուցիչներ, իսկ պակիստանյան բանակին՝ Բանգլադեշի անկախությանը դեմ արտահայտվող մտավորականներ ու համալսարանականներ:

150 Hurst Hannum, "International Law and Cambodian Genocide: The Sounds of Silence," *Human Rights Quarterly* 11, no. 1 (1989): 86-87.

151 Կարմիր կիներների ներկայացուցիչները գլխավորապես էթնիկ կիներներ էին, իսկ կիներները կազմում են Կամբոջայի բնակչության ճնշող մեծամասնությունը:

152 Totten and Bartrop, *Dictionary of Genocide*, 30

ELITICIDE: THE MAIN EXAMPLES

Narek M. Poghosyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

The issue of the annihilation of the elite and the intelligentsia plays an important role in the context of genocides, massacres, as well as the deprivation and control of the intellectual potential of a given nation or state. There have been cases throughout history, when elites have been deliberately targeted in order to exterminate different racial, ethnic, religious groups or commit cultural genocide. Due to this circumstance the topic received the attention of the author of the term “Genocide” Raphael Lemkin, who considered the destruction of the intelligentsia and the elite from the social, physical and cultural aspects of genocide. However, it is interesting, that the destruction of the intelligentsia and the elite did not receive a specific definition for a long time until the term “eliticide” or “elitocide” was introduced in 1992.

And since the phenomenon of eliticide is comparatively little studied, in this article we tried to present and to analyze its most obvious examples – the destruction of the elite of the Armenian intelligentsia during the Armenian Genocide, the eliticide carried out by Nazi Germany in Poland, as well as cases of eliticide in Tibet, Cambodia, Burundi, Bangladesh, Bosnia.

The extermination of the elite during the Armenian Genocide was widespread, although the most famous is the arrest and murder of Armenian intellectuals in Constantinople on April 24 1915. And the peculiarity of this genocide is that the eliticide was an integral part of the extermination of Armenians on the territory of the Ottoman Empire, therefore it is considered as a separate stage of the genocide.

And unlike the eliticide committed during the Armenian Genocide, the extermination of the elite in Poland, Tibet, Burundi, Bangladesh and Bosnia was not in the context of the complete annihilation of the targeted ethnic or religious group, but in the context of erasing the identity of the group and cultural genocide. And the extermination of the intelligentsia during the Cambodian genocide was more in the context of the anti-intellectual campaign.

Key words: intelligentsia, elite, Raphael Lemkin, mass murders, intellectual potential, Armenian Genocide, Young Turks, Nazi Germany, eliticide, Poland, Tibet, Cambodia, Burundi, Bosnia, Khmer Rouge, the campaign against intellectuals, selective genocide.

ЭЛИТИЦИД: ОСНОВНЫЕ ПРИМЕРЫ

Нарек М. Погосян

Фонд “Музей-Институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Проблема уничтожения элиты и интеллигенции играет важную роль в контексте геноцидов, массовых убийств, а также лишения и контроля интеллектуального потенциала данной нации или государства. И в истории были случаи, когда для уничтожения различных расовых, этнических, религиозных групп или совершения культурного геноцида их элиты были преднамеренно преследованы. Именно этим обстоятельством тема привлекла внимание автора термина “Геноцид” Рафаэля Лемкина, рассматривавшего уничтожение интеллигенции и элиты с социальных, физических и культурных аспектов геноцида. Интересно, однако, что уничтожение интеллигенции и элиты долгое время не получало конкретного определения, пока в 1992 году не был введен термин “элитацид” (eliticide) или “элитотид” (elitocide).

А поскольку феномен элитацида сравнительно мало изучен, в этой статье мы постарались представить и проанализировать наиболее очевидные его примеры – уничтожение элиты армянской интеллигенции во время Геноцида армян, элитацид, осуществленный нацистской Германией в Польше, а также случаи элитацида в Тибете, Камбодже, Бурунди, Бангладеш, Боснии.

Уничтожение элиты во время Геноцида армян было широко распространенным, хотя самым известным из них является арест и убийство армянской интеллигенции 24 апреля 1915 года в Константинополе. И особенность этого геноцида в том, что элитотид был неотъемлемой частью истребления армян на территории Османской империи, поэтому рассматривается как отдельный этап геноцида.

И в отличие от элитацида, совершенного во время Геноцида армян, истребление элиты в Польше, Тибете, Бурунди, Бангладеш и Боснии происходило не в контексте полного уничтожения целевой этнической или религиозной группы, а в контексте стирания идентичности группы и, соответственно, совершения культурного геноцида. А истребление интеллигенции во время геноцида в Камбодже было больше в контексте антиинтеллектуальной кампании.

Ключевые слова: интеллигенция, элита, Рафаэль Лемкин, массовые убийства, интеллектуальный потенциал, Геноцид армян, младотурки, нацистская Германия, элитацид, Польша, Тибет, Камбоджа, Бурунди, Босния, красные кхмеры, кампания против интеллигенции, избирательный геноцид.

REFERENCES

Aghayan E. B., Ar'aqelyan E. B., Avetisyan H. A., Galoyan G. A., Yeremyan S. T., Khachikyan L. S., Hakobyan A. M., Hovanisyan A. G., Nersisyan M. G. (eds.). Հայ ժողովրդի պատմություն [The History of Armenian People]. vol. 2. Yerevan: Publ. of the Academy of Sciences of the ASSR, 1984;

Gust, Wolfgang. Հայերի ցեղասպանությունը, աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը [The Armenian Genocide, the Tragedy of the World's Ancient Christian People]. Yerevan: Hayastan, 2002);

Kirakosyan, John. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը) [The Young Turks Before the Judgment of History (from 1915 to the Present Day)], book two. Yerevan: Hayastan, 1983;

Khanumyan, Gohar. «Սողոմոն Թեհլիրյանը և «Նեմեսիս» գործողությունը: Հատուկ գործի մասին ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշման 100-ամյակի առթիվ» [“Soghomon Tehlirian and the “Nemesis” operation.” On the Special Case on the Occasion of the 100th Anniversary of the Decision of the 9th General Assembly of the ARF”]. *VEM hamahaykakan handes* 68 no. 4 (2019): 67-84;

Khach'atryan, Shushan. Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ [The Role of Religion in the Implementation of the Armenian Genocide]. Etchmiadzin: Mother See Holy Etchmiadzin Publishing House, 2020;

Khatisyan, Aeqsandr, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը [The Origin and Development of the Republic of Armenia]. Beirut: Hamasgayin, 1968;

Leo', Երկերի ժողովածու [A Collection of Writings], vol. 2 Yerevan: “Armenia” publ., 1967;

Palaeqan, Grigoris. Հայ Գողգոթան: դրուագներ հայ մարտիրոսագրություննէն՝ Պետլիսէն դէպի Զօր՝ 1914--1920 [Armenian Golgotha : episodes from the Armenian martyrology from Berlin to Zor, 1914-1920]. Yerevan: Hayastan, 1961;

Lep'sius, Yohannes. Գերմանիան և Հայաստանը 1914-1918: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու [Germany and Armenia 1914-1918: A collection of Diplomatic Documents]. vol. 1. Yeravan: Grakan Hayreniq, 2006.

Marut'yan, Harurt'yun. «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 1)» [The formation, developments, the current state of the Armenian Genocide Memorial Day (part 1)”. *T'seghaspanagitakan handes* 6, no 1 (2018): 105-129;

Mnats'akanyan, Aramayis, «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը և ազգային վերածնունդը», Յուշամատենան Մեծ Եղեռնի [“Medz Yeghern of the Armenian People and National Revival”: Memoir of the Medz Yeghern (1915-1965)]. Beirut: Zartong, 1965.

Nansen, Frityof, Խաբված ժողովուրդ. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի գիտական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան [Deceived People. Scientific trip of the Commonwealth of Nations High Commissioner to Georgia and Armenia]. Yerevan: Gasprint, 2009;

Parsamyan, Seda, Հայ մտավորականության և հոգևորականության բնաջնջումը որպես մշակութային ցեղասպանության դրսևորում» [The annihilation of Armenian intellectuals and clergy as a manifestation of cultural genocide]. *T'seghaspanagitakan handes* 4, no. 2 (2016): 56-64;

Poghosyan, Step'an. Հայոց ցեղասպանության պատմություն [History of the Armenian Genocide]. vol. 2, Yerevan: Hayastan, 2009;

Safrastyan, R'uben. Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.) [Ottoman Empire: The Genesis of the Program of Genocide (1876-1920)]. Yerevan: Lusakn, 2009;

Sapah-Gulean, Step'anos, Պատասխանատուները [The Responsibles]. Beirut, 1974.

T'eodik, «Ամէնուն տարեցոյցը». 1916-1920 [The Annual Calendar of Everything: 1916-1920]. Halep: Cilicia Publishing, 2009;

T'eodik, Յուշարձան նահատակ մտաւորականութեան [Monument to Martyr Intellectuals]. Yerevan: Navasard, 1990;

«Ոգեկոչման ակունքներում. լրանում է ապրիլ 24-ը որպէս սգո և հիշատակի օր նշելու 90-ամյակը» [“In the origins of commemoration: the 90th anniversary of celebrating April 24 as a day of mourning and remembrance is coming to an end”]. http://www.genocide-museum.am/arm/pr_mrch_31_09.php.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Նարեկ Մ. Պողոսյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից, տեխնոլոգիական առաջընթացը և ցեղասպանության իրագործման ռիսկերը, ցեղասպանությունների առանձին օրինակներ (Բանգլադեշ, Կամբոջա, Թիմոր, Անֆալ և այլն), համեմատական ցեղասպանագիտություն, էլիտիցիդ:

Էլ. փոստի հասցե՝ poghosyan.narek@genocide-museum.am

Narek M. Poghosyan, PhD in History, Researcher at the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: the study of the Armenian Genocide by Raphael Lemkin, Technological progress and the risks of committing Genocide, other genocides (Bangladesh, Cambodia, Timor, Anfal campaign, etc.), comparative genocide studies, eliticide.

E-mail: poghosyan.narek@genocide-museum.am

Нарек М. Погосян, канд. ист. наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, технологический прогресс и риски совершения геноцида, отдельные примеры геноцидов (Бангладеш, Камбоджа, Тимор, Анфаль и др.), сравнительное изучение геноцидов, элителицид.

Эл. почта: poghosyan.narek@genocide-museum.am

ԿԻԼԻԿԻԱՆ ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 1919–1920 ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Լիլիթ Հր. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ պարամության ինստիտուտ, Հայաստան

Վաշինգտոնի Ազգային արխիվում պահպանվող և 1931–1947 թթ. ԱՄՆ կառավարության՝ առանձին հատորներով պաշտոնապես հրատարակած Պետական դեպարտամենտի դիվանագիտական փաստաթղթերը ուղագրավ և կարևոր նյութ են պարունակում Կիլիկիայի վերաբերյալ: Դրանք լույս են սփռում 1919–1920 թթ. Փարիզի խաղաղության միջազգային վեհաժողովում Կիլիկիայի քաղաքական կարգավիճակի, սահմանների, նրա նկատմամբ մանդատ սահմանելու, երկրամասից անգլիական զորքը դուրս բերելու և Կիլիկիան ու Սիրիան ֆրանսիական զորքով օկուպացնելու հարցերի վերաբերյալ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ղեկավարների, վեհաժողովում այդ պետությունները ներկայացնող պատվիրակությունների միջև ընթացած բանակցությունների վրա: Հայաստանի առաջին հանրապետության և արևմտահայերի շահերը ներկայացնող հայկական երկու պատվիրակություններն այդ բանակցություններից ակնկալում էին Հայկական հարցի արդարացի լուծում: Հայաստան աշխարհի հյուսիսարևելյան հատվածում հայկական անկախ պետականության վերականգնման, համաշխարհային պատերազմում Քառյակ միության պարտության պայմաններում Հայկական հարցի արդարացի լուծման հրամայականը ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի համար հանգում էր Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծմանը: Սույն հոդվածում ԱՄՆ պետդեպարտամենտի դիվանագիտական փաստաթղթերի քննությամբ լույս է սփռվում հետևյալ խնդիրների վրա. արդյո՞ք իրատեսական էր հայ հասարակական-քաղաքական շրջանակների՝ ապագա Հայաստանի սահմաններում Կիլիկիան ընդգրկված տեսնելու ակնկալիքը և արդյո՞ք Գլխավոր դաշնակից պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի համար առաջնային էին կիլիկիահայերի անվտանգության և երկրամասի ինքնավարության կամ անկախության խնդիրները:

Բանալի բառեր՝ Ադանայի վիլայեթ, Օսմանյան կայսրություն, Փարիզի խաղաղության միջազգային վեհաժողով, Տասի խորհուրդ, Չորսի խորհուրդ, մանդատ, Վուդրո Վիլսոն, Սայքս-Պիկոյի համաձայնագիր, Սևրի պայմանագիր, Հայոց ցեղասպանություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 22.02.2022: Ընդունվել է տպագրության՝ 15.04.2022:

The article was submitted on 22.02.2022 and accepted for publication on 15.04.2022.

Статья поступила 22.02.2022 и была принята к публикации 15.04.2022.

Ինչպես հղել՝ Լիլիթ Հր. Հովհաննիսյան, «Կիլիկիան ԱՄՆ պետական դեպարտամենտի 1919–1920 թթ. դիվանագիտական փաստաթղթերում», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 1 (2022), 40–62:

How to cite: Lilit Hr. Hovhannisyanyan, “Cilicia in the documents of USA State Department in 1919–1920,” *Ts’eghaspanagitakan handes* 10, no. 1 (2022): 40–62.

Как ссылаться: Лилит Гр. Оганисян, “Киликия в документах Государственного департамента США в 1919–1920 гг.,” *Цехаспанагитакан андес* 10, no. 1 (2022): 40–62.

Ներածություն

Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում փոքր ու ճնշված ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանության վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի հայտարարությունները Անտանտի երկրների քաղաքական օրակարգ էին բերել բռնազավթումների սկզբունքից հրաժարվելու և մեծ տերություններից ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու անհրաժեշտությունը¹, որով լուրջ հարված էր հասցվել 1915–1916 թթ. Օսմանյան կայսրության ասիական տիրույթների մասնատման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին: Չնայած դրան, Գլխավոր դաշնակից տերությունների փոխհամաձայնությամբ, պարտված Թուրքիային վերաբերող հարցերի քննարկման հիմքում դրվում է 1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում ստորագրված Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական համաձայնագիրը: Ըստ դրա՝ Տյուրքից մինչև Ալեքսանդրետ ձգվող ծովամերձ շրջանը, Կիլիկիան, Հարավային Հայաստանը գերիշխանության իրավունքով անցնում էին Ֆրանսիային:

Կիլիկիայի հարցի քննարկման ընթացքի վրա անուղղակիորեն ազդող գործոն է դառնում խորհրդայնացած Ռուսաստանի դուրսմղումը աշխարհի հետպատերազմյան կարգավորման գործընթացից, քանի որ դրա հետևանքով Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացման՝ հայ ժողովրդի հույսերը կկապվեին բացառապես Արևմուտքի հետ, իսկ Կիլիկիայի ճակատագիրը՝ թուրքական հարցի ամբողջական լուծման: Ակնհայտ էր սակայն, որ Կիլիկիայի հարցի լուծման գործում վճռորոշ դերակատարում պիտի ունենային աշխարհաքաղաքական ակտորներ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ն: Թեև վերջինս մինչև համաշխարհային պատերազմի ավարտը չեզոքություն էր պահպանում Օսմանյան կայսրության հանդեպ, այնուամենայնիվ հայ ազգային-քաղաքական շրջանակներում գերիշխող էր այն տեսակետը, որ «ԱՄՆ-ը կարող է իր առանձին դիրքի շնորհիվ խոշոր դեր խաղալ թուրքահայկական հարցի վերջնական վճռի խնդրում»² չեզոքացնելով Կիլիկիայի նկատմամբ ֆրանսիական ծրագրերը³:

Կիլիկիան և կիլիկիահայերը հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի իրականացրած արևելյան քաղաքականության վերաբերյալ պաշտոնական առաջարկներում

Դեռևս 1917–1918 թթ. պետքարտուղար Ռ. Լանսինգի նամակագրությունը Մեծ Բրիտանիայում ԱՄՆ դեսպան Ուոլթեր Փեյջի, ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ռուֆուս Ռեդինգի, Եվրոպայում ԱՄՆ կառավարության հատուկ ներկայացուցիչ Էդվարդ Հաուզի, Դաշնակիցների գերագույն ռազմական խորհրդում ԱՄՆ-ի ներկայացուցիչ-

1 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 1, գ. 151, թ. 12-13, 20-21:

2 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 1: Նշենք, որ ԱՄՆ-ն Օսմանյան կայսրությանը պատերազմ չէր հայտարարել. նրանց միջև դիվանագիտական հարաբերությունները խզողը թուրքական կողմն էր: *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1917 Supplement 1, The World War* (Washington, D. C.: US Government Printing Office, 1931), 603:

3 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 17-18:

ների՝ ռազմական գնումների և ֆինանսների գծով՝ Օսկար Քրոսբիի և գեներալ Թաս-քեր Բլիսի, Ֆելիքս Սմիթի, Մեծ Բրիտանիայում ԱՄՆ-ի գործերի հավատարմատար Իրվին Լոլինի հետ վկայում են, որ ԱՄՆ-ի դիվանագիտական շրջանակներում ոչ թե մարդասիրական, այլ աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից էր կարևորվում Օսմանյան կայսրության և Ռուսաստանի սահմաններում ապրող հայերի ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրը։ Ընդ որում՝ ամերիկյան կառավարությունը հետևողականորեն խուսափում էր իրեն կաշկանդել որևէ ֆինանսական և ռազմական պարտավորությամբ՝ դա համարելով Մեծ Բրիտանիայի պարտականությունը կամ էլ բարձրացնելով ԱՄՆ-ի ու Անտանտի դաշնակից տերությունների միասնական որոշումների և գործողությունների հարցը։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը մեկնաբանելիս էլ Պետքարտուղարությունն ընդգծում էր, որ այն հեռու է տարածքային հավակնություններից ու շահադիտական նկատառումներից և առաջնորդվում է միայն մարդասիրական մղումներով⁴։ Ցեղասպանության զոհ դարձած, թուրքերի նոր հարձակումներին և բռնություններին ենթակա, քաղցի ու հիվանդությունների ճիրաններում մի կերպ գոյատևող հայերի բեկորներին ԱՄՆ-ի ցուցաբերած օգնությունը նույնպես քողարկվում էր մարդասիրական մղումներով։ Այս իմաստով արժանահիշատակ է Հայաստանի և Սիրիայի օգնության ամերիկյան բարեգործական կոմիտեի գործունեությունը, որը 1918 թ. վերջերին ԱՄՆ կառավարության գիտությանը ու աջակցությամբ պատրաստվում էր հումանիտար ներխուժում իրականացնել Մերձավոր Արևելք⁵։ Նաև նշենք, որ, հաշտության վերաբերյալ վիստնյան դրոյթների հիման վրա, Օսմանյան կայսրության, Հայաստանի ու Կովկասի ապագա վարչաքաղաքական կառուցվածքի և իրավավիճակի վերաբերյալ ԱՄՆ-ում քննարկվում էին տարբեր նախագծեր։ Այսպես, Ռ. Լանսինգը նախագահին առաջարկում էր Օսմանյան կայսրությունը Եվրոպայից դուրս մղելուց հետո Կ.Պոլիսը դնել միջազգային պրոտեկտորատի՝ հովանավորության տակ, իսկ Հայաստանը և Սիրիան հանձնել որևէ կամ մի քանի երկրի հովանավորությանը։ Իրավացիորեն կանխատեսելով հաշտության բանակցություններում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի փոխհամաձայնեցված հակազդեցությունը ԱՄՆ-ի առաջարկներին՝ պետքարտուղարը հրահանգում էր ամերիկյան դիվանագետներին՝ Վաշինգտոնի կառավարության արտաքին քաղաքականությունը մեկնաբանելիս շեշտել դրա մարդասիրական և անշահախնդիր բնույթը։ Իսկ հանրապետական սենատոր Հենրի Լոջն առաջարկում էր ստեղծել անկախ Հայաստան՝ կազմված «Թուրքահայաստանից» ու «Ռուսահայաստանից», Կիլիկիայից ու իրանական Ադրբեջանի հայաբնակ հյուսիսային մարզերից, որոնց վրա, ամբողջ

4 *Armenia in Documents of the U. S. Department of State, 1917–1920*. Compiled and transl. by Gayane G. Makhmourian. Ed. V. R. Aglyan (Yerevan: Institute of History of NAS of Armenia, 2020), doc. № 39, 35–36:

5 Այս մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, փաստ. № 2, 11–13, փաստ. № 3, 13, փաստ. № 5, 14, փաստ. № 6–7, 14–15, փաստ. № 8, 15–16, փաստ. № 9, 16, փաստ. № 13, 18–19, փաստ. № 18, 22–24, փաստ. № 19, 24, փաստ. № 35, 33, փաստ. № 39, 35–36, տե՛ս նաև Գայանե Մախմուրյան, «Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում», *Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)*, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, խմբ. Արմեն Մարության (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015), 164–169:

Անդրկովկասի հետ միասին, պետք է տարածվեր ԱՄՆ-ի մանդատը⁶։ Այս նախագծերը որոշակիորեն ազդում են Հայաստանի Հանրապետության արևմտամետ արտաքին քաղաքական կողմնորոշման ձևավորման վրա։ Վ. Վիլսոնը կարևորում էր պարտված պետությունների գաղութների և նրանց իշխանությանը ենթակա տարածքների իրավական կարգավիճակի ու վարչաքաղաքական կառավարման տարածքների կառավարումը կազմակերպել հովանավոր պետությունների նշանակման միջոցով այնպես, որ հետագայում բացառվեր ենթահովանավորյալ տարածքների զինագրավման հնարավորությունը, հովանավոր պետությունները նպաստեին իրենց հանձնված տարածքների զարգացմանը՝ հանուն բարեկեցության և առանց նրանց բնական ու մարդկային ռեսուրսները շահագործելու հավակնությունների։ «Այնտեղ, որտեղ ժողովուրդը և տարածքը զարգացած չեն, հարկ է ապահովել նրանց զարգացումը, որպեսզի երբ ժամանակը գա, նրանք իրենց շահերի ընկալմամբ իրավասու լինեն արտահայտելու իրենց ցանկությունները հարաբերությունների վերջնական ձևի վերաբերյալ, որը, միգուցե, կհանգեցնի մանդատակիր տերության հետ միավորվելու՝ այդ ժողովուրդների ձգտմանը»⁷, – նշում էր Վ. Վիլսոնը։

Կիլիկիան Տասի խորհրդի և Ջորջի խորհրդի դիվանագիտական քննարկումներում

1919 թ. հունվարի 29-ին Տասի խորհրդի⁸ նիստին Դեյվիդ Լլոյդ Ջորջի ներկայացրած մանդատակիր պետությունների վերաբերյալ բանաձևի նախագծում առաջարկվում էր ոչ միայն Գերմանիային զրկել գաղութներից, այլև Թուրքիայից ամբողջությամբ անջատել Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան։ Ընդ որում՝ շեշտվում էր, որ պատերազմի ընթացքում թուրքերը սարսափելի կոտորածների էին ենթարկել հայերին և թուրքահպատակ այլ քրիստոնյա ժողովուրդների⁹։ Նախկինում օսմանյան տիրապետությանը ենթակա տարածքներում պիտի սահմանվեր որևէ հզոր պետության մանդատը կամ խնամակալությունը։ Մանդատը պիտի տրվեր բոլոր դաշնակից տերությունների համատեղ որոշմամբ՝ քվեարկությամբ¹⁰։ Միաժամանակ, բարձրաձայնելով Օսմանյան կայսրությունից, Կովկասից և Ռուսաստանի հարավարևելյան մասից բրիտանական զինագրավող զորքի շուտափույթ դուրսբերման իր կարիքների որոշման ու տարածաշրջանում խաղաղություն, անվտանգություն և կայուն զարգացում ապահովելու ծախսատար ու ժամանակատար խնդիրների լուծման հոգսը ԱՄՆ-ին հանձնելու անհրաժեշտության մասին՝ Դ. Լլոյդ Ջորջն առա-

6 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 39, 35-36; Գալուստ Գալոյան, *Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.* (Երևան, «Գիտություն», 1999), 57-59։

7 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 52, 44.

8 Փարիզի հաշտության վեհաժողովի առաջին ղեկավար մարմինը։ Գործել է վեհաժողովի աշխատանքի առաջին մեկնկես ամսվա ընթացքում։ Նրանում ընդգրկված են եղել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի նախարարները։

9 Նույն տեղում, փաստ. № 56, 51-52։

10 Նույն տեղում, փաստ. № 52, 44։

ջարկում էր, որ հենց ԱՄՆ-ն վերցնե՞ր այդ տարածքների մանդատը¹¹: Ընդ որում՝ նա կարևորում էր, որ մանդատակիր պետությունը կամ պետությունները որոշված լինեին նախքան հաշտության պայմանագրի կնքումն Օսմանյան կայսրության հետ¹²: Սա հրաշալի հնարավորություն էր Վ. Վիլսոնի համար, կշռադատված դիվանագիտական քայլերով և առանց վտանգելու բրիտանա-ամերիկյան հարաբերությունները, գրավելու այն դիրքերը, որոնք պատրաստվում էր թողնել Մեծ Բրիտանիան տարածաշրջանում: Հունվարի 30-ին Վ. Վիլսոնը պահանջում է ընդունել մանդատակրի համակարգ Օսմանյան կայսրության բոլոր զավթված տարածքների և գերմանական գաղութների համար¹³: Հաջորդ օրը վեհաժողովի Տասի խորհուրդն ընդունում է բրիտանական պատվիրակության վերոնշյալ բանաձևի նախագիծը¹⁴: Ավելին՝ վեհաժողովում առաջին անգամ պաշտոնապես դրվում է Հայաստանի, Սիրիայի, Միջագետքի, Պաղեստինի և Արաբիայի նկատմամբ ԱՄՆ-ի՝ որպես մանդատակրի պատրաստակամության հարցը: Վ. Վիլսոնը դրան տալիս է դիվանագիտական պատասխան. «Որ չափով չպետք է խուսափեմ հոգսից, որ Միացյալ Նահանգները չստանա որևէ առավելություն այս պատերազմից, նույն չափով էլ չեմ հոգալու, որ նա խուսափի որևէ բեռից կամ պարտքից: Թե՛ն դժվար է գտնել ինչ-որ բան, որ այնքան անցանկալի լինի ընդունվելու Միացյալ Նահանգների ժողովրդի կողմից, որքան ռազմական պատասխանատվությունն է Ասիայում»¹⁵: Նախագահն ակնարկում էր, որ բացառություն կարելի է անել միայն Հայաստանի համար, սակայն հրաժարվում տրամադրել զի-

11 Նույն տեղում, փաստ. № 55, 50-51, № 57, 53-54: 1917 թ. վերջերից Անտանտի և նրան դաշնակից պետությունների «մեծ քաղաքական խաղում» առանցքային էր դարձել տարածքային հարցերը փոխկապվածությամբ լուծելը: Այսպես, Մեծ Բրիտանիան բարձրացնում է 1915-1916 թթ. անգլո-ֆրանսուսական գաղտնի համաձայնագրերը վերանայելու հարցը՝ ակնկալելով ստանալ նախառատ Մոտուլը: Եվ քանի որ դաշնակիցները չէին շտապում հստակ արձագանքել դրան, Դ. Լյուդ Ջորջը հայտարարում է բրիտանական զորքն Օսմանյան կայսրությունից դուրս բերելու և Կովկասն Իտալիային գիջելու Մեծ Բրիտանիայի պատրաստակամության մասին: Միայն Մերձավոր Արևելքում միայնակ մնալու տխուր հեռանկարը ստիպում է Ֆրանսիային համաձայնել Մոսուլի գիջմանը Մեծ Բրիտանիային: Այնուհետև անգլիական դիվանագիտությունը կենտրոնանում է ֆրանսիացիներին Սիրիայից դուրս մղելու խնդրի վրա՝ քաջատեղյակ լինելով Սիրիայի և ողջ Օսմանյան կայսրության տարածքի մանդատը ստանալու ԱՄՆ-ի հավակնություններին: Մեծ Բրիտանիայի համար կարևոր էր նաև, որ Վ. Վիլսոնը վիճարկում էր Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի իրավունքները հարգելու անհրաժեշտությունը՝ միաժամանակ նշելով, որ Միացյալ Նահանգները շահագրգռված է ստանալ այդ տարածքի մանդատը:

12 Նույն տեղում, փաստ. № 58, 57-58, փաստ. № 92, 92-93, փաստ. № 97, 99, փաստ. № 147, 153:

13 Նույն տեղում, փաստ. № 57, 54-55:

14 Նույն տեղում, փաստ. № 58, 56-59:

15 Նույն տեղում, փաստ. № 58, 58-59: Ըստ 1919 թ. հունիսի 22-ին մի խումբ ամերիկյան պետական գործիչների՝ ԱՄՆ նախագահին ուղղված, ապա հունիսի 28-ին պետքարտուղարի օգնական Վիլյամ Ֆիլիփսի միջոցով Փարիզում գործող խաղաղության ամերիկյան պատվիրակությանն ուղարկված համատեղ գրության՝ ամերիկյան հասարակությունը շահագրգռված էր հայ ժողովրդի բարօրությանը և ակնկալում էր Հայաստանի անկախության վերականգնումը՝ որպես պարտադիր և սրբազան պարտք: Այդ նպատակի իրագործման համար առաջարկվում էր, առանց սպասելու հաշտության պայմանագրի կնքմանը, Հայաստան ուղարկել նյութական և ռազմական օգնություն, որպեսզի հայերը կարողանային թուրքերից ազատագրել այն բոլոր հայկական տարածքները, որոնք նշված էին Միացյալ և Անկախ Հայաստանի սահմանների վերաբերյալ Միացյալ Հայաստանի պատվիրակության հուշագրում: Այս մասին տե՛ս նույն տեղում, փաստ. № 132, 139-140:

նագրավող ուժեր՝ շեշտելով, որ ԱՄՆ-ն չի եղել պատերազմի մեջ Թուրքիայի դեմ¹⁶:

Ակտիվորեն քննարկվում էր նաև հայկական անկախ պետության ապագա սահմանների հարցը: Տասի խորհրդի փետրվարի 4-ի նիստում Հունաստանի վարչապետ Էլևտերիոս Կիրիակու Վենիզելոսը, պատասխանելով այդ հարցին, նշում է, որ հայկական պետությունը պետք է ընդգրկի հայկական վեց վիլայեթները ռուսական Հայաստանի, Տրապիզոնի և Ադանայի վիլայեթների հետ միասին: Իսկ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրը, հիմք ընդունելով փաստացի իրավիճակը, փետրվարի 13-ի նիստում շեշտում է, որ Հայաստանի տարածքում մահմեդականների համեմատ փոքրաթիվ լինելու հանգամանքով պայմանավորված, հայերի ինքնորոշումը հավանաբար չի հանգեցնի հայկական փոքրամասնության կյանքի պայմանների բարելավմանը: Դրան ի պատասխան՝ ամերիկացի միսիոներ, դոկտոր Հովարդ Բլիսը նկատում է, որ գաղութային տիրապետությունից ազատագրված յուրաքանչյուր ժողովրդի նկատմամբ հաղթանակած տերությունների մշակած կառավարման մեթոդը պետք է ընտրվի տվյալ ժողովրդի պատմական, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակին և առանձնահատկություններին համապատասխան՝ ապահովելով առավելագույն արդարություն շահագրգիռ ժողովուրդների համար¹⁷:

Մարտի 20-ին հաշտության վեհաժողովի Չորսի խորհրդի¹⁸ նիստում Վ. Վիլսոնն ակնարկում է Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների նկատմամբ միասնական մանդատ սահմանելու նախընտրելիության մասին՝ դա հիմնավորելով 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական զաղտնի համաձայնագրերից Ռուսաստանի հրաժարմամբ, հետևաբար Արևմտյան Հայաստանի մեծ մասի նկատմամբ նրա շահերի ու հետաքրքրությունների իրավական հիմքի վերացմամբ, Արևելյան Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցության կորստով և ամբողջ Հայաստանի բնակչության ցանկությունը հաշվի առնելու, այդ երկրի ու նրա բնակչության տնտեսական, սոցիալական, հասարակական-քաղաքական զարգացման աստիճանին համապատասխան մանդատ սահմանելու անհրաժեշտությամբ¹⁹: Ապա, որպես ուշագրավ լրացում, ԱՄՆ նախագահն ակնարկում է նաև Կիլիկիայի, Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի և Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության բոլոր տարածքների նկատմամբ միասնական մանդատ սահմանելու կարևորության ու նպատակահարմարության մասին՝ մատնանշելով այդ տարածքների զարգացման խնդիրների շաղկապվածությունը, բնակչության զարգացման աստիճանը, ցանկությունները: Վ. Վիլսոնը վճռական էր, որ Հայաս-

16 Նույն տեղում, փաստ. № 57, 54, փաստ. № 58, 57, փաստ. № 92, 93-94:

17 Նույն տեղում, փաստ. № 63, 65-66:

18 1919 թ. մարտին փոխարինել է Տասի խորհրդին: Չորսի խորհուրդը Փարիզի հաշտության վեհաժողովի առավել կարևոր հարցերը քննարկող և դրանց վերաբերյալ իրավական որոշումներ կայացնող ղեկավար մարմին էր, որի կազմում էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները:

19 Նախկին Օսմանյան կայսրության ողջ տարածքի նկատմամբ միասնական մանդատի գաղափարին կողմնակից էին Մ. Բրիստոլը, Հ. Մորգենթաուն, Կ. Դոջը և Կ. Գեյթսը: Ամերիկյան հովանավորության ներքո անկախ Հայաստանի ստեղծման կողմնակիցներ էին Զ. Բարթոնը, Մ. Գրաֆֆամը, Վ. Պիտը, Զ. Ուայթը և Ու. Զ. Սմիթը: Махмуриян Гаянэ, *Армения в политике США 1917–1923 гг.*, ред. А. В. Гамбарян (Ереван: Ин-т истории НАН Армении, 2018), 75:

տանը և Կիլիկիան պետք է ամբողջությամբ անջատվեին Թուրքիայից՝ դարեր ի վեր «հպատակ ժողովուրդների վատ կառավարման, նաև վերջին տարիներին հայերի ու այլ ժողովուրդների սարսափելի կոտորածի պատճառով»²⁰։ Նա շեշտում է, որ Կիլիկիան Հայաստանի մանդատի մեջ ներառելու նպատակը Հայաստանը Միջերկրական ծով դուրս գալու հնարավորությամբ ապահովելն է։ Դա, ըստ Ա. Ահարոնյանի, նշանակում էր, որ Կիլիկիայի միացումը Հայաստանին դիտվում էր որպես վերջինիս մանդատը վերցնելու ամերիկյան նախապայման²¹։ Ըստ Վ. Վիլսոնի՝ եթե Հայաստանի հարավային մասում ու Կիլիկիայում լինեք մի մանդատակիր պետություն, իսկ հյուսիսում՝ մեկ այլ, ապա կառաջանար բախումների մեծ վտանգ, քանի որ «անհանգստություն առաջացնող» բնակչությունը հարավում էր²²։ ԱՄՆ նախագահը նախնառաջ նկատի ուներ Արևմտյան Հայաստանի հարավում և Կիլիկիայում մեծամասնություն կազմող մահմեդականներին, որոնք, օգտվելով տարածաշրջանում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի միջև առկա առևտրատնտեսական հակասություններից, կարող էին ընդդիմանալ մանդատային կառավարմանը։ Հնարավոր է, որ նա նկատի ուներ նաև մահմեդականների սաստկացող բռնաճնշումները քրիստոնյաների, մասնավորապես կիլիկիահայերի նկատմամբ, որոնք, ֆրանսիական կառավարությունից ստանալով Կիլիկիային ինքնավարություն կամ անկախություն տալու խոստում, ծանրակշիռ ներդրում էին ունեցել Առաջին աշխարհամարտի սիրիա-պաղեստինյան ռազմաճակատում ֆրանսիական զորքի հաղթանակն ապահովելու գործում, իսկ պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո վերադառնում էին երկրամաս՝ այն վերականգնելու, շենացնելու, ինքնավարություն կամ անկախություն ստանալու հույսով։ Այդ է վկայում 1919 թ. ապրիլի 6-ին Ա. Ահարոնյանի՝ Փարիզի վեհաժողովի քարտուղարությանն ուղարկած հուշագիրը, որում նշված էր Կիլիկիայում 150 հազ. հայ տարագիրների համախմբման և, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, նրա տնտեսական դրության բարենպաստ լինելու մասին։ Փաստաթղթում նաև նկարագրված էր քաղաքական ծանր դրությունը Կիլիկիայում։ Ըստ հայկական պատվիրակության ղեկավարի՝ Պաղեստինում մարտնչած ֆրանսիական հինգհազարանոց Հայկական լեգեոնի տեղակայումը երկրամասում «վախեցրել էր» թուրքերին։ Նրանք սպառնում էին վրեժխնդիր լինել հայերից²³։

Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն և Դ. Լյոյդ Ջորջը պաշտպանում են Վ. Վիլսոնի տեսակետը, նաև մանդատների հարցը տեղում համապարփակ ուսումնասիրելու նպատակով Մերձավոր Արևելք ու Անդրկովկաս առաքելություն ուղարկելու վերաբերյալ նրա առաջարկը²⁴։ Հայաստանի մանդատի խնդիրը գործնական և շահադիտական տեսանկյունից դիտարկող՝ Օգնության ամերիկյան վարչության ղեկավար Հերբերտ Հովերի պնդմամբ ևս՝ ամերիկյան մանդատը Հայաստանով սահմանափակելը սխալ էր՝ հաշվի առնելով այդ երկրի ավերված ու քայքայված վիճակը,

20 Նույն տեղում, 76:

21 ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 51, թ. 6:

22 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 76, 77-78.

23 Махмуриян, *Армения в политике США 1917–1923 гг.*, 78.

24 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 76, 77-80, № 92, 91-92.

մանավանդ որ Հայաստանը պաշտպանելու և վերականգնելու համար ԱՄՆ-ից պահանջվելու էին 100 մլն ամերիկյան դոլար, ամենաքիչը 50–100 հազ. զինվոր և երկար տարիների ծանր աշխատանք²⁵։ Իսկ Ռ. Լանսինգը միջազգային հարաբերությունների հետպատերազմյան համակարգում զարգացած Հայաստան ունենալու համար առաջարկում էր հանգամանորեն քննարկել նրա սահմանների հարցը, ինչպես նաև նկատի առնել Կիլիկիայում, Կ.Պոլսում և այլ շրջաններում 20 հազ. պատրաստված կամավորականներին, որոնք կարճաժամկետ վերապատրաստմամբ կարող էին համարել ՀՀ զինված ուժերը²⁶։

1919 թ. մայիսի 14-ին Չորսի խորհրդի նիստում ԱՄՆ նախագահին իր պետության անունից և Մենատի պարտադիր համաձայնության պայմանով ընդունում է Կ.Պոլսի, սևծովյան նեղուցների և Հայաստանի մանդատը։

Հայաստանի սահմանները համաձայնեցվելու էին ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական և իտալական պատվիրակությունների միջև և միասնական պայմանավորվածության դեպքում ընդունվելու էին առանց դաշնակից Գերագույն խորհրդին դիմելու։ Թուրքիայի մանդատը բաժանվելու էր Հունաստանի, Իտալիայի և Ֆրանսիայի միջև²⁷։

Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը քննարկվում է նաև Չորսի խորհրդի 1919 թ. մայիսի 17-ի և 21-ի նիստերում²⁸։ Ներկայացնելով բրիտանական պատվիրակության պաշտոնական տեսակետը Անատոլիայի մանդատի վերաբերյալ՝ Դ. Լյոյդ Ջորջը շեշտում է, որ այսուհետև անթույլատրելի է հայերի, հույների և արաբների վրա թուրքերի գերիշխանությունը։ Նա առաջարկում է միայն այն տարածքների կառավարումը թուրքերին թողնել, որտեղ նրանք մեծամասնություն էին կազմում, իսկ Հայաստանի և Կիլիկիայի համար սահմանել միասնական մանդատ՝ այն հանձնելով մեկ կամ մի քանի պետության։ Մեծ Բրիտանիայի վարչապետը շեշտում է, որ բրիտանական պատվիրակության համար նախընտրելի է Կ.Պոլսում և սևծովյան նեղուցներում, Անատոլիայում, Կիլիկիայում և Հայաստանում՝ ներառյալ կովկասյան տարածաշրջանը, ԱՄՆ-ի միասնական մանդատի իրագործումը։ Նա առաջարկում էր, որ Ֆրանսիային հանձնվեր Սիրիայի, իսկ Մեծ Բրիտանիային՝ Միջագետքի և Պաղեստինի ժամանակավոր մանդատը։ Եթե ԱՄՆ-ն Անատոլիայի մանդատը չվերցնե, այդ տարածաշրջանը ենթարկվելու էր թուրքական սուլթանի գերիշխանությանը՝ առանց մանդատակրի։ Բրիտանական պատվիրակության դիրքորոշումը ձևակերպվում է «Թուրքական կայսրությունում կարգավորման ուրվագիծ» խորագրով հուշագրում, որը Դ. Լյոյդ Ջորջը մայիսի 21-ին ներկայացնում է Չորսի խորհրդին²⁹։ Հերբերտ Հովերը դեմ էր նախկին Օսմանյան կայսրության ոչ թուրքական տարածքներից միայն Հայաստանի հանձնմանը ԱՄՆ-ի հովանավորությանը։ Հայաստանի մանդատի հետ կապված ծախսերն ու դժվարությունները հատուցված տեսնելու համար նա ցանկալի

25 Նույն տեղում, փաստ. № 135, 142։

26 Նույն տեղում, փաստ. № 146, 152-153, Махмурия, *Армения в политике США*, 121։

27 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 99-100, 103-104.

28 Նույն տեղում, փաստ. № 105, 107-110, փաստ. № 108, 112-118։

29 Նույն տեղում, փաստ. № 109, 118-119։

էր համարում, որ ԱՄՆ-ին տրվել նաև Միջազգետքի մանդատը, բայց, հաշվի առնելով Մեծ Բրիտանիայի շահերն այդ տարածքում, առաջարկում էր, որ Հայաստանի մանդատը վերցնել Միջազգետքի մանդատը ստացած պետությունը³⁰: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանակներում դեմ չէին ԱՄՆ-ի ազդեցությանը Կիլիկիայի մի մասում, սակայն անընդունելի էին համարում նրա ներկայությունն Անատոլիայում և, որպես դրա հետևանք, Բոսֆորից մինչև Կովկաս ձգվող ընդարձակ տարածքում մեկ պետության միասնական մանդատի հաստատումը: Պատահական չէ, որ 1919 թ. մայիսի 21-ին Կիլիկիայից հրաժարվելու պատրաստակամություն հայտնած Ֆրանսիայի վարչապետը մայիսի 31-ին հայտնում է այնտեղ զորք ուղարկելու մտադրության մասին՝ վկայաբերելով վիլսոնյան «14 կետերից» 12-րդը, որով նախատեսվում էր Կիլիկիայի ինքնավարությունը³¹: Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի դիրքորոշումն աստիճանաբար կոշտանում էր: Ուշագրավ է, որ Վ. Վիլսոնի ծրագրերում սեծովյան նեղուցներին տրվող համեմատաբար փոքր նշանակությունը վկայում էր դրանց գլխավոր մրցակից Կիլիկիայի տրանսպորտային դերի ընդլայնման մասին³²:

Այսպիսով, քննարկվում էր մանդատի երկու տարբերակ: Դրանցից մեկով նախատեսվում էր Անատոլիայի և Կ.Պոլսի մանդատը հանձնել որևէ պետության, իսկ Հայաստանին, Միջազգետքին ու Սիրիային՝ մեկ այլ պետության: Մյուս տարբերակով առաջարկվում էր ԱՄՆ-ին հանձնել կամ Հայաստանի, Միջազգետքի, Սիրիայի ու Կիլիկիայի մանդատը, կամ Արևմտյան Հայաստանին՝ սեծովյան նեղուցներով հանդերձ, և ըստ հնարավորության, Արևելյան Հայաստանին ու ողջ Կովկասին ևս՝ «մինչև Ռուսաստանում կարգուկանոնի հաստատումը»: ԱՄՆ-ն և Անտանտի պետությունները, օգտվելով Կովկասում, Անդրկովկասում, Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցության էական նվազումից, այդ տարածքները՝ Կիլիկիայով հանդերձ, դիտարկում էին որպես մեկ ընդհանուր տարածաշրջան, որտեղ ձգտում էին ունենալ ֆինանսատնտեսական իրավունքներ և արտոնություններ՝ առանց տեղի ժողովուրդների անվտանգությունն ու խաղաղ գոյակցությունն ապահովելու իրական, միևնույն ժամանակ ծախսատար և ժամանակատար պարտավորության:

Կիլիկիայի հարցը Քինգ-Քրեյնի և Զ. Հարբորդի ամերիկյան պատվիրակությունների զեկուցագրերում

Կիլիկիայի հարցում ամերիկյան իշխանությունների դիրքորոշման աստիճանական զարգացումն արտացոլվում էր նաև Թուրքիայում ԱՄՆ լիազորներ Չարլզ Քրեյնի և Հենրի Քինգի՝ 1919 թ. օգոստոսի 28-ին Փարիզի հաշտության վեհաժողովին և Վ. Վիլսոնին ներկայացրած զեկուցագրում³³, ապա Զ. Հարբորդի գլխավորած ռազմա-

30 Նույն տեղում, փաստ. № 135, 141-142:

31 Махмуриян, Армения в политике США, 90, 123.

32 Նույն տեղում, 102:

33 Ձեկուցագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածի բովանդակությունն ամբողջությամբ տե՛ս *Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Vol. XII* (Washington, D. C.: US Government Printing Office, 1947), 802-848; *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 199, 200-217:

կան առաքելության՝ հոկտեմբերի 16-ին պետդեպարտամենտին, այնուհետև Սենատին ներկայացրած զեկուցագրում³⁴, որոնցով ձևավորվում է Կ.Պոլսից և Անատոլիայից մինչև Արևմտյան Հայաստան ու Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի վերաբերյալ նախագահ Վ. Վիլսոնի նախագիծը:

Զ. Քրեյնի ու Հ. Քինգի, այնուհետև Զ. Հարբորդի առաքելությունների նպատակը Արևմտյան Հայաստանին անկախություն տալու և հայկական պետության սահմանների, Կիլիկիան ամերիկյան մանդատի մեջ ընդգրկելու և Կ.Պոլսի, սևծովյան նեղուցների հարցերը միասնական մանդատի տեսանկյունից տեղում ուսումնասիրելն ու դրանց վերաբերյալ գործնական լուծումներ առաջարկելն էր: ԱՄՆ պետդեպարտամենտի փաստաթղթերը վկայում են, որ երկու ամերիկյան առաքելությունների գործունեությունն էլ համընկնում է տարածաշրջանից բրիտանական զորքի դուրսբերման՝ օգոստոսի 15-ին Բաթում նավահանգստում սկսված գործողությանը, որի հետևանքով միջազգային դիվանագիտական շրջանակներում աճել էին մի կողմից անհանգստությունը հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության և հայկական պետականության պահպանման հարցերում, իսկ մյուս կողմից՝ տարակուսանքը, որ անգամ ստեղծված պայմաններում ամերիկյան կառավարությունը հրաժարվում էր զորք հատկացնել՝ հայ ժողովրդին «թուրքերի, վրացիների, թաթարների և պարսիկների համատեղ հարձակման» վտանգից պաշտպանելու նպատակով³⁵: Ըստ պետքարտուղարի տեղակալ Ֆրենք Լայոն Փոլքի և Մեծ Բրիտանիայում ԱՄՆ դեսպան Ջոն Վիլյամ Դեյվիսի՝ վաշինգտոնյան կառավարությունը չէր կարող զորք ուղարկել մի երկիր, որի դեմ ԱՄՆ-ն պատերազմի մեջ չէր գտնվում: Ուստի, Հայաստանին օգնելու միակ տարբերակը, նրա համոզմամբ, այն էր, որ Վ. Վիլսոնը Կոնգրեսում Հայաստանի մանդատի հարցը բարձրաձայներ՝ տարածաշրջանում ամերիկյան առաքելությունների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա³⁶: Ըստ այդմ՝ Հ. Քինգը և Զ. Քրեյնը անսիրաժեշտ էին համարում թուրքական կայսրությունից Արևմտյան Հայաստանի անջատումը և հայկական պետության ստեղծումը՝ դա համարելով հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար օսմանյան պետությանը քաղաքական պատասխանատվության ենթարկելու միջոց: Իրենց զեկուցագրի IV բաժնում, որը վերնագրված էր «Կիլիկիա», նրանք նաև շեշտում էին հայերի ցանկությունը՝ «միավորել Կիլիկիան Հայաստանին՝ ամերիկյան մանդատի ներքո»³⁷: Բայց ելնելով այն իրողությունից, որ 1894–1896, 1908–1909 և 1915–1916 թթ. «սարսափելի կոտորածներից» հետո այդ տարածքում հայերը փոքրամասնություն էին կազմում թուրք և քուրդ վերաբնակիչների համեմատ, անհնար էր համարվում ծովից ծով անկախ Հայաստանի ստեղծումը: Դա,

34 ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 6ա, թ. 1-40: *Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Vol. II* (Washington, D. C.: US Government Printing Office, 1934), 841-874. Զ. Հարբորդի առաքելության զեկուցագիրը 1919 և 1920 թթ. տպագրվել է Վաշինգտոնում՝ “Report of the American Military Mission to Armenia” վերնագրով: Տե՛ս *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 255, 305-339:

35 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 187-191: *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 173, 177, № 174, 178-179, № 175, 180-182, № 178, 184:

36 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 175, 183, № 179, 185.

37 Նույն տեղում, փաստ. № 199, 200:

ըստ ամերիկյան գործիչների, կնշանակելը հայ փոքրամասնության տիրապետություն այլ ժողովուրդների մեծամասնության նկատմամբ, ինչը կառաջացներ վերջիններիս ընդդիմությունը՝ հայերին դնելով անապահով ու անպաշտպան դրության մեջ: Ըստ նրանց՝ հայերը չունեին անհրաժեշտ ներուժ՝ ապահովելու ընդարձակ անկախ պետության կենսունակությունը³⁸: Հ. Քինգը և Չ. Քրեյնն առաջարկում էին հայկական պետությունը ստեղծել այն տարածքում, որտեղ երաշխավորված լինեի հայերի ազատությունը թուրքերի գերիշխանությունից: Ըստ նրանց՝ այդ նախադրյալն ապահովում էին Հայաստանի Հանրապետությունը և համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսների զինագրաված արևմտահայկական տարածքը՝ ելքով դեպի Սև ծով: Ըստ ամերիկյան առաքելության անդամների՝ այդ տարածքն այնքան մեծ չէր, որ հայերը չկարողանային զինագրավել և պահել, բացի այդ՝ չափավոր սահմաններում Հայաստանն արագ կվերականգնվեր որպես կենսունակ պետություն: Հայերը պետք է կենտրոնանային նշված տարածքում, իսկ մահմեդական բնակչությունն այնտեղից աստիճանաբար դուրս բերվեր: Չափավոր, այսինքն՝ «պատմական Հայաստանի» սահմաններում հայկական պետության ստեղծման դեմ թուրքերն ու քրդերն այլևս չէին կարող բողոքել: Բացի այդ՝ նշված տարածքից թուրքերի ու քրդերի արտագաղթն ավելի հեշտորեն կիրագործվեր, քան շատ ավելի ընդարձակ տարածքից: Չափավոր տարածքում հայերը կարճ ժամանակում կարող էին մեծամասնություն կազմել և հասնել ինքնակառավարման, իսկ երկրի մանդատային կառավարմանը նրանց մասնակցությունը կկրճատեր դրա ժամկետը: Միևնույն ժամանակ, չափավոր տարածքում միատարր հայ բնակչությամբ ազգային պետության ստեղծումով «կվերանար ընդարձակ տարածքով Մեծ Հայաստան ստեղծելու» հայերի հնարավորությունների վտանգը», ինչն անհանգստացնում էր թե՛ մեծ տերությունների, թե՛ Թուրքիայի ղեկավարներին, նաև քիչ կլինեին մանդատակիր պետությունից ակնկալվող ռազմական և ֆինանսական ծախսերը: Մանդատակիր պետության վերահսկողությունը շարունակվելու էր այնքան ժամանակ, մինչև հայերը կազմեին բացարձակ մեծամասնություն Հայաստանի սահմաններում և պատրաստ լինեին ինքնակառավարման ու ինքնապաշտպանության: Հայաստանը պետք է զարգանար որպես բուֆերային պետություն թուրքերով և արաբներով բնակեցված շրջանների միջև³⁹: Հակառակ դեպքում «հայերը կանգնած են չափից շատը վերցնելու և ամեն ինչ կորցնելու իրական վտանգի առջև»⁴⁰, – նշված էր Հ. Քինգի և Չ. Քրեյնի զեկուցագրում: Կիլիկիան, որտեղ հայերը կազմում էին բնակչության հազիվ 25 %-ը, Հայաստանի մանդատի մեջ կարող էր ընդգրկվել միայն այն դեպքում, եթե մեծ տերություններին չհաջողվեր Անատոլիայում հիմնել միատարր և զարգացող պետություն⁴¹: Հ. Քինգի և Չ. Քրեյնի կարծիքով՝ եվրոպացիները զիջումների չէին գնա Կիլիկիայում: Միևնույն ժամանակ նրանք իրատեսական չէին համարում ԱՄՆ-ի հավակնությունները Կիլիկիայի նկատմամբ: Ուստի առաջարկվում էր երկրա-

38 Նույն տեղում, փաստ. № 199, 204-205:

39 Նույն տեղում, փաստ. № 199, 207-209:

40 Նույն տեղում, փաստ. № 199, 209:

41 Գայանե Մախմուրյանի կարծիքով՝ Հ. Քինգի և Չ. Քրեյնի զեկուցագրում արևմտահայերի թիվն արհեստականորեն նվազեցված է: Махмурия, *Армения в политике США*, 90, 135-136:

մասը թողնել թուրքերի տիրապետության տակ, ամերիկյան միասնական մանդատը կենտրոնացնել Հայաստանում, Անատոլիայում և Կ.Պոլսում կամ այդ տարածքներից յուրաքանչյուրի համար սահմանել երեք առանձին մանդատ ու դրանք հանձնել մեկ պետության: Այդպիսով Կիլիկիան կորցնում էր կարևորությունը որպես Փոքր Ասիա ներթափանցելու ուղի. նախապատվությունը տրվում էր Բոսֆորին: Ի վերջո Հ. Քինգը և Չ. Քրեյնը կանգ են առնում հետևյալ տարբերակի վրա՝ սահմանել մեկ ընդհանուր մանդատ ողջ Փոքր Ասիայի համար՝ առանց Միջագետքի և Սիրիայի՝ նրանում ներառելով Հայաստանի և Կ.Պոլսի մանդատները: Այդ երեք մանդատներից ամենաձանրը համարվում էր Հայաստանինը, քանի որ հայկական պետությունը ստեղծվելու էր հիմքից՝ միավորելով տևական ժամանակ երկու տարբեր պետությունների կազմում գոյատևած հայկական տարածքները: Դա հնարավոր էր իրար շաղկապված մի քանի նախադրյալների առկայության դեպքում: Մասնավորապես՝ թուրքերը գործնականորեն պիտի ընդունեին միասնական մանդատի գաղափարը, թուրքական պետությունը պետք է հրաժարվեր Հայաստանի նկատմամբ տարածքային հավակնություններից, նպաստեր հայերի հայրենադարձությանը, հոգար, որ հայերը նյութական հատուցում ստանային 1915–1916 թթ. տեղահանության, բռնագաղթի և զանգվածային կոտորածների հետևանքով ունեցած վնասների համար: Բացի այդ՝ Ռուսաստանն էլ պետք է հրաժարվեր Արևելյան Հայաստանից, իսկ ԱՄՆ-ի դաշնակից պետություններն ըստ ամենայնի աջակցեին նրան: Այս նախադրյալների բացակայության դեպքում ԱՄՆ-ն պետք է հրաժարվեր Փոքր Ասիայի մանդատից⁴²:

Այսպիսով, Հ. Քինգը և Չ. Քրեյնը թերահավատ էին անկախ Հայաստան ստեղծելու գաղափարն իրագործելու հնարավորության հարցում: Ինչ վերաբերում է նրանց առաջարկների իրագործմանը, ապա այդ դեպքում մանդատի ժամկետն ավարտվելուց հետո Փոքր Ասիայում տնտեսական և ռազմաքաղաքական անգերազանցելի առաջատար էր լինելու Թուրքիան, որը բնականաբար օգտագործելու էր բոլոր հնարավորությունները՝ կրկին տիրանալու Հայաստանին:

Հ. Քինգի և Չ. Քրեյնի զեկույցը գալիս է սրելու ԱՄՆ դեմոկրատ նախագահ Վ. Վիլսոնի և հանրապետական մեծամասնություն ունեցող Սենատի լարված փոխհարաբերությունները: Սենատը պահանջում էր, որ նախագահը մանդատների հարցում իր քաղաքականությունը հիմնավորեր ռացիոնալ, պրագմատիկ փաստարկումներով, մինչդեռ Վ. Վիլսոնը նախընտրում էր բարոյական փաստարկներն ու արդարացումները: Սենատում և նրա միջազգային հարաբերությունների կոմիտեում հակված էին պաշտպանելու հայկական անկախության գաղափարը՝ Հայաստանի և Կիլիկիայի մանդատն ընդունելու հեռանկարի փոխարեն: Դրա վկայությունը 1919 թ. սեպտեմբերի 9-ին Սենատ ներկայացված № 106 բանաձևն էր, որը պատրաստել էին սենատոր, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի (ՀԱԱԿ) գործադիր մարմնի անդամ, դեմոկրատ Զ. Շ. Վիլյամսը և միջազգային հարաբերությունների սենատական կոմիտեի նախագահ Հ. Կ. Լոջը⁴³:

42 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 199, 220–221.

43 № 106 բանաձևը նախատեսում էր փաստացի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության, Արևմտյան Հայաստանի վեց նահանգների, Կիլիկիայի, Տրապիզոնի, Պարսկաստանի Ադրբեյ-

Անտանտի տերությունների կառավարություններն էլ, իրենց հերթին, կասկածում էին, թե Վ. Վիլսոնը ձգտում էր հաստատվել միջերկրածովյան ավազանում Ֆրանսիայի փոխարեն: Այդուհանդերձ, Կիլիկիայի ներառումը ԱՄՆ-ի հետաքրքրությունների ոլորտ առաջացնում է Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի անբարյացակամությունը: Պատահական չէ, որ ՀՀ ղեկավարության և Փարիզում գործող հայ պատվիրակների հետ հանդիպումների ընթացքում եվրոպացի դիվանագետները չէին թաքցնում, որ ԱՄՆ-ի ցանկությամբ էր Կիլիկիան ընդգրկվել ապագա ՀՀ քարտեզի մեջ: Խուսափելով հայկական տարածքների մանդատի վերաբերյալ հուսադրող կանխատեսումներ անելուց, բայց և չբացառելով Ֆրանսիայի հրաժարումը Կիլիկիայից, նրանք նաև ձգտում էին պարզել, թե հայերը հնարավոր համարում էին այդ երկրամասի գիշումը մեկ այլ պետության: Միևնույն ժամանակ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան հրաժարվում են մասնակցել Թուրքիայում մանդատների ուսումնասիրության միջազգային հանձնաժողովի աշխատանքներին, որն էլ ձևավորվում ու իր առաքելությունն իրականացնում է որպես զուտ ամերիկյան հանձնաժողով: Փարիզի հաշտության վեհաժողովում ևս Հ. Քինգի և Չ. Քրեյսի առաջարկությունները դիվանագիտական քննարկումների առարկա չեն դառնում: Ամերիկյան առաքելության արդյունքները պատասխան չէին տալիս ԱՄՆ նախագահին հուզող բոլոր հարցերին: Ահա թե ինչու է 1919 թ. սեպտեմբերին Անդրկովկաս և Փոքր Ասիա ուղարկվում ամերիկյան բազմանդամ նոր առաքելություն՝ Վ. Վիլսոնի վստահությունը վայելող գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ՝ Հայաստանի մանդատին առնչվող հարցերը համակողմանիորեն ուսումնասիրելու և Կոնգրեսին համապատասխան գեկուցագիր ներկայացնելու նպատակով, որը որոշիչ պետք է լիներ Միացյալ և Անկախ հայկական պետության ստեղծմանը վերաբերող հարցերում թե՛ ԱՄՆ-ի, թե՛ նրա դաշնակից պետությունների վերջնական դիրքորոշումը ձևավորելու տեսանկյունից⁴⁴: Եվրոպական պետությունները նպատակահարմար չեն համարում ներկայացված լինել նաև այս առաքելության կազմում:

Ջ. Հարբորդի առաքելության գեկուցագիրը, որը հոկտեմբերի 16-ին ներկայացվում է պետդեպարտամենտ, այնուհետև՝ Մենատ, բաղկացած էր հետևյալ չորս բաժիններից.

- ա) հայ ժողովրդի պատմությունն ու ներկա վիճակը,
- բ) քաղաքական իրավիճակը և առաջարկներ այն կարգավորելու ուղղությամբ,
- գ) Թուրքիայի և Անդրկովկասի մանդատի հետ կապված պայմաններն ու խնդիրները,
- դ) թեր և դեմ նկատառումները մանդատը ստանձնելու հարցում⁴⁵:

ջան նահանգի հյուսիսային մասի անկախության ճանաչում և անվտանգության ապահովում ընդհուպ ռազմական ուժի կիրառման միջոցով: Դեկտեմբերի 18-ին լարված քննարկումներից հետո ՀԱԱԿ ղեկավարությունը նրա նախագահի գլխավորությամբ հեռագրում է ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին, որ դատապարտում է նախկին Օսմանյան կայսրության մանդատի գաղափարը՝ այն համարելով շահավետ միայն թուրքերի համար: Կոմիտեականները պնդում էին ՀՀ-ն անհապաղ ճանաչելու և նրան տնտեսական ու ռազմական աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունը: Ընդ որում՝ «Հայաստան» անվան ներքո նկատի էր առնվում Երևանից մինչև Կիլիկիա ընկած տարածքը՝ ներառյալ ծովերը: Махмуриян Гаяне. *Армения в политике США 1917–1923 гг.*, 292–293:

44 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 174, 178–180.

45 Նույն տեղում, փաստ. № 255, 300–332:

Հաշվի առնելով Կ.Պոլսի, Անատոլիայի, Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի հիմնախնդիրների ընդհանրությունը՝ Զ. Հարբերդի առաքելության զեկուցագրում առաջարկվում էր այդ տարածքները դնել մեկ պետության՝ ԱՄՆ-ի երկարաժամկետ հովանավորության ներքո՝ դրանց արդյունավետ վերահսկողությունն ապահովելու նպատակով: Շեշտելով Հայաստանի Հանրապետության ցանկությունը, որ ՀՀ-ի, Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների և Կիլիկիայի համար սահմանվեր որևէ մեծ տերության միասնական մանդատը, զեկուցագրում կարծիք էին հայտնում, որ այդ մանդատը կարող էր տևել երկար տարիներ, մինչև Սահմանադիր ժողովը մշտական կառավարման վերջնական ձև կորոշեր⁴⁶: Առաքելության իրավական հարցերով փորձագետ, գնդապետ Ջասպեր Բրինթոնն այս առիթով առաջարկում էր «Հայաստան» վարչաքաղաքական միավորի սահմաններում ընդգրկել Հայաստանի Հանրապետությունը և միայն Արևմտյան Հայաստանի երեք վիլայեթները՝ Վանը, Բիթլիսը և Էրզրումը (համանուն քաղաքի հարցը ենթակա էր քննարկման – Լ.Հ.)՝ ելքով դեպի Սև ծով: Նրա համոզմամբ՝ այդ շրջանն ընդգրկելու էր ոչ ավելին, քան Արևմտահայաստանի համար հայերի պահանջած տարածքի կեսը, իսկ դա այնքան քիչ էր՝ բավարարելու համար հայերի ազգային պահանջները, որ, ըստ փորձագետի, «քիչ հավանական էր լինելու» այդպիսի Հայաստանի դեմ նրա հարևանների հակազդեցությունը: Ըստ Զ. Բրինթոնի՝ թեև իր առաջարկը Հայկական հարցի լուծման նվազագույն տարբերակ էր, այնուամենայնիվ կարող էր բավարարել հայրենիք վերադառնալու, ազգային օջախ ունենալու հայերի պահանջը: Հայաստանի շրջանի ստեղծումը հավանաբար ընդունելի կլիներ նաև թուրքերի համար, որոնց մեծ մասը, բացառությամբ օսմանյան պետության տարածքային ամբողջականության վերականգնում պահանջող թուրք ազգայնականների, հաշտվել էր Հայաստանի վերջնական կորստի գաղափարի հետ և երջանիկ կլիներ Հայկական հարցից ազատվել թուրքերի համար նվազագույն տարածքային կորստով: Զ. Բրինթոնի համոզմամբ՝ որքան անթույլատրելի էր Հայաստանի ենթարկումը թուրքական կառավարմանը, նույնքան անցանկալի էր նոր ու ընդարձակ սահմաններով անկախ Հայաստանի ստեղծումը և հեռանկարում հնարավոր ռուսաստանյան համադաշնության նրա կլանումը, մանավանդ, որ հայերը կանխատրամադրված են անցնել Ռուսաստանի կողմը⁴⁷:

Զեկուցագրի «Թուրքիայի և Անդրկովկասի մանդատի հետ կապված պայմաններն ու խնդիրները» բաժնում կարևորվում էր մանդատային գոտում ԱՄՆ կառավարության անկաշկանդ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Այդ նպատակով բարձրացվում էր Ռումելիայում, Բոսֆորում, Անատոլիայում և Անդրկովկասում տեղակայված օկուպացիոն զորքերի դուրսբերման հարցը՝ բացառությամբ Ջնյոնիայում գտնվող հինգ հունական դիվիզիաների և սևծովյան բանակի ու Կիլիկիայի անգլիական, ֆրանսիական, իտալական ստորաբաժանումների 50 հազ. զինվորների: Նաև առաջարկվում էր, Կ.Պոլսից բացի, այլ կայանատեղիներ ևս ունենալ ամերիկյան նավերի համար, որոնց թվում նշվում էր Կիլիկիայի Մերսին նավահանգիստը⁴⁸:

46 Նույն տեղում, փաստ. № 255, 311:

47 Նույն տեղում, փաստ. № 250, 289-292:

48 Նույն տեղում, փաստ. № 255, 321, 323:

Ջ. Հարբորդի առաքելության անդամները դեմ էին Օսմանյան կայսրությունից անջատ անկախ հայկական պետության ստեղծմանը այն պատճառով, որ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, որտեղ թուրքերը կոտորել էին ավելի քան մեկ միլիոն հայի, մեծամասնություն էր կազմում մահմեդական բնակչությունը: Ըստ զեկուցագրի՝ Օսմանյան կայսրության նկատմամբ մեկ պետության միասնական մանդատի դեպքում հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, ոչ թե՝ հակառակորդներ, որոնց միջև անխուսափելի կլինեին խանդն ու ատելությունը: Առաքելության եզրակացությունը հետևյալն էր. «Հայկական հարցը չի կարող լուծվել Հայաստանում: Այն չի կարող վերջնականապես լուծվել առանց պատասխանելու երկու հարցի.

Ինչ պետք է անել Թուրքիայի հետ,

Ինչ է պատրաստվում անել Ռուսաստանը»⁴⁹:

Նույն միտքն է արտահայտված նաև հոկտեմբերի 16-ին Ջ. Հարբորդի՝ Ռ. Լանսինգին ուղղված հեռագրում, որի հիմնադրույթները հանգում էին հետևյալին. Հայաստանի և Անդրկովկասի մանդատն առանց Անատոլիայի և Կ.Պոլսի ձեռնտու չէ. նախ՝ սպառվելիք ծախսերն այնքան մեծ են, որ արժեզրկում են մանդատը, այնուհետև՝ գործնականորեն անհնար է այդ տարածքում ապահովել օրինականություն, կարգուկանոն, կյանքի և ունեցվածքի անվտանգություն, ապա նաև շեշտվում էր, որ մանդատակիր պետությունը գործնականորեն զրկված էր լինելու իրական իշխանությունից, քանի դեռ թուրքական պետության վերահսկողության ներքո էր գտնվում Կ.Պոլիսը: Այս պայմաններում Ջ. Հարբորդը խիստ կասկածելի էր համարում Հայաստանի և Անդրկովկասի մանդատի վերջնական հաջողությունը⁵⁰, իսկ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջորջ Նաթանիել Քերզոնը Հայաստանի համար առանձին մանդատ սահմանելու որևէ անհրաժեշտություն չէր տեսնում՝ առաջարկելով այդ պարտականությունը կամ բեռը փոխանցել Ազգերի լիգային⁵¹:

Փաստորեն, ամերիկյան միասնական մանդատի նախագծում նպատակահարմար էր դիտվում Կիլիկիան թուրքերի տիրապետության տակ թողնելը, որի դեպքում անխուսափելի էր լինելու կիլիկիահայերի ցեղասպանության ու երկրամասի հայաթափման մռայլ հեռանկարը: Երևանից մինչև Կիլիկիա ձգվող ընդարձակ տարածքում, որտեղ գլխավորապես ներկա էին Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան՝ իրենց շահերով, որպես ԱՄՆ-ի հուսալի ու ազդեցիկ քաղաքական հենարան դիտարկվում էր թուրք տարրը՝ ամենաստվարը տարածաշրջանում և փորձառուն՝ դեռևս միջնադարից իր պետականության անընդհատության առումով:

Այսպիսով, թեև ամերիկյան միասնական մանդատի գաղափարն ուղղված էր ԱՄՆ-ի ռզգմական և նավթային հետաքրքրությունների բավարարմանն ու քողարկված էր առաջադիմական նպատակով՝ նպաստել տարածաշրջանի բոլոր ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացմանը, նրանց նախապատրաստել

49 *Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Vol. II*, 861.

50 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 255, 314-315.

51 Նույն տեղում, փաստ. № 271, 348: Махмурия, *Армения в политике США*, 362:

անկախության և միմյանց հետ խաղաղ գոյակցության, այնուամենայնիվ նրանում կար թե՛ Հայաստանի անկախության գաղափարի և թե՛ ողջ հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության դեմ ուղղված սպառնալիք. նույնիսկ Կիլիկիան ու Արևմտյան Հայաստանն ամբողջությամբ ամերիկյան միասնական մանդատի սահմաններում ընդգրկելու պարագայում հնարավոր է, որ հետագայում՝ մանդատի ժամկետի ավարտից հետո Թուրքիան ոչ միայն չիրաժարվեր Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից, այլև, օգտվելով Հայաստանի արևմտյան և արևելյան մասերի միացյալ լինելու իրողությունից, իր ազդեցությունը հաստատեր նաև Արևելյան Հայաստանում: Հարցն այն է, որ Կ.Պոլիսը, սևծովյան նեղուցները, ողջ Անատոլիան, Արևմտյան Հայաստանը և Անդրկովկասը մեկ պետության մանդատի մեջ միավորելն ըստ էության նշանակում էր պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, վերացնել Հայաստանն իբրև պատնեշ համաթուրքականության ճանապարհին, ուղղակիորեն նպաստել Թուրքիայի ու Կովկասի մահմեդական և թուրքալեզու ժողովուրդների միջև անմիջական կապի ստեղծմանը, թուրանական պետության ձևավորմանը, պայմաններ ստեղծել, որպեսզի թուրքերը դառնային երկրի գլխավոր տերերը և մանդատի ժամկետի ավարտից հետո շարունակեին հայերի բնաջնջման քաղաքականությունը⁵²: Պատահական չէ, որ, ըստ Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագրի, բազմաթիվ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ պաշտպանում էին Օսմանյան կայսրության ողջ տարածքում մեկ պետության՝ ԱՄՆ-ի մանդատը հաստատելու գաղափարը⁵³: Հետևաբար, հայ ազգային շահերի տեսանկյունից Ջ. Հարբորդի առաքելության նախագիծը ոչ միայն թուրքանպաստ էր, այլև Քինգ-Քրեյնի նախագծի համեմատ ավելի հակահայկական: Ամերիկյան առաքելությունների ուսումնասիրություններում Կիլիկիան կարևորվում էր լոկ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից և այնքանով, որքանով նրա տարածքով հնարավոր կարող էր լինել երկաթուղային և ծովային ուղիներով միմյանց կապել Մերձավոր Արևելքը, Կովկասն ու Եվրոպան: Ընդ որում՝ Կիլիկիան դիտարկվում էր իբրև սևծովյան նեղուցների մրցակից, որ կայուն քաղաքական իրադրության պարագայում նույնիսկ նախընտրելի էր իր ծովեզրի լայնությամբ և բարձր թողունակությամբ:

Կիլիկիայի հարցը ԱՄՆ պետդեպարտամենտի 1920 թ. փաստաթղթերում

Ըստ ամերիկյան պետդեպարտամենտի վավերագրերի՝ 1920 թ. սկիզբը տազնապալի էր կիլիկիահայերի համար թե՛ Կիլիկիայի հարցի դիվանագիտական քննարկումների և թե՛ երկրամասում տեղի ունեցող դեպքերի առումով: Հունվարի 15-ին ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արմեն Գարոն (Փաստրմաճյան) պետքարտուղարին ուղարկած իր գրությամբ հայտնում էր հայերի անհանգստությունը Փարիզի վեհաժողովում Հայկական

52 Այս մասին տե՛ս Լիլիթ Հովհաննիսյան, «Հայաստանը «Կովկասյան տան» թուրքական և Կ. Պոլիս-Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագրերում», *Ժամանակակից քաղաքակրթական գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում*, գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, խմբ.՝ Հակոբ Հակոբյան և ուրիշներ (Երևան, «Նոյյան Տապան», 2004), 110-125:

53 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 255, 315-316.

հարցի շուտափույթ լուծման և ազգային ակնկալիքների իրականացման հնարավորությունների առնչությամբ՝ կապված եվրոպական պետությունների մտադրության հետ՝ շարունակելու վեհաժողովի աշխատանքներն առանց ամերիկացիների հետագա մասնակցության: Հիշատակելով 1915–1916 թթ. գաղտնի համաձայնագրերը, ըստ որոնց՝ Կիլիկիան Դիարբեքիրի, Խարբերդի ու Սեբաստիայի հետ անցել էր ֆրանսիացիներին, դեսպանը նշում էր, որ «անշահախնդիր Ամերիկայի ազդեցիկ միջամտության մեջ» էր հայ ժողովրդի վաստակած իրավունքները պաշտպանելու հեռանկարը: Ա. Գարոն նաև տեղեկացնում էր, որ իր կառավարությունը չի հավակնում Կիլիկիային՝ ԱՄՆ-ին թողնելով երկրամասի իրավական կարգավիճակի և սահմանների վերջնական որոշումը⁵⁴: Սակայն այդ դիրքորոշումն այլևս չէր կարող ունենալ որևէ գործնական նշանակություն, քանի որ ԱՄՆ-ն պատրաստվում էր հեռանալ ակտիվ քաղաքականությունից՝ անցնելով «մեկուսացման»:

Մինչ այդ՝ 1920 թ. հունվարի 19-ին Հինգի խորհրդի⁵⁵ անդամ պետությունները որոշում են փաստացի (դե ֆակտո) ճանաչել Հայաստանի կառավարությունը՝ պայմանով, որ ճանաչումը չէր կանխորոշում հայկական պետության ապագա սահմանների հարցը: Զ. Քերզոնի մեկնաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետությունը նախկին Ռուսական կայսրության մասն է եղել և պատրաստ է Ադրբեջանի և Վրաստանի հետ միանալու հակաբոլշևիկյան պայքարին: Այդ հանգամանքը պետք էր օգտագործել՝ փաստացի ճանաչելով Հայաստանի կառավարությունը: Ըստ Զ. Քերզոնի՝ հետագայում՝ Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիրը ստորագրելիս, Հայաստանի ճանաչման փաստը չէր կարող որևէ պարտավորությամբ կաշկանդել դաշնակից պետություններին՝ վերջնականորեն որոշելու Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև պետական սահմանագիծը⁵⁶: Հայաստանի անկախության ճանաչման հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը ձևակերպվում է 1920 թ. հունվարի 27-ին, երբ պետքարտուղարի պաշտոնակատար Ֆ. Փոլկը Ֆրանսիայում ԱՄՆ դեսպան և Հինգի խորհրդում ամերիկյան պատվիրակության ղեկավար Հյու Քեմպբել Ուոլթսիին հեռագրով հրահանգում է դաշնակից պետությունների Գերագույն խորհրդին հաղորդելու, որ ԱՄՆ-ն համաձայն է վերջինիս որոշմանը Հայաստանի կառավարությունը փաստացի ճանաչելու վերաբերյալ՝ պայմանով, որ դա չէր կանխորոշում հայկական պետության ապագա սահմանների հարցը, և ոչ ավելին: Հեռագրում ընդծվում էր, որ ԱՄՆ-ն չէր պատրաստվում փաստացի ճանաչել Հայաստանը, քանի դեռ վերջնականորեն որոշված չէր նրա պետական սահմանագիծը Թուրքիայի հետ⁵⁷: Նույն օրը համանման հրահանգ են ստանում նաև Կ. Պոլսում ԱՄՆ

54 Махмурия, *Армения в политике США*, 335.

55 Փարիզի հաշտության վեհաժողովի ղեկավար մարմիններից էր՝ բաղկացած ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարներից: Պարտված Գերմանիայի հետ Վերսալի պայմանագրի ստորագրումից հետո զբաղվել է նրան դաշնակից պետությունների հետ հաշտության պայմանագրերի նախապատրաստմամբ:

56 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 291, 375.

57 Նույն տեղում, փաստ. № 295, 380-381:

գերագույն կոմիսար Մարկ Լամբերտ Բրիստոլը և Վ. Հասկելը⁵⁸: Ներկայացված դիվանագիտական փաստաթղթերը վկայում են, որ Հայկական, այդ թվում և Կիլիկիայի հարցի լուծումն այնուամենայնիվ կախման մեջ էր դրվում դաշնակից պետությունների և Թուրքիայի միջև հաշտության պայմանագրի կնքումից: Դա լուրջ հարված էր ՀՀ արտաքին քաղաքականության արևմտամետ ուղղությանը, քանի որ նվազում էին Կիլիկիան ապագա հայկական անկախ պետության սահմաններում ընդգրկելու հայերի հույսերը: Այդ մասին իր մտահոգությունն է արտահայտում Հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պ. Նուբարը՝ 1920 թ. փետրվարի 18-ին նախագահ Վ. Վիլսոնին ուղարկված հուշագրում նշելով, որ փարիզյան Գլխավոր խորհուրդն ըստ էության մտադիր է Կիլիկիան թողնել օսմանյան տիրապետության տակ, քանի որ այդ երկրամասում Ֆրանսիային հետաքրքրում են միայն իր տնտեսական իրավունքներն ու արտոնությունները: Նա նաև ընդգծում էր, որ Կիլիկիայի ամերիկյան մանդատին կարող էր փոխարինել դրան համարժեք ֆրանսիական իշխանությունը՝ երկրամասը Թուրքիայից ամբողջությամբ անջատելով հանդերձ: Փետրվարի 21-ին ԱՄՆ նախագահին համանման գրություն է ուղարկում նաև Ա. Գարոն⁵⁹: ԱՄՆ հասարակական-քաղաքական շրջանակներում ևս ժամանակ առ ժամանակ բարձրաձայնվում էր մտահոգություն Հայաստանի ամենաբարեբեր հատվածը՝ Կիլիկիան, Ֆրանսիային զիջելու առնչությամբ⁶⁰: Ֆրանսիական կառավարությունն էլ, իր հերթին, Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպանի միջոցով ձգտում էր հավաստիացումներ կորզել ԱՄՆ կառավարությունից, թե «արդյոք մտադիր է Միացյալ Նահանգների կառավարությունը հրաժարվել Արևելյան գործերում ունեցած իր հետաքրքրություններից, ... թե՛ ընդհակառակը ... նախատեսում է ... պահանջել ազդեցության, գործողության և պատասխանատվության իր բաժինը խաղաղության վերջնական և ռազմական վերականգնման գործում»⁶¹: Միևնույն ժամանակ Կիլիկիայի շուրջ օղակը գնալով սեղմվում էր: Բրիտանացիները, որ Փարիզի վեհաժողովում բացահայտ հայտարարել էին, թե նյութական ու մարդկային ռեսուրսներ չունեն զինաթափելու թուրքերին և ապահովելու Կիլիկիայի անվտանգությունն ու խաղաղ զարգացումը, օգտվելով ամերիկացիների բացակայությունից, աստիճանաբար նեղացնում էին հայկական ապագա պետության սահմանները և՛ Կիլիկիայում, և՛ Խարբերդում, և՛ Էրզրումում, և՛ սևծովյան հատվածում⁶²: Ջ. Քերզոնն այդ գործելակերպը բացատրում էր նրանով, որ Փարիզի վեհաժողովում թուրքերի համար «զգայուն» հարցերի վերաբերյալ ցանկացած կտրուկ որոշում կամ արմատական լուծում կարող էր առաջ բերել վերջիններիս դիմադրությունը: Նա կողմնակից էր Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքումն արագացնելուն, թեև վստահ չէր, որ այդ պայմանագիրը վերջնականորեն կխաղաղեցնի Մերձավոր Արևելքը և մի քանի ամիս անց չէր հանգեցնի տարածաշրջանում իրադրության էլ ավելի սրման: Ըստ Ջ. Քերզոնի՝ հաստատ էր միայն այն, որ ԱՄՆ-ն պիտի հրա-

58 Նույն տեղում, փաստ. № 296, 382:

59 Նույն տեղում, 340-341:

60 Նույն տեղում, 353:

61 Նույն տեղում, 354:

62 Махмуриян, *Армения в политике США*, 362.

Ժարվեր Կիլիկիայի մանդատից հոգուտ Ֆրանսիայի⁶³: Փաստորեն իրենց արդարացի իրավունքները պաշտպանելու համար պայքարում հայերը մնացել էին միայնակ: Նրանց միակ հույսը հայկական զինուժն էր: Քեմալականները պատրաստվում էին ձախողել Թուրքիային պարտադրվելիք հաշտության պայմանագիրը: Որևէ ազդեցիկ պետություն չէր երաշխավորում հայ ժողովրդի անվտանգությունը ՀՀ-ում, նրան միացվելիք արևմտահայկական տարածքներում և Կիլիկիայում, ավելին՝ նրանց առաջարկվում էր մոռանալ Կիլիկիայի մասին:

Այս իրադրությունը նպաստավոր էր քեմալականների համար, որոնք մտադիր էին առաջին իսկ հնարավորության դեպքում հայաթափել Կիլիկիան: Արդեն փետրվարի 13-ին Զմյուռնիայում ամերիկյան գլխավոր հյուպատոսը հաղորդում էր Կիլիկիայում քեմալականների լայնամասշտաբ հարձակման, երկրամասից ֆրանսիական զորքի դուրսմղման, ինչպես նաև Զեյթունում, Ֆոնուզում, Ֆընտըճագում և հարակից գյուղերում հավաքված հայ փախստականների ահռելի մարդկային կորուստների մասին⁶⁴: Թուրքերի փետրվարյան հարձակումը հերոսաբար ետ է մղվում Այնթապում՝ չնայած նրա ճանապարհների շրջափակմանը, տեղի հայերի դեմ ցեղասպանական գործողություններին, որոնց նաև զոհ է դառնում մի քանի ամերիկացի միսիոներ⁶⁵:

Այս դեպքերին զուգահեռ՝ 1920 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում դաշնակից տերությունների դեսպանների, ապա ապրիլի 19-26-ին Սան Ռեմոյում (Իտալիա) տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովներում 1917-1919 թթ. դաշնակից տերությունների դիվանագիտական քննարկումներով համաձայնեցված իրավաքաղաքական սկզբունքների հիման վրա վերջնականապես մշակվում է Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը: Ապրիլի 23-ին ԱՄՆ կառավարությունը փաստացի ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը⁶⁶: Դրանից անմիջապես հետո Սան Ռեմոյի խորհրդաժողովը հավանություն է տալիս Միացյալ Հայաստանի ստեղծմանը՝ Թուրքիայի հետ նրա սահմանների, մասնավորապես Էրզրումն ու Տրապիզոնը Միացյալ Հայաստանի սահմաններում ընդգրկելու հարցը շարունակելով կապել ԱՄՆ-ի՝ Հայաստանի մանդատը և հայ-թուրքական սահմանագծման իրավաբարությունը ստանձնելու խնդիրների հետ, որոնց քննարկմանն ամերիկյան կողմը, ելնելով իր կառավարության որդեգրած քաղաքական նոր դիրքորոշումից, չէր մասնակցել: Նման առաջարկով ապրիլի 26-ին Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյից դիմում է ԱՄՆ կառավարությանը և նախագահ Վ. Վիլսոնին՝ նկատի ունենալով այդ պետության շահերն ու հետաքրքրություններն Արևելյան, մասնավորապես Հայաստանի հարցում⁶⁷: Միևնույն ժամանակ, եվրոպական դիվանագետները հավելվում են, որ ԱՄՆ կառավարությանը հետաքրքրող Կիլիկիան դուրս էր թողնվելու

63 Նույն տեղում:

64 Նույն տեղում, 305:

65 Նույն տեղում, 307:

66 Նույն տեղում, փաստ. № 304, 389:

67 *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. In 3 vols., vol. III* (Washington, D. C.: US Government Printing Office, 1936), 770; *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 306, 391-396.

ամերիկյան մանդատային գոտուց: Դա անընդունելի համարող Հայաստանի անկախության և օգնության Ֆիլադելֆիայի կոմիտեն մայիսի 5-ին հանդես է գալիս ԱՄՆ նախագահին ուղղված «Ամերիկյան և Հայաստանը» խորագրով հայտարարությամբ: Նրանում առաջարկվում էր ճանաչել «հայկական կառավարությունը, որի լիազորությունները տարածվում են վեց վիլայեթների թուրքական Հայաստանի վրա՝ ներառյալ Տրապիզոնի նահանգը, համանուն նավահանգիստը և Կիլիկիա նահանգը... Մերսին ծովային նավահանգստով»⁶⁸: Նույն օրերին Կիլիկիայի իրավական կարգավիճակի հարցը քննարկվում էր հայ հասարակական-քաղաքական շրջանակներում, և դրանց արդյունքները դիվանագիտական խողովակներով հասցվում էին Վաշինգտոն: Հայերի համար ընդունելի երկու տարբերակներից մեկը Կիլիկիայում Ֆրանսիայի մանդատի հաստատումն էր, մյուսը՝ երկրամասի ներառումը ամերիկյան միասնական մանդատի սահմաններում⁶⁹: Սակայն 1920 թ. մայիսի 17-ին պետքարտուղար Բ. Քուլբրի՝ դեսպան Հ. Բ. Ուոլեյսին ուղղված հեռագրից պարզ է դառնում, որ նախագահ Վ. Վիլսոնը պաշտոնապես համաձայն էր Գերագույն խորհրդի որոշումների հիման վրա, այսինքն՝ առանց Կիլիկիայի, ստանձնել Հայաստանի սահմանները որոշող իրավարարի առաքելությունը⁷⁰:

Վաշինգտոնի ազգային արխիվում պահպանվում են վավերագրեր, որոնցում նկարագրված են, վերոնշյալ դիվանագիտական իրադարձություններին զուգահեռ, 1920 թ. Կիլիկիայում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները: Մայիսի 30-ին Անկարայի թուրք-ֆրանսիական զինադադարի ստորագրումից հետո, որի հիման վրա՝ ֆրանսիական զորքը թողնում է Սիսը և տեղափոխվում Ադանա, քեմալականների գործողություններն ավելի սանձարձակ են դառնում. քաղաքում հայերին արգելվում էր բացել խանութները, արվարձաններում և մերձակա գյուղերում մշակել հողատարածությունները: Հաճախակի էին մահմեդականներն առևանգում հայերին, Մարաշում վտանգված էր 5 հազ. հայ փախստականի կյանքը: 1920 թ. սեպտեմբերի 21-22-ին քեմալականները նոր հարձակում են սկսում կիլիկիահայերի դեմ, որի ընթացքում նաև դրսևորվում է Սևրի պայմանագրի կնքումից հետո Ֆրանսիայի հակահայկական կեցվածքը: 1920 թ. նոյեմբերի 11-ին Զմյուռնիայում գտնվող արքեպիսկոպոս Մուշեղ Սեբրյանը ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին հասցեագրած նամակում վկայում էր, որ ֆրանսիացիները նպատակադրվել էին ցրել կիլիկիահայերի իշխանության մարմինը Ադանայում՝ Ազգային միությունը, նաև զինաթափել կապիտան Ջոն Շիշմանյանի ինքնապաշտպանական ջոկատը, 140 հազ. կիլիկիահայի էվակուացնել Ալեքսանդրետա, Բեյրութ, Զմյուռնիա, Կ.Պոլիս կամ Երևան: Արքեպիսկոպոսը նշում էր, որ Կիլիկիայում դրությունը սկսել էր բարդանալ դեռևս 1919 թ. հոկտեմբերից, երբ հայերին արգելել էին զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով ու բռնագաղթեցրել Մերսին, Տարսոն, Ադանա, իսկ հայկական անշարժ և շարժական գույքին տի-

68 Հայտարարության հեղինակը Հայկ Յարդումյանն էր: Հայտարարությունը նաև ստորագրել էին Ու. Զ. Սմիթը, Ֆ. Լ. Վալդոն և Ֆ. Փ. Փաուերը: Махмуриян, *Армения в политике США*, 373:

69 Նույն տեղում, 363, 380-381, 385:

70 *Armenia in Documents of the U. S. Department of State*, doc. № 308, 397-398.

րացել էին մահմեդականները⁷¹: Իսկ ԱՄՆ-ում ապաստանած հայ փախստական Մանասե Սևակի վկայությամբ՝ քեմալականների պաշարած Հաճըն քաղաքը զրկված էր պարենից, իսկ հայերի ինքնակազմակերպման, առավել ևս ինքնապաշտպանության բոլոր փորձերը թշնամին կանխում էր: Ավելին՝ ֆրանսիացի սպաները ևս զբաղված էին հայերի թալանով: Նրանք և իտալացիները գործարքի մեջ էին քեմալականների հետ. զենք էին վաճառում նրանց և հայերից կողոպտված հարստություններից ստանում իրենց բաժինը⁷²: Գ. Մախմուդյանի իրավացի գնահատմամբ՝ ֆրանսիացիների պահվածքը բացատրվում էր նրանով, որ Դամասկոսը գրավելուց հետո Ֆրանսիայի կառավարությունն իր ուշադրությունը կենտրոնացրել էր Սիրիայում և Լիբանանում, որտեղ ծրագրված էր միասնական մանդատի ստեղծում: Այս պայմաններում Կիլիկիան լռելյայն հանձնվում էր թուրքերին՝ երկրամասում ֆրանսիական տնտեսական արտոնությունների պահպանման դիմաց⁷³:

ԱՄՆ պետդեսպարտամենտի փաստաթղթերը վկայում են, որ ԱՄՆ-ն բնավ չափազրգոված չէր Կիլիկիայի մանդատով և չէր պատրաստվում գործնական քայլեր ձեռնարկել կամ ստանձնել որևէ միջազգային-իրավական պարտավորություն կիլիկիահայերի անվտանգության ապահովման ուղղությամբ: Դա բացատրվում էր ոչ միայն Կ.Պոլիս – Անատոլիա – Արևմտյան Հայաստան – Անդրկովկաս միասնական մանդատից բխող անխուսափելի ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական դժվարություններով, ԱՄՆ-ի և նրա եվրոպական դաշնակիցների սուր հակասություններով, այլև դրանց համատեքստում երկրի նախագահ Վ. Վիլսոնի ու Կոնգրեսի տարածայնություններով: Այդ պայմաններում Վ. Վիլսոնն իրեն աջակցող պաշտոնյաների հետ ուղղակի անգոր էր իրագործելու Կիլիկիայի մանդատի վերաբերյալ իր տված խոստումները՝ առաջնորդվելով բացառապես մարդասիրության վեհ գաղափարներով:

Ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերը նաև վկայում են, որ դաշնակից տերությունները ևս գործնականորեն շահագրգռված չէին լուծելու Կիլիկիայի ու նրա հայ բնակչության անվտանգության ապահովման խնդիրը: Ըստ 1920 թ. Սևրի պայմանագրի՝ Կիլիկիայի մանդատը տրվում է Ֆրանսիային՝ հիմք ընդունելով 1916 թ. Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնագիրը: Դա երկրամասը քեմալական Թուրքիային վերադարձնելու սկիզբն էր: Ֆրանսիան, ձգտելով այդ պետությունից ստանալ իր պետական պարտքը, 1921 թ. Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրով՝ Կիլիկիան վերադարձնում է Թուրքիային՝ դառնալով երկրամասի հայաթափման և կիլիկիահայերի նոր ցեղասպանության հանցակիցը:

Հայ ժողովուրդն ապրում է հերթական ողբերգությունը, բայց արդյո՞ք քաղում է պատմության հերթական և մեր օրերում ևս խիստ արդիական դասն այն մասին, որ աշխարհի ազդեցիկ պետությունների համար մարդասիրական հայտարարությունները լոկ իրենց իրական նպատակներն ու հավակնությունները քողարկելուն ուղղված դիվանագիտական հնարք են, և որ ազգային պետություն ու պետականություն կերտելու տեսանկյունից առաջնային պետք է լինի նախևառաջ սեփական մարդկային,

71 Махмуриян, *Армения в политике США*, 450.

72 Նույն տեղում:

73 Նույն տեղում:

ռազմական, տնտեսական, հումքային, ֆինանսական և այլ հնարավորությունների ու կարողությունների պթափ գնահատումը:

Այսպիսով, 1919–1920 թթ. ԱՄՆ պետդեպարտամենտի փաստաթղթերը սկզբնաղբյուրային կարևոր արժեք ունեն: Դրանք բացահայտում են Կիլիկիայի հարցում ԱՄՆ-ի քաղաքականության աստիճանական փոփոխությունը եվրոպական դաշնակից պետությունների դիվանագիտական ճնշման ներքո, ներկայացնում են երկրամասի տնտեսական և ռազմաքաղաքական կարևորությունը մեծ տերությունների մերձավորարևելյան ծրագրերում՝ ամբողջացնելով Կիլիկիայի ու կիլիկիահայերի պատմությունը՝ նոր, ուշագրավ փաստերով:

CILICIA IN THE DOCUMENTS OF THE U.S. STATE DEPARTMENT IN 1919–1920

Lilit Hr. Hovhannisyan

Institute of History of National Academy of Sciences, Armenia

SUMMARY

The diplomatic documents from the U.S. Department of State stored at the National Archives of the USA in Washington and Republic of Armenia in Yerevan, which were officially published in volumes by the U.S. Government yet in 1931-1947, contain remarkable material on Cilicia. They throw light upon the negotiations between the leaders of the United States, Great Britain, France, Italy and delegations representing those countries at the 1919-1920 Paris International Peace Conference on political status and borders of Cilicia, establishment of a mandate for it, withdrawal of British troops from the region, occupation of Cilicia and Syria by French troops. The documents of the State Department reveal the contradictions between the Great Powers on the above-mentioned issues, describe their interests in the region. Records for the meetings of the Council of Ten of February 4, Council of Four of March 20, May 14, 21, 31 and Council of Five of July 18, August 25, 1919 are valuable from this point of view.

The “Scheme for settlement in the Turkish Empire” of May 21, 1919, reflects the position of the Prime Minister of Great Britain D. Lloyd George on Cilicia. The U.S. President W. Wilson's approaches concerning Cilicia are reflected in reports of the U.S. Commissioners in Turkey C. Crane and H. King of August 28, 1919, and the chief of the military mission to Armenia General J. Harbord of October 16, 1919. The difficulty of the Turkish border demarcation through Cilicia is presented in a note issued by the Allied Supreme Council on April 26, 1920, to U.S. Secretary of State B. Colby.

The U.S. State Department diplomatic documents confirm that the Allies were practically not interested in resolving the issue of ensuring the security of Cilicia and its Armenian population. Based on the 1916 Sykes-Picot Anglo-French secret agreement, the 1920 Treaty of Sèvres provided for the transference of the mandate of Cilicia to France. It became the beginning of handing over the land to the Kemalist Turkey. Thus France, seeking to receive its state debt from Turkey, became an accomplice to the new genocide of Cilicia Armenians.

Key words: Adana vilayet, Ottoman Empire, Paris International Peace Conference, Council of Ten, Council of Four, mandate, United and Independent Armenia, Woodrow Wilson, Sykes-Picot Agreement, Treaty of Sèvres, Armenian Genocide.

КИЛИКИЯ В ДОКУМЕНТАХ ГОСУДАРСТВЕННОГО ДЕПАРТАМЕНТА США В 1919–1920 ГГ.

Լիլիթ Գր. Օգանիսյան

Институт истории Национальной академии наук, Армения

РЕЗЮМЕ

Дипломатические документы Государственного департамента США, хранящиеся в Национальных архивах США в Вашингтоне и Республики Армения в Ереване и официально изданные в томах правительством США еще в 1931-1947 гг., содержат примечательный материал о Киликии. Они проливают свет на переговоры, состоявшиеся на Парижской международной мирной конференции в 1919-1920 гг. между руководителями и делегациями США, Великобритании, Франции, Италии о политическом статусе и границах Киликии, определении для нее мандата, выводе британских войск из региона, оккупации Киликии и Сирии французскими войсками. В документах Госдепартамента раскрываются противоречия между великими державами по вышеуказанным вопросам, описываются их интересы в регионе. С этой точки зрения особенно ценны протоколы заседаний Совета Десяти от 4 февраля, Совета Четырех от 20 марта, 14, 21, 31 мая и Совета Пяти от 18 июля, 25 августа 1919 года.

“Схема урегулирования в Турецкой империи” от 21 мая 1919 г. отражает позицию премьер-министра Великобритании Д. Ллойд Джорджа по Киликии, а подходы президента США В. Вильсона в отношении Киликии отражены в докладах уполномоченных США в Турции Ч. Крейна и Г. Кинга от 28 августа 1919 г. и начальника военной миссии в Армению генерала Дж. Харборда от 16 октября 1919 г. Сложность демаркации турецкой границы через Киликию представлена в ноте Верховного совета Союзников от 26 апреля 1920 г. госсекретарю США Б. Колби.

Дипломатические документы Госдепартамента США подтверждают, что Союзники практически не были заинтересованы в решении вопроса обеспечения безопасности Киликии и ее армянского населения. На основании англо-французского секретного соглашения Сайкс-Пико 1916 года Севрский договор 1920 года предусматривал передачу мандата Киликии Франции. Это стало началом передачи региона Кемалистской Турции. Таким образом, стремясь получить свой государственный долг от Турции, Франция стала соучастницей нового геноцида киликийских армян.

Ключевые слова: вилайет Адана, Оттоманская империя, Парижская мирная международная конференция, Совет Десяти, Совет Четырех, мандат, Объединенная и Независимая Армения, Вудро Вильсон, соглашение Сайкс-Пико, Севрский договор, Геноцид армян.

REFERENCES

Galoyan, Galust. *Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.* [Armenia and the Great Powers, 1917-1923]. Yerevan: Gitut'yun, 1999;

Hovhannisyan, Lilit'. «Հայաստանը «Կովկասյան տան» թուրքական և Կ.Պոլիս–Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագրերում», *Ժամանակակից քաղաքականության գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում*, գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու [“Armenia in the Programs of Turkish ‘Caucasian Home’ and American United Mandate for

Constantinople – Transcaucasia” in *The Modern Civilizational Processes and the Development Problems of Humanities in Armenia. Collection of scientific session materials*]. Yerevan: Noyan Tapan, 2004, 110-125;

Makhmourian, Gayane. «Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում», *Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)*, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու [“Armenia and Armenian Question in the U.S. Policy of 1917–1918” in *The First World War and the Armenians (History and Actual Problems), Collection of Papers of the International Conference*]. Yerevan: NAS RA Institute of History, 2015, 164-169.

Makhmourian, Gayane. *Армения в политике США 1917–1923 гг.* [Armenia in the U. S. politics of 1917-1923]. Yerevan: NAS RA Institute of History, 2018.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Լիլիթ Հր. Հովհաննիսյան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմաբան, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և ԵՊՀ դասախոս:

Գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցերը:

Էլ. հասցեներ՝ lilitovannisian@yahoo.com; lilit.hovhannisyan@isec.am;
l_hovhannisyan@ysu.am

Lilit Hr. Hovhannisyan, PhD in History, Associate Professor, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide at the Institute of History of National Academy of Sciences of the Republic of Armenia, historian, lecturer at the International Scientific-Educational Center of National Academy of Sciences of Armenia and YSU.

Scientific interests: the main issues of history and historiography of the Armenian Question and Genocide of Armenians.

E-mail: lilitovannisian@yahoo.com; lilit.hovhannisyan@isec.am; l_hovhannisyan@ysu.am

Лилит Гр. Оганисян, канд. ист. наук, доцент, старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории Национальной академии наук Республики Армения, историк, лектор в ЕГУ и Международном научно-образовательном центре Национальной академии наук Республики Армения.

Научные интересы: вопросы истории и историографии Армянского вопроса и Геноцида армян.

Эл. почта: lilitovannisian@yahoo.com; lilit.hovhannisyan@isec.am;
l_hovhannisyan@ysu.am

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ
ՆԱՀԱՆԳՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՈՒ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԲՆԱՋՆՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԲՐԻՏԱՆԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏ ԵՎ ՀԵՏԱԽՈՒՅՉ ՄԱՅՈՐ ՆՈՅԵԼԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ**

Ռոբերտ Ա. Թաթոյան

«Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Սույն հրապարակմամբ ներկայացվում է Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիրի նահանգում հայերի և ասորիների բնաջնջման վերաբերյալ բրիտանացի դիվանագետ և հետախույզ մայոր Էդվարդ Վիլյամ Նոյելի տեղեկագիրը: «Քրիստոնյաների կոտորածները Դիարբեքիրի նահանգում 1915-ին» վերտառությամբ այս փաստաթուղթը պատրաստվել է 1919 թ. ապրիլին Մարդին քաղաքում, որտեղ հեղինակը գտնվել է փաստահավաք առաքելությամբ, ուստի տեղեկագրում ներկայացվող կոտորածի դեպքերի մեծ մասը վերաբերում է նշված բնակավայրին և Մարդինի գավառին:

Նոյելի տեղեկագրին կից՝ որպես հավելված զետեղվել է Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի բարձր հանձնակատար Արթուր Քալթոբիի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Քերզոնին ուղղված 1919 թ. հուլիսի 2-ի նամակը, որտեղ նա ներկայացնում է Առաջին աշխարհամարտից առաջ և հետո ըստ ազգությունների՝ Դիարբեքիրի նահանգի ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ մայոր Նոյելի հաղորդած տվյալները:

Մայոր Նոյելին ուսումնասիրողները բնութագրել են որպես «Քուրդիստանի և քրդերի մեծ գիտակ», «1919-ից առ 1922 թվականը ինչպես Անատոլիայի, այնպես էլ Իրաքի Քուրդիստանում բրիտանական գլխավոր գործակալ», ուստի հայերեն թարգմանությամբ հրապարակվող այս փաստաթղթերը, ինչպես նաև 1919 թ. առաքելությանը վերաբերող այլ նյութերը խիստ ուշագրավ են Արևմտյան Հայաստանի հարավային շրջանների ժողովրդագրության, Հայոց ցեղասպանության ընթացքի, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից հետո հայ-քրդական, հայ-թուրքական, թուրք-քրդական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Դիարբեքիրի նահանգ, Մարդին, Մեծ Բրիտանիա, բրիտանական հետախուզություն, բրիտանական դիվանագիտություն, Հայկական հարց, քրդեր:

Հղվածք ներկայացվել է՝ 09.02.2022: Ընդունվել է տպագրության՝ 10.04.2022:

The article was submitted on 09.02.2022 and accepted for publication on 10.04.2022.

Статья поступила 09.02.2022 и была принята к публикации 10.04.2022.

Ինչպես հղել՝ Ռոբերտ Ա. Թաթոյան, «Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիրի նահանգում հայերի ու ասորիների բնաջնջման վերաբերյալ բրիտանացի դիվանագետ և հետախույզ մայոր Նոյելի տեղեկագիրը», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no.1 (2022), 64-83:

How to cite: Robert A. Tatoyan, “British Diplomat and Spy Major Noel’s Report on the Extermination of Armenians and Assyrians in Diarbekir Province during the Armenian Genocide,” *Tseghaspanagitakan handes* 10, no.1 (2022): 64-83.

Как сослаться: Роберт А. Татоян, “Донесение британского дипломата и шпиона майора Ноэля об истреблении армян и ассирийцев в провинции Диарбекир во время Геноцида армян,” *Цехаспанagitakan андес* 10, no.1 (2022): 64-83.

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Մեծ Բրիտանիան՝ որպես հաղթանակած Անտանտի առանցքային երկրներից մեկը և Մերձավոր և Միջին Արևելքում ավանդական շահեր ունեցող պետություն, կարևոր դերակատարություն է ստանձնում պարտված Օսմանյան կայսրության հետագա ճակատագրի, նրա հետպատերազմյան սահմանների որոշման հարցում: Դրանից ելնելով՝ բրիտանական դիվանագիտությունը կարիք ուներ հստակեցնելու սեփական քաղաքական ուղեգիծը Հայկական և Քրդական հարցերի նկատմամբ, ինչը պայմանավորում էր նաև տեղերից՝ Արևմտյան Հայաստանի և «Քուրդիստանի» տարածքից վստահելի տեղեկատվության ստացման անհրաժեշտությունը:

Նշված նպատակի շրջանակներում՝ 1919 թ. գարնանը փաստահավաք առաքելությամբ՝ թուրք-քրդական փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, թուրքական իշխանությունների նկատմամբ քրդերի տրամադրությունները շոշափելու, ինչպես նաև քրդերի հետ քաղաքական տարբեր հարցերի շուրջ բանակցելու հանձնարարականով Օսմանյան կայսրության՝ «հիմնականում քրդերով բնակեցված շրջաններ»¹ է ուղարկվում Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության հետախուզական ծառայության աշխատակից մայոր Էդվարդ Վիլյամ Նոյելը (1886 – 1974), որը վայելում էր Քրդական հարցում բրիտանացի լավագույն մասնագետներից մեկի համբավը²:

Նոյելն իր ռազմական-դիվանագիտական կարիերան սկսել է Մեծ Բրիտանիայի հնդկական բանակում որպես կրտսեր սպա, 1915 թ. նշանակվել Պարսկաստանի Ահվազ քաղաքում բրիտանական փոխյուպատոս: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է տարբեր գաղտնի գործողությունների, մասնավորապես բոլշևիկյան հեղափոխությունից հետո Կովկասում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, սկսված թուրքական ներխուժմանը հակազդելու հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով 1918 թ. փետրվարին գործուղվել է Թիֆլիս, ապա՝ Բաքու³:

Մայոր Նոյելը 1919 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին կատարել է մի քանի ճանապարհորդություն Օսմանյան կայսրության արևելյան նահանգներ՝ շրջելով Դիարբեքի, Խարբեռդի և Հալեպի վիլայեթների տարածքով, ի թիվս այլ բնակավայրերի՝ այցելելով Ուրֆա, Վերանշեհիր, Դիարբեքիր, Մարդին, Մալաթիա, Այնթապ և Հալեպ,

1 Տե՛ս Նոյելի առաքելության վերաբերյալ բրիտանացի դիվանագետ, Կ.Պոլսում բրիտանական գերագույն հանձնակատարի գրասենյակի 2-րդ քաղաքական պաշտոնյա Էնդրյու Ռայանի (Andrew Ryan) 1919 թ. նոյեմբերի 27-ով թվագրված գեղուցագիրը՝ *Documents on British Foreign Policy, 1919-1939*, First Series, Volume IV, edited by E.L. Woodward, M.A., F.B.A. and Rohan Butler, M.A. (London, H.M. Stationery Off., 1952), 921:

2 Նոյն տեղում, 922: Ինքը Նոյելը հետևյալ կերպ է ձևակերպում իր առաքելության հիմնական նպատակը. «*հակազդել թուրքերի պանիսլամիստական քարոզչությանը և բրիտանական ավիաների աջակցությամբ հայկական գերիշխանության խրոխտմանը վախճանելու միջոցով բոլոր քրդերին մեր դեմ լարելու նրանց ջանքերին*» (*Diary of Major Noel on Special Duty in Kurdistan* (Basra, 1919), 1):

3 Նոյելի 1918 թ. կովկասյան առաքելության մասին մանրամասն տե՛ս Peter Hopkirk, *Like Hidden Fire. The Plot to Bring Down the British Empire* (New York-Tokyo-London: Kodansha International, 1994), 264-275, տե՛ս նաև Roland P. Minez, *At the Limit of Complexity: British Military Operations in North Persia and the Caucasus 1918* (Kansas: Army University Press, 2018), 53-54:

գրույցներ և քննարկումներ ունենալով քրդական ցեղապետերի, ինչպես նաև հայկական և ասորական համայնքների երևելի ներկայացուցիչների հետ:

Արևմտյան Հայաստանի և «Քուրդիստանի» շրջաններում 1919 թ. Նոյեմբերի առաքելությունը լայնորեն լուսաբանվել է Քրդական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության ուսումնասիրության համատեքստում⁴, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրան ծավալուն անդրադարձել է Մուսթաֆա Քեմալն իր հայտնի «Նուրուկ» ճառում⁵: Քեմալն ու իր կողմնակիցները դիտարկում էին Նոյեմբերի առաքելությունը որպես «հակահեղափոխական»՝ նրան կասկածելով քրդերի շրջանում քեմալական շարժման դեմ քարոզչություն տանելու, անգամ հակաքեմալական ուղղվածություն ունեցող քրդական ցեղերի դաշինք ստեղծելու մեջ⁶: 1919 թ. սեպտեմբերի 9-ին Քեմալն անգամ կարգադրել է ձերբակալել Նոյեմբերին, որն այդ ժամանակ գտնվում էր Մալաթիայում, սակայն քրդերի օգնությամբ նրան հաջողվել է խուսափել ձերբակալությունից և փախչել⁷:

Ուսումնասիրողները Նոյեմբերին բնութագրում են որպես «Քուրդիստանի և քրդերի մեծ գիտակ»⁸, «1919-ից առ 1922 թվականը ինչպես Անատոլիայի, այնպես էլ Իրաքի Քուրդիստանում բրիտանական գլխավոր գործակալ»⁹: Նոյեմբերը հայտնի էր քրդամետ տրամադրություններով¹⁰ և իր վերադասի՝ Իրաքի բրիտանական վարչության ղեկավար գնդապետ Արնոլդ Վիլսոնի հետ միասին պաշտպանում էր Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբեռլի վիլայեթների տարածքների վրա բրիտանական հովանավորությամբ անկախ քրդական պետության ստեղծելու գաղափարը¹¹ (այդ պատճառով նրա հետ առնչված որոշ ժամանակակիցներ մտավախություն էին հայտնում, որ նա կարող է վերածվել «քրդական գնդապետ Լուրենսի»¹²):

4 St'u հասկապես Briton Cooper Busch, *Mudros to Lausanne: Britain's Frontier in West Asia, 1918-1923* (New York: State University of New York Press, 1976), 181-192, նաև՝ Saad Basheer Eskander, *Britain's policy towards the Kurdish question, 1915-1923*, PhD thesis, London School of Economics and Political Science, 1999, հասանելի է առցանց՝ <http://etheses.lse.ac.uk/2625/>, տե՛ս նաև İhsan Şerif Kaymaz, "Britain's Policy toward Kurdistan at the End of the First World War", *Alternatives: Turkish Journal of International Relations* (Summer/Fall 2011), Vol. 10 Issue 2/3, 79 - 103):

5 Мустафа Кемаль, *Путь новой Турции 1919-1927. Т. 1. Первые шаги национально-освободительного движения, 1919* (Москва: Государственное издательство Литиздат Н.К.И.Д., 1929), 116-138:

6 Hakan Özgülu, *Kurdish Notables and the Ottoman State. Evolving Identities, Competing Loyalties, and Shifting Boundaries* (Albany: State University of New York Press, 2004), 152.

7 Busch, *Mudros to Lausanne: Britain's Frontier in West Asia*, 190.

8 Кемаль, *Путь новой Турции*, 449.

9 Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880-1925* (Austin: University of Texas Press, 1989), 20.

10 *Documents on British Foreign Policy*, 922:

11 Andrew Mango, "Atatürk and the Kurds," *Middle Eastern Studies* 35, No. 4 (1999): 9: Ըստ այդ ծրագրի՝ հայկական պետության մեջ նախատեսվում էր ընդգրկել Արևմտյան Հայաստանի միայն հյուսիսային շրջանները՝ գլխավորապես Էրզրումի ու Տրապիզոնի նահանգների տարածքները (տե՛ս Busch, *Mudros to Lausanne*, 187):

12 David McDowall, *A Modern History of the Kurds* (London: I.B. Tauris, 2007), 128, տե՛ս նաև Özgülu, *Kurdish Notables and the Ottoman State*, 149: Խոսքը Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան

1919 թ. ճանապարհորդությունների ընթացքում հավաքած տեղեկությունները մայոր Նոյելն ամփոփել է իր օրագրերում, որոնք ծառայողական օգտագործման համար սահմանափակ տպաքանակով հրատարակվել էին ճանապարհորդության ավարտից անմիջապես հետո՝ 1919-20 թթ.¹³, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը, բրիտանական ռազմաքաղաքական ղեկավար մարմիններին և պաշտոնյաներին հասցեագրված տարբեր տեղեկագրերում, գրություններում և նամակներում, որոնք այսօր պահվում են Մեծ Բրիտանիայի ազգային արխիվի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերի բաժնում (Foreign Office records) և բրիտանական այլ արխիվներում: 1919 թ. առաքելությանը վերաբերող Նոյելի փաստաթղթերը խիստ ուշագրավ են Արևմտյան Հայաստանի հարավային շրջանների ժողովրդագրության, այդ շրջաններում Հայոց ցեղասպանության ընթացքի, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից հետո հայ-քրդական, հայ-թուրքական և թուրք-քրդական փոխհարաբերությունների տարբեր ասպեկտների պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Վերոնշյալից ելնելով՝ սույն հրապարակմամբ թարգմանաբար ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում 1919 թ. ճանապարհորդության ընթացքում մայոր Նոյելի կազմած գրություններից մեկը՝ Հայոց ցեղասպանության ժամանակ Դիարբեքիի նահանգում հայերի և ասորիների բնաջնջման վերաբերյալ տեղեկագիրը:

Գրությունը վերնագրված է «Քրիստոնյաների կոտորածները Դիարբեքիի նահանգում 1915-ին» («Christian Massacres of 1915 in Diarbekir Vilayat»), ծավալով մեծ չէ՝ երեք տպագիր թերթ: Մայոր Նոյելը այն կազմել է 1919 թ. ապրիլի 25-ին Մարդին քաղաքում. դրանով է պայմանավորված, որ տեղեկագրում ներկայացվող կոտորածի դեպքերի մեծ մասը վերաբերում է նշված բնակավայրին և Մարդինի գավառին: Տեղեկությունների աղբյուրը ցեղասպանությունը վերապրած հայերն ու ասորիներն են:

Տեղեկագիրն ըստ կառուցվածքի կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի: Առաջին մասում Նոյելը հակիրճ ներկայացնում է կոտորածների ընդհանուր պատմությունը՝ նախապատրաստումը (պատճառներ, կազմակերպիչներ, բնաջնջման ծրագրի բովանդակություն), ընթացքը և հետևանքները: Կարևոր է հեղինակի այն դիտարկումը, որ քրիստոնյաների բնաջնջումն ուներ կանխամտածված բնույթ՝ իրականացվել է ըստ նախապես մշակված ծրագրի:

Կոտորածների ընդհանուր նկարագրության վերջում, որպես ամփոփում, հեղինակը ներկայացնում է զոհերի թիվն ըստ հարանվանությունների (հակառիկյան ասորիներ, առաքելական, բողոքական և կաթոլիկ հայեր, ասորի կաթոլիկներ, քաղղեացիներ): Ըստ հեղինակի՝ Դիարբեքիի նահանգում կոտորածներին զոհ է գնացել 157 000 մարդ, որից 52200-ը՝ հայ, 105 000-ը՝ ասորի¹⁴:

կայսրության դեմ արաբների ապստամբությունը նախապատրաստած բրիտանացի գործակալ Թոմաս Էդվարդ Լոուրենսի (Լոուրենս Արաբացի) մասին է:

13 *Diary of Major Noel on Special Duty in Kurdistan*: Բուն գրքույկում հրատարակության տեղն ու թվականը նշված չեն: Աշխատանքը օգտագործած տարբեր ուսումնասիրողներ որպես հրատարակության վայր նշում են Բասրան կամ Բաղդադը, որպես թվական՝ 1919-ը կամ 1920-ը: Մենք առաջնորդվում ենք ըստ ամերիկացի պատմաբան Բրիտոն Կուպեր Բուշի նշած տվյալների՝ Basra: Superintendent of Government Press, 1919 (տե՛ս Busch, *Mudros to Lausanne*, 396):

14 Ժամանակակից ուսումնասիրողների կարծիքով, ցեղասպանության ընթացքում Դիարբեքիի նա-

Տեղեկագրի երկրորդ մասում Նոյելը ներկայացնում է տարբեր բնակավայրերում առանձին ջարդերի վերաբերյալ տվյալներ՝ դասավորված ըստ ժամանակագրական կարգի: Տրվում են ջարդի ամիս-ամսաթիվը, վայրը, զոհերի թիվը: Նշումների համար նախատեսված մասում ներկայացվում է ջարդին վերաբերող որևէ կարևոր կամ հատկանշական մանրամասնություն: Տեղեկագիրը պարունակում է միայն 1915 թ. հունիս – հոկտեմբեր ամիսների ջարդերի ժամանակագրությունը: Փաստաթուղթն ավարտվում է 1915 թ. հոկտեմբերի 30-ին Դիարբեքիի մոտակայքում մոտ 1000 հայ զինվորի սպանության մասին գրառմամբ:

Տեղեկագրի այս բաժնի համար Նոյելը որպես աղբյուր օգտագործել է կաթոլիկ հոգևորական Հայր Հիացինտ Սիմոնի հուշագրությունը (գրվել է Մարդինում 1916 թ. հունիսին¹⁵), որի ձեռագրին հնարավորություն է ունեցել ծանոթանալ և համառոտագրել տեղում:

Նոյելի տեղեկագիրը Հայոց ցեղասպանության ընթացքն ու հետևանքները կոնկրետ վայրում՝ Դիարբեքիի նահանգի տարածքում, ականատեսի արձանագրած անաչառ վկայություն է: Հեղինակը քրդական պետության ստեղծման գաղափարի ջատագով էր, հայերի տարածքային պահանջատիրությանն ու քաղաքական հավակնություններին բացասաբար վերաբերվող բրիտանացի ռազմական գործիչ, այսինքն՝ մարդ, որը հիմք չուներ ի շահ հայերի և այլ քրիստոնյա համայնքների խեղաթյուրել փաստերը: Առաջին հերթին այս հանգամանքից ելնելով՝ կարծում ենք, որ տեղեկագիրն արժանի է Հայոց ցեղասպանության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողի ուշադրությանը:

Բացի դրանից՝ կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակը Դիարբեքիի կոտորածները լայն ներառական համատեքստում որպես բոլոր հարանվանությունների ոչնչացման պատմություն է դիտարկում: Այո, բնաջնջման հատուկ որոշումն ու այն սպասարկող՝ տեղահանության, գույքի բռնագրավման և այլ օրենքներն ընդունվել և կիրառվել էին առաջին հերթին հայերի դեմ, սակայն Հայոց ցեղասպանությունը բազմազգ Օսմանյան կայսրությունը միատարր թուրքակենտրոն ազգային պետության վերածելու երիտթուրքական և քեմալական քաղաքականության համատեքստում է իրագործվել¹⁶:

հանգի զոհված հայերի թիվն ավելի մեծ է: Այսպես, ըստ «Դիարբեքիի տարածաշրջանում հայերի բնաջնջումը» գրքի հեղինակ Հիլմար Կայզերի՝ սպանողի է ենթարկվել նահանգի 120 000-անոց հայ ազգաբնակչության առնվազն 75%-ը, այսինքն՝ 90000 մարդ (Hilmar Kaiser, *The Extermination of Armenians In the Diarbekir Region* (Istanbul: Bilgi University Press, 2014), 270):

15 Hyacinthe Simon, *Mardine, la ville heroique: autel et tombeau de l'Arménie (Asie Mineure) durant les massacres de 1915* (Jounieh: Maison Naaman pour la Culture, 1991), 133-143, ժամանակագրության անգլերեն թարգմանությունը տե՛ս David Gaunt, Jan Bet Şawoce, Racho Donef, *Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia During World War I* (Piscataway, New Jersey: Gorgias Press, 2006), 436-440:

16 Ժամանակակից ուսումնասիրողներից մասնավորապես Թաներ Աքչամը Հայոց ցեղասպանությունը դիտարկում է Թուրքիան միատարրացնելուն (homogenizing) ուղղված լայն քաղաքականության համատեքստում, (տե՛ս, օրինակ, նրա «Կայսրությունից Հանրապետություն. թուրքական ազգայնականությունը և Հայոց ցեղասպանությունը» գրքի «Անատոլիայի միատարրացումը և էթնիկական գտումը» գլուխը (Taner Akçam, *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian*

Ընթերցողին օգնելու նպատակահարմարությունից ելնելով՝ ծանոթագրել ենք Նոյեյի տեղեկագրում ներկայացված որոշ փաստեր և իրողություններ: Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիի նահանգի հայ բնակչության բնաջնջման պատմության մասին հավելյալ տեղեկություններ կարելի է քաղել հատկապես գերմանացի ուսումնասիրող Հիլմար Կայզերի «Դիարբեքիի տարածաշրջանում հայերի բնաջնջումը» մենագրությունից¹⁷: Երիտթուրքերի ազգային և ժողովրդագրական քաղաքականությունը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ընթացքը հատկապես Դիարբեքիի նահանգի օրինակով է ուսումնասիրության ենթարկում նիդերլանդաբնակ թուրք պատմաբան Ուդուր Ումիթ Ունգորն իր «Ժամանակակից Թուրքիայի ստեղծումը: Ազգ և պետություն Արևելյան Անատոլիայում, 1913-50» աշխատության առաջին և երկրորդ գլուխներում¹⁸: Իր «Հայոց ցեղասպանություն: Ամբողջական պատմություն» աշխատության մեջ Դիարբեքիի նահանգի հայերի կոտորածներին առանձին գլուխ է նվիրել ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն (Հարություն) Գևորգյանը¹⁹:

Նոյեյի տեղեկագրին կից՝ որպես հավելված թարգմանաբար ներկայացնում ենք Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի բարձր հանձնակատար Արթուր Քալթոբիի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Քերզոնին ուղղված 1919 թ. հուլիսի 2-ի նամակը, որտեղ նա ներկայացնում է Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Դիարբեքիի նահանգի ազգաբնակչության էթնիկական խմբերի թվաքանակի վերաբերյալ մայոր Նոյեյի հաղորդած տվյալները: Ըստ Նոյեյի՝ նախքան պատերազմը նահանգում կար 120 000 հայ բնակչություն, որից 1919 թ. ամռան դրությամբ մնացել էր 20000-ը, պատերազմից առաջ ասորիների թիվը 81000 էր, դրանից հետո՝ 23000: Նշված տվյալներից հետևում է, որ ցեղասպանության ընթացքում զոհվել է մոտ 100 000 հայ՝ նահանգի հայ ազգաբնակչության 83%-ը կամ չորս հինգերորդը, ինչպես նաև 58000 ասորի՝ նախաեղեռնյան ասորի ազգաբնակչության մոտ 72%-ը:

Նշենք նաև, որ, ըստ 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին հայկական և ասորական պատվիրակությունների ներկայացրած առանձին վիճակագրությունների, նախքան Առաջին աշխարհամարտը Դիարբեքիի նահանգում բնակվում էր 124 000 հայ²⁰ և 117 000 ասորի²¹: Դրան հակառակ, ըստ օսմանյան պատվիրակության վիճակագրության, 1914-ին նահանգում կար (բոլոր հարանվանությունների) 73226 հայ և 48103 ասորի ազգաբնակչություն²²: Նոյեյի տվյալների հետ վերոնշյալ թվե-

Genocide (London and New York: Zoryan Institute, 2004), 115-157):

17 Hilmar Kaiser, *The Extermination of Armenians In the Diarbekir Region*.

18 Uğur Ümit Üngör, *The Making of Modern Turkey. Nation and State in Eastern Anatolia, 1913-1950* (Oxford University Press, 2011).

19 St'u Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History* (London-New York: I. B. Tauris & Co Ltd, 2011), 355-380:

20 St'u «Քաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մեջ տեղահանությունից առաջ և վերջ (Պատրաստում 1 Ապրիլ 1921)», Թ-էդիկ, *Ամենուն ցարեցոյցը, ԺԶ ցարի* (Կ. Պոլիս, տպ. Մ. Յովակիմյան, 1922), 261:

21 Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 406.

22 Kemal Karpat, *Ottoman Population 1830-1914. Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 176.

րի համեմատությունը ևս մեկ անգամ փաստում է, որ Առաջին աշխարհամարտից հետո հետպատերազմյան կարգավորման համատեքստում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության թվաքանակի հարցի արծարծումներում և հարցի վերաբերյալ հակասող վիճակագրությունների պայմաններում բրիտանացի դիվանագետները և առհասարակ բրիտանական դիվանագիտությունը հայերի և քրիստոնյա այլ էթնիկական խմբերի թվաքանակի հաշվարկներում առաջնորդվում էին տվյալ համայնքի տրամադրած թվերով՝ դրանք հավաստի համարելով²³:

Փաստաթուղթ 1. ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1915-ԻՆ

Այստեղ ներկայացված տեղեկությունները Մարդին քաղաք կատարած իմ կարճատև այցելության ժամանակ ձեռք բերած նյութից են: Արտահայտված կարծիքներն արտացոլում են զուտ տեղացիների տեսակետը և հետևաբար կարող են աղավաղված լինել հատկապես ջարդերին հանգեցրած ընդհանուր քաղաքական իրավիճակին վերաբերող որոշ մանրամասնություններում:

Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո շատ շուտով նշաններ ի հայտ եկան, որ քրիստոնյաների ապագան մշուշոտ է: Անհանգստանալու ամենավաղ առիթը տվեց ոմն գերմանացի պաշտոնյա, որ հենց սկզբից թշնամական վերաբերմունք որդեգրեց քրիստոնյաների դեմ՝ որպես Աստանտի ընկերների դեմ, և առաջարկներ էր անում թուրքերին՝ համոզելով նրանց, որ կոտորածը պատերազմի օրինական մեթոդ է: Դեռևս 1914 թ. Մարդինում մի գերմանացի հայտարարեց, որ Ռայխսպագը հավանություն է տվել հայերի կոտորածին՝ որպես օրինական միջոցի՝ հաշվի առնելով նրանց ապացուցված դավաճանությունը:

Փոթորկի առաջին շոշափելի նախանշանը գաղտնի հեռագիրն էր՝ «Ժողովուրդն ինքը պետք է լուծի դավաճանների հարցը»:

Ուլքեր էին դավաճանները, որոնց ակնարկվում էր:

Մարդինի քրիստոնյաները սկզբում կարծեցին, որ ակնարկը վերաբերում է հայ գինավորներին, որոնք, ինչպես լուրեր էին պտտվում, զանգվածաբար դասալքում էին՝ անցնելով ռուսների կողմը Կովկասյան ճակատում: Մարդինցիները կարծես թե որևէ մտավախություն չունեին, որ հենց իրենց քաղաքը կմեղադրվի դավաճանության մեջ: Չէ՞ որ երկու մութասարիֆներ՝ Շեֆիկ բեյը և Հիլմի բեյը²⁴, քաղաքի հավատարմության համար երաշխավորել էին Պոլսին: Քաղաքի հայերի երկու տոկոսից ոչ ավելին էր անդամակցում հայկական մեծ կազմակերպության՝ Դաշնակցությանը: Կաթոլիկ եպիսկոպոսը՝ հայ համայնքի հոգևոր առաջնորդը²⁵, ամբիոնից իր հոտին զգուշաց-

23 Առաջին աշխարհամարտից հետո արևմտահայության թվաքանակի հարցին բրիտանական դիվանագիտության անդրադարձների մասին տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4, թիվ 1 (2016), 75-82:

24 Մարդինի գավառի՝ 1915 թ. իրար հաջորդած կառավարիչներ:

25 Խոսքը Մարդինի արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի մասին է, որ զոհ է գնացել Հայոց ցեղասպանությանը՝ մարտիրոսական մահն ընդունելով 1915 թ. հունիսի 11-ին (նրա նահատակության

րել էր չմիանալ գաղտնի կազմակերպություններին:

Դժվար է ասել՝ Մարդինում հայկական ակտիվ անհավատարմության ապացույցներ իրոք հայտնաբերվել էին, թե՛ ոչ: 1914 թ. և 1915 թ. թուրք պաշտոնյաներն անհետացել են: Արձանագրություններն այժմ հասանելի չեն, իսկ քրիստոնյաների վկայությունները միակողմանի են: Նրանք պնդում են, որ թուրքերը, տնետուն հաճախակի խուզարկություններ կատարելով, զենքի և զինամթերքի գաղտնի պահեստներ չեն հայտնաբերել²⁶:

Սակայն եթե անգամ հայկական դավաճանությունը կարելի լիներ մինչև վերջ ապացուցված համարել, հազիվ թե լինի որևէ առարկություն նույնիսկ թուրքերից, որ քրիստոնյա մյուս համայնքները՝ հակոբիկյան, քաղդեական և սիրիական, դրան մաս չեն կազմել:

Ժողովուրդը երկար ժամանակ կասկածների մեջ չմնաց, թե հատկապես ո՞ւմ է վերաբերում «դավաճան» բառը: Կ.Պոլսից հրամաններ ստացվեցին զինաթափել յուրաքանչյուր քրիստոնյա զինվորի և ժանդարմի: Սպաներին կարգադրվեց հեռացնել իրենց քրիստոնյա ծառաներին և ապագայում թույլ չտալ որևէ քրիստոնյայի մուտք ունենալ իրենց մոտ: 1915 թ. հունվարին բոլոր քրիստոնյաները հեռացվեցին կառավարման մարմիններում աշխատանքից: Փետրվարին և մարտին թուրք պաշտոնյաները, այդ թվում՝ նույնիսկ պատգամավորներ, բեռնակիր կենդանիներ գնելու պատրվակով այցելեցին [քրդական] ցեղերին և բացահայտորեն քարոզեցին անհավատներին մահվան ենթարկելու վարդապետությունը: Դրան հաջորդեց ապրիլին և մայիսին ավելի չարաբաստիկ միջոց՝ մուսուլմաններից բաղկացած զինված խմբերի ձևավորումը, որոնք հավաքագրվեցին 50-ից մինչև 60 տարեկան տղամարդկանցից, որոնք դեռևս չէին զորակոչվել բանակ: Նրանք զինված էին հրացաններով ու սրերով, և թևներին կարմիր առանձնանշաններ ունեին:

Հետագա իրադարձությունները մատնանշում են, որ գոյություն ունեին և գործի դրվեց նախօրոք ծրագրված և մանրամասն մշակված քաղաքականություն: Հաղորդվում է, որ 1914 թ. դեկտեմբերին ստեղծվեց Գաղտնի կոմիտե, որը գլխավորեց Թալեաթը, և որի գլխավոր անդամներից մեկը դարձավ Դիարբեքիրի վալի Ռաշիդ բեյը: Կոմիտեի հրամաններին պետք է ենթարկվեին անվերապահորեն՝ պետական ծառայությունից ազատվելու կամ անգամ ավելի խիստ պատժի ենթարկվելու սպառնալիքից խուսափելով: Հենց դրանով էլ բացատրվում է, թե ինչու երկու մութասարիֆի արագ հաջորդականությամբ հեռացրին Մարդինից²⁷:

Բացահայտ որդեգրված քաղաքականությունը հետևյալն էր.

1. Տեղահանել կասկածյալներին:

մասին մանրամասն տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօրին աղէկալի 1915 չլարիին* (Նիւ Եորք, 1985), 276-278:

26 [1915-ի] մայիսին Դիարբեքիրում բացահայտվել է հայկական զինապահեստ, ինչը կարծես թե հնարավորություն է տվել մեղքը բարդել բոլորի և յուրաքանչյուրի վրա (ծանոթագրությունը հեղինակին է – Ռ. Թ.):

27 Խոսքը վերը հիշատակված Շաֆիկ բեյի և Հիւմի բեյի մասին է, որոնք դժկամություն էին դրսևորել հայերի բնաջնջման ծրագիրը ի կատար ածելու հարցում:

2. Հարկադիր աշխատանքի հանձնել յուրաքանչյուրին, ում մոտ զենք է հայտնաբերվել:

3. Մահապատժի ենթարկել յուրաքանչյուրին, ով դավաճանության մեջ է մեղադրվել:

Գործնականում, սակայն, գործի դրվեց գաղտնի ընթացակարգ՝ հետևյալ հանգամանքներում վերը նշված բոլոր երեք խմբերի կոտորածը կազմակերպելու նպատակով. -

Կազմավորվեցին տեղահանվածների շարասյուներ, որոնց հրամայվեց ժամերի ընթացքում պատրաստվել անհայտ ուղղությամբ մեկնելու: Արդեն հիշատակված տեղի ոստիկանության ուղեկցությամբ մեկ կամ մի քանի հանգրվան անցնելուց հետո տեղահանվածները շրջապատվում էին տեղացի քրդերով: Այնուհետև շարասյուներ ղեկավարող սպան կարդում էր մահապատժի վճիռը, որ ենթադրաբար սուլթանն էր ստորագրել, և ընտրված զոհերին առաջարկում հավատարացության գնով փրկել իրենց կյանքը: Մերժում ստանալուց հետո, ինչը տեղի էր ունենում դեպքերի մեծ մասի ժամանակ, շարասյուներ բաժանվում էր հարյուր հոգուց բաղկացած խմբերի և տարվում այնտեղ, որտեղ կային ջրհորներ կամ նախօրոք փորված խոր փոսեր: Այնուհետև նրանց ստիպում էին մերկանալ, և դրան հաջորդում էր ընդհանուր կոտորածը, որին մասնակցում էին տեղացի քրդերը: Հրացան քիչ էր օգտագործվում. գերադասվում էին սուրը և քրդական դաշույնը: Շատ դեպքերում զոհերը թալանվում էին առանց ողորմության հարված²⁸ ստանալու:

Կարծես թե այդպիսին էր պաշտոնապես հաստատված և քիչ թե շատ պահպանված ընթացակարգը հունիսի առաջին մի քանի ջարդերի դեպքում: Շուտով սակայն ի հայտ եկան հետևյալ փոփոխությունները: Տեղացի պաշտոնյաները նախքան շարասյուն ուղարկելը սկսեցին հնարավորինս քամել իրենց զոհերին՝ [մեկնելը] հետաձգելու հույսով²⁹: Մեկնումի օրը անվտանգությունն ապահովելու խոստումների և անգամ առերես քաղաքավարի վերաբերմունք դրսևորելու միջոցով զոհերին մղում էին իրենց հետ վերցնել և իրենց վրա կրել հնարավորինս շատ թանկարժեք քարեր ու զարդեր, որոնք հանվում էին նրանցից քաղաքից հեռանալուց անմիջապես հետո: Մահվան վճիռը կարդալու ձևականությունը վերացվեց, քանի որ մինչ տեղի Գողգոթա հասնելը արդեն իսկ հավաքվում էին քրդերի խմբեր, և սկսվում էր հանապադաստից կոտորած, որին մասնակցում էր ոստիկանական ուղեկցորդ պահակախումբը: Կանանց մերկացնում և բռնաբարում էին: Երիտասարդ [աղջիկներից] ոմանք խնայվում էին՝ մուսուլմանների հարեմները զարդարելու կամ որպես ստրուկ վաճառվելու համար: Արարքների հետքերը բողբոջվելու հրահանգը անտեսվում էր: Մարմինները թողնվում էին մերկ, բաց երկնքի տակ. հետաքրքիր մանրամասնություն՝ տղամարդիկ՝ փորի, կանայք՝ մեջքի վրա:

28 Բնագրում օգտագործվել է ֆրանսերեն դարձվածք՝ *coup de grace*:

29 Հաղորդվում է, որ Մարդիկի ոստիկանապետ Մամդուկ բեյը 50000 թուրքական ոսկի է վաստակել նման եղանակով: Նա այժմ Դիարբեքիրում է և քրդական ազգային շարժման քրդի տակ մղի հակաբրիտանական քարոզչությամբ է զբաղվում: Նա անշուշտ պետք է պատասխանատվության ենթարկվի (*Ծանոթագրությունը հեղինակինն է - Ռ. Թ.*):

Շատ դժվար է հասկանալ այս կանոնավոր հրահանգների հեղինակների մտածելակերպը կամ հետևել նրանց տրամաբանությանը: Կարելի է միայն ենթադրել, որ դրանք գործադրվել են՝ հետևյալ նկատառումներից ելնելով, որքան էլ որ դրանցից մի քանիսը մանկամիտ թվան: Նրանք հույս ունեին խթան տալ ջիհադին՝ բորբոքելով մարդկանց մեջ արյան ծարավը, և նրանք հաշվարկում էին, որ երբ գնդակը սկսի գլորվել նշված ուղղությամբ, վարակը կտարածվի և մուսուլման բնակչությունը ինքնաբերաբար կշարունակի կոտորածը մինչև քրիստոնյա բնակչությունն ամբողջությամբ դադարի գոյություն ունենալ: Ավելին, թվում է, թե թուրքերը ցանկանում էին օրինականության շղարշ հաղորդել սկսված կոտորածներին՝ հույսեր փայփայելով դրանց շարունակության պատասխանատվությունը գցել ցեղերի կրոնական մոլեգնության և հայկական դավաճանությամբ գրգռված ազգային զգացմունքների վրա: Նաև ենթադրություն է առաջ քաշվել, որ, ջարդերը քաղաքներից հեռու մեկուսի վայրերում իրականացնելով, ժամանակ շահելու հնարավորություն էր ստեղծվում, մինչև դրանց մասին լուրերը տարածվեն, և իրենց հերթին սպասող մյուս հայերը չէին ցրվի գլուղերով մեկ կամ չէին մղվի ակտիվ դիմադրության: Բացի դրանից՝ կպահանջվեր ավելի երկար ժամանակ, որպեսզի նորությունները հասնեին արտաքին աշխարհ և հատկապես Ամերիկա:

Կոտորածների հատկանշական առանձնահատկությունը, որը վեր է բոլոր կասկածներից, այն է, որ դրանք հմուտ և կանոնավոր կերպով կազմակերպվել են Կ.Պոլսից, և տեղացի տգետ մուսուլմանը լոկ օգտագործվել է որպես գործիք: Այդ նա չէ, որ պետք է պատժվի, այլ բարձրաստիճան թուրքը, ինչպես նաև տեղացի թուրքը, որը հանդես էր գալիս որպես պատրաստակամ կամակատար՝ լցնելով սեփական գրպանները:

Ստորև ներկայացված են Դիարբեքիրի նահանգում կոտորածների հիմնական դրվագները. նաև ներառված է մի քանի դրվագ, որ տեղի է ունեցել նահանգին հարակից շրջաններում:

Նշենք, որ զոհերի ընդհանուր թիվը հետևյալ կերպ է բաշխվում.

Հակոբեկյան ասորիներ	96000
Հայեր (առաքելական)	45000
Բողոքականներ	1200
Հայ կաթոլիկներ	6000
Ասորի կաթոլիկներ	2000
Քաղդեացիներ	7000
Ընդամենը	157 000

ՀՈՒՆԻՍ

Ամսաթիվ	Բնակավայր	Ձոհեր	Նշումներ
1	Բալու	1200	Զինվորներ, որոնք վերջին 7 ամիսն աշխատում էին մայրուղու շինարարության վրա:
1	Ավին	200	Գյուղացիներ:
1	Դիարբեքիր	1060	Սպանվել են Տիգրիսի գետափին՝ ներառյալ քաղաքի բոլոր երեւի մարդիկ:
2	Բեխաիր ³⁰	100	Գյուղացիներ:
9	Սդերդ	...	Ամբողջ քրիստոնյա բնակչությունը՝ ներառյալ քաղղեացի մի եպիսկոպոս:
10	Կելեթ ³¹	2000	Մարդիկնից ութ ժամ հեռավորության վրա: Ամբողջ գյուղը ոչնչացվել է:
11	Բաֆայա ³²	600	Մարդիկնից յոթ ժամ հեռավորության վրա: Ամբողջ գյուղը ոչնչացվել է:
11	Շեյխան ³³	405	Մարդիկնից վեց ժամ հեռավորության վրա: Առաջին շարապայունը բաժանվել է փոքր մասերի, մերկացվել և սրախողխող արվել:
11	Բիթլիս	1	Հայ կաթոլիկ եպիսկոպոս մոնսինյոր Հակոբ Թովուզյան ³⁴ :
12	Խարբերդ	1	Հայ կաթոլիկ եպիսկոպոս մոնսինյոր Ստեփան Իսրայելյան ³⁵ :
12	Մասարթ ³⁶	80	Մարդիկնից վեց ժամ հեռավորության վրա: Գյուղացիներ:

30 Բնագրում՝ Bekhaire: Բնակավայր Մարդիկնի գավառակում՝ Մարդիկնից մոտ 4 կմ հարավ: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է 200 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 208):

31 Բնագրում՝ Kellek: Բնակավայր Սավուրի գավառակում, Մարդիկնից մոտ 60 կմ հյուսիս-արևելք: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է 2500 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 247, 424):

32 Բնագրում՝ Bafarva: Բնակավայր Սավուրի գավառակում, Մարդիկնից մոտ 25 կմ հյուսիս-արևելք: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է 500 ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 424):

33 Բնագրում՝ Chaikhane: Քրդաբնակ գյուղ Սավուրի գավառակում:

34 Բիթլիսի և Մուշի կաթոլիկ հայերի կրոնական առաջնորդ: Մանրամասն տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 76:

35 Խարբերդի կաթոլիկ հայերի առաջնորդ: Մանրամասն տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 222:

36 Բնագրում՝ Maisartie: Բնակավայր Մարդիկնի գավառակում, Մարդիկնից մոտ 20 կմ հյուսիս-արևելք: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 300 ասորի բնակչություն (Gaunt, *Massacres*,

Ամսաթիվ	Բնակավայր	Ձոռներ	Նշումներ
14	Դարա ³⁷	30	Մարդինից ութ ժամ հեռավորության վրա:
15	Շելխան	75	Երկրորդ շարապյունը Մարդինից: Այն բանից հետո, երբ կոտորածի ենթարկվեց շարապյան մեկ երրորդը, Կ.Պոլսից կոտորածը դադարեցնելու հրաման եկավ:
16	Մանսուրիե ³⁸	95	Մարդինից կես ժամ հեռավորության վրա: Գյուղացիներ:
17	Բենեբիլ ³⁹	70	Մարդինից երեք ժամ հեռավորության վրա: Գյուղացիներ:
19	Քալաթ Մարա ⁴⁰	60	Մարդինից մեկ ժամ հեռավորության վրա: Գյուղացիներ:
20	Դիարբեքիրի և Մարդինի միջև	12000	Հայաստանի հյուսիսային շրջաններից Միջագետք արտրված հայեր:
20	Մալաթիա	1	Հայ կաթոլիկ եպիսկոպոս մոնսինյոր Լևոն Քեչեճյան ⁴¹ :
25	Իբրահիմիե ⁴²	4000	Մարդինից ինը ժամ հեռավորության վրա: Գյուղացիներ:

Resistance, Protectors, 238):

37 Բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 23 կմ հարավ-արևելք: Հայոց ցեղասպանության նախօրյակին ունեցել է մոտ 150 շունչ կաթոլիկ հայ և 120 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 214):

38 Բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 4 կմ հյուսիս: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 400 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 237, 424):

39 Բնագրում՝ Banabili: Բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 10 արևելք: Հայոց ցեղասպանության նախօրյակին ունեցել է մոտ 300 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 208, 424):

40 Բնագրում՝ Kalaat Mara: Բնակավայր Մարդինի գավառակում, Մարդինից մոտ 2 կմ արևելք: Հայոց ցեղասպանության նախօրյակին ունեցել է մոտ 800 շունչ ասորի բնակչություն:

41 Սեբաստիայի հայ կաթոլիկների առաջնորդ (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 110): Բնագրում անունն աղավաղված է՝ Michel Kaciadu, ուղղել ենք ըստ Հիացինտ Սիմոնի տեղեկագրի (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 438):

42 Բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 20 կմ հարավ-արևմուտք: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 400 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 212, 424):

ՀՈՒԼԻՍ

Ամսաթիվ	Բնակավայր	Ձոհեր	Նշումներ
1	Թել Արմեն ⁴³	1500	Ամբողջ գյուղն արմատախիլ է արվել: Մարդինից չորս ժամ հեռավորության վրա:
3	Գուլիե ⁴⁴	3200	Մարդինից մեկ ժամ հեռավորության վրա: Մութեսարիֆը դիտում և ծափահարում էր իր առանձնատուն-նստավայրի պատշգամբից:
11	Դարա	7000	Էրզրումից ⁴⁵ Ռաս ուլ Այն ուղևորվող աքսորյալներ:
13	Դարա	500	Դիարբեքիրի ունևոր կանայք: Կոտորվելուց առաջ նրանք մերկացվել և բռնաբարվել են:
14	Մարդին	3	Ոստիկանության կազմակերպած ոգելից խմիչքների գաղտնի արտադրության մասին իմացող անհարմար վկաներ:
17	Աբդուլ Իմամ ⁴⁶	250	Մարդինից յոթ ժամ հեռավորության վրա: Մարդինի ունևոր ընտանիքների կանայք, ինչպես նաև 90-ամյա մի քահանա:
19	Միդիաթ ⁴⁷	7000	Ավանի բնակիչներ, ինչպես նաև Մարդինի յոթանասուն երեւելիներից բաղկացած խումբ:
20	Սավուր ⁴⁸	650	Ամբողջ քրիստոնյա բնակչությունը:

43 Բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 20 կմ հարավ-արևմուտք: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 6000 շունչ զուտ կաթոլիկ հայ բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 262, 424):

44 Բնագրում՝ Gullieh: Բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 7 կմ հարավ: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 1500 շունչ ասորի բնակչություն (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 221-222, 424):

45 Բնագրում աղավաղված՝ Erxerour, ուղղել ենք ըստ Հիացինտ Սիմոնի տեղեկագրի (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 438):

46 Քրդաբնակ գյուղ Մարդինի գավառակում:

47 Ավան և համանուն գավառակ Մարդինի գավառում: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 1150 շունչ հայ և 4000 շունչ ասորի բնակչություն (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան*, 275; Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 427):

48 Ավան և համանուն գավառակ Մարդինի գավառում: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 780 շունչ հայ և 300 շունչ ասորի բնակչություն (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան*, 275; Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 257):

Ամսաթիվ	Բնակավայր	Զոհեր	Նշումներ
24	Սավուր	290	Սղերդից արքայազն կանայք: Նրանք ենթարկվել են տեղի ցեղերի հարձակմանը և քարկոծվելով սպանվել են:
26	Թել Աֆար ⁴⁹	300	Մծբին - Մոսուլ ճանապարհի վրա: Մարդիկ հայ արքայազններ:
27	Մարդին	2	Բռնի ուժով մուսուլմանների հարեմ տարված երևելի հայ ընտանիքից երկու երիտասարդ աղջիկ: Նրանց մարմինները հայտնաբերվել են մի քանի օր անց քաղաքի կոյուղում:

ՕԳՈՍՏՈՍ

Ամսաթիվ	Բնակավայր	Զոհեր	Նշումներ
8	Ջեզիրե ⁵⁰	15 բնակավայր	Մոտ 15000 բնակչություն:
10	Կիկիե ⁵¹	390	Մարդիկ Ռաս ու Այն ուղևորվող 500 կանանց և երեխաների շարայուն: Կանայք զրկվել են իրենց հագուստից:
11	Դերիկ ⁵²	1000	Մարդիկ 10 ժամ հեռավորության վրա: Գյուղացիներ:
16	Մծբին ⁵³	800	Քրիստոնյա ողջ բնակչություն:

49 Բնակավայրը նույնականացնել չի հաջողվել: Հիացինտ Սիմոնի տեղեկագրում որպես կոտորածի վայր նշվում է Դարան (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 439):

50 Ավան և համանուն գավառակ Մարդինի գավառում: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 2700 շունչ հայ և 17800 շունչ ասորի բնակչություն (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 275; Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 426):

51 Քրդաբնակ բնակավայր Մարդինի գավառում՝ Մարդինից մոտ 9 ժամ (36 կմ) հեռավորության վրա (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 439):

52 Ավան և համանուն գավառակ Դիարբեքիրի գավառում: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 1800 շունչ հայ (ներառյալ գավառակի հայաբնակ գյուղերի բնակչությունը) և 500 շունչ ասորի բնակչություն (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 258; Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 423):

53 Ավան և համանուն գավառակ Մարդինի գավառում: Նախքան Հայոց ցեղասպանությունն ունեցել է մոտ 90 շունչ հայ և 1200 շունչ ասորի բնակչություն (Kevorkian, *The Armenian Genocide*, 276; Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 425):

Ամսաթիվ	Բնակավայր	Ձոռներ	Նշումներ
20	Ջեզիրե	6000	Մոտ 6000 քրիստոնյա ամբողջ բնակչությունը՝ ներառյալ երկու քաղղեացի եպիսկոպոս:
21	Ուրֆա	465	Զինվորներ:
22	Մարդին	500	Հակոբիկյան կանայք Սորից՝ կոտորված քաղաքի մատույցներում:
23	Սալախ ⁵⁴	300	Մարդինից չորս ժամ հեռավորության վրա: Մարդինից Ռ-աս ուլ Այն արքայական կանայք և երեխաներ՝ պահակախմբի մասնակցությամբ:
24	Մարդին	12	Ճանապարհի վրա աշխատող հայ զինվորներ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ամսաթիվ	Բնակավայր	Ձոռներ	Նշումներ
10	Դիարբեքիրի և Մարդինի միջև	8000	Խարբերդից և Էրզրումից արքայական 12000 կանանց և երեխաների շարասյուն:
14	Մծբին	4000	Վերոնշյալ շարասյան մնացորդը:
15	Մարդին և Հարին ⁵⁵	126	Մարդինից Մոսուլ արքայական կանայք ու երեխաներ:
16	Դիարբեքիր	1	Դիարբեքիրի կաթոլիկ արքեպիսկոպոսը, 67 տարեկան ⁵⁶ :
19	Ուրֆա	25000	Գործնականում ողջ քրիստոնյա բնակչությունը ⁵⁷ :

54 Քրդարնակ բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 4 ժամ (16 կմ) հեռավորության վրա (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 440):

55 Քրդարնակ բնակավայր Մարդինի գավառակում՝ Մարդինից մոտ 4 ժամ (16 կմ) հեռավորության վրա (տե՛ս Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 440):

56 Խոսքը Դիարբեքիրի կաթոլիկ հայ համայնքի առաջնորդ Ասդրեաս եպիսկոպոս Չելեքյանի մասին է (Թ-Էդդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության, 262-263*):

57 Մայր Նոյեմի համար որպես աղբյուր ծառայած Հիացինտ Սիմոնի տեղեկագրի համապատասխան հատվածն է. «Ուրֆայի ոմբակոծությունը: Քաղաքի ավերում, ավելի քան 25000 քրիստոնյայի կոտորած: Ձոռների թվում են երկու ասորի կաթոլիկ հոգևորականներ՝ Յուհաննա Կանդելեֆյոր և Եփրեմ Ռահվաին, ինչպես նաև ֆրանսիացի արքայալ Ռոբերտ Ժերմանը» (Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 440):

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ամսաթիվ	Բնակավայր	Զոհեր	Նշումներ
30	Դիարբեքիի մոտակայքում	1000	Հայ զինվորների երկու խումբ. մեկը բաղկացած վեց հարյուր, մյուսը՝ չորս հարյուր մարդուց:

ՄԱՐԴԻՆ, Ապրիլի 25, 1919

(Ստորագրված) Է. Նոյել, մայոր,
Հատուկ հանձնարարությամբ, Դիարբեքիի նահանգ

Մեծ Բրիտանիայի ազգային արխիվ, Ֆորին օֆիս, 141/806/2
UK National Archives, Foreign Office, 141/806/2

**Փաստաթուղթ 2. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
ԲԱՐՁՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԱՐԹՈՒՐ ՔԱԼԹՈՐՓԻ՝ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ԼՈՐԴ ՋՈՐՋ ՔԵՐՉՈՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ 1919 Թ.
ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ՆԱՄԱԿԸ**

Պատճեն համար 1124/M/1255

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԲԱՐՁՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ,
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
2 հուլիսի 1919

Իմ տեր,

պատիվ ունեմ զեկուցելու, որ երկարատև շրջագայության, թուրքական արձանագ-
րություններին հասանելիության և քրիստոնյա տարբեր համայնքների ղեկավարների
հետ հանդիպումներից հետո մայոր Նոյելը տալիս է Դիարբեքիի վիլայեթի նախա-
պատերազմյան և ներկայիս ազգաբնակչության հետևյալ գնահատականը.

	Նախքան պատերազմը	Ներկայումս
Քրդեր	750 000	600 000
Ասորիներ	70000	20000
Հայեր	120 000	20000
Քաղդեացիներ	11000	3000
Թուրքեր	3000	2500
Այլ (եզդիներ, չերքեզներ և հույներ)	10000	8000

Մայոր Նոյելը նաև նշում է, որ հայ բնակչության 75%-ը գտնվում է վիլայեթի հյուսի-
սային կեսում, սակայն փաստ է, որ անգամ պատերազմից առաջ բոլոր գավառներում
բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին քրդերը:

Պատիվ ունեմ (ստորագրություն) Ա. Քալթորփի,
Բարձր հանձնակատար

**Մեծ Բրիտանիայի ազգային արխիվ, Ֆորին օֆիս, 608/108/3
UK National Archives, Foreign Office, 608/108/3**

Copy

No.1124/M/1255

(105775)

109

16527
BRITISH HIGH COMMISSION
CONSTANTINOPLE.
29 JUL 19 AM
2nd July 1919.

My Lord:-

I have the honour to report that, as a result of an extended tour, access to Turkish records and meetings with heads of various Christian communities, Major Noel gives the following estimate of pre-war and present populations of Diarbekir vilayet:-

	<u>Pre-war</u>	<u>Present</u>
Kurds	750,000	600,000
Syrians	70,000	20,000
Armenians	120,000	20,000
Chaldeans	11,000	3,000
Turks	3,000	2,500
Miscellaneous (Yezidis, Circassians and Greeks)	10,000	8,000

Major Noel also states that 75% of Armenian population is found in the northern half of the vilayet but fact remains that there were in all districts even before the war an overwhelming preponderance of Kurds.

I have &c.,

(Signed) A. Calthorpe.

High Commissioner.

**BRITISH DIPLOMAT AND SPY MAJOR NOEL'S REPORT ON THE
EXTERMINATION OF ARMENIANS AND ASSYRIANS IN DIARBEEKIR PROVINCE
DURING THE ARMENIAN GENOCIDE**

Robert A. Tatoyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

This publication presents the report by Major Edward William Noel, British diplomat and spy, regarding the extermination of Armenians and Assyrians in Diarbekir province during the Armenian Genocide. The document, entitled “Christian Massacres of 1915 in Diarbekir Vilayat,” has been compiled in April, 1919 in the city of Mardin, where the author was on a fact-finding mission, so most of the massacre cases presented there refer to the mentioned locality.

Attached to Noel's report, as an appendix, we present the letter of Arthur Calthorpe, British High Commissioner in Constantinople, to British Foreign Minister Lord George Curzon, dated July 2, 1919, in which he transmits Major Noel's estimate of populations of Diarbekir vilayet before and after the First World War.

Major Noel has been characterized by researchers as “an expert on Kurdistan and the Kurds”, and as “the main British agent in Kurdistan, both in Anatolia and in Iraq, from 1919 to 1922,” so these documents published in Armenian translation, as well as other papers related to his mission in 1919 are very remarkable from the point of view of studying the demography of the southern regions of Western Armenia, the course of the Armenian Genocide, as well as of the history of Armenian-Kurdish, Armenian-Turkish, Turkish-Kurdish relationships after the First World War.

Key words: Armenian Genocide, Ottoman Empire, Diarbekir province, Mardin, Great Britain, British intelligence, British diplomacy, Armenian question, Kurds.

**ДОНЕСЕНИЕ БРИТАНСКОГО ДИПЛОМАТА И ШПИОНА МАЙОРА НОЭЛЯ
ОБ ИСТРЕБЛЕНИИ АРМЯН И АССИРИЙЦЕВ В ПРОВИНЦИИ ДИАРБЕКИР
ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА АРМЯН**

Роберт А. Татоян

Фонд “Музей-институт Геноцида армян”, Армения

РЕЗЮМЕ

В публикации представлено донесение британского дипломата и шпиона майора Эдварда Уильяма Ноэля об истреблении армян и ассирийцев в провинции Диярбекир во время Геноцида армян. Документ, озаглавленный “Резня христиан в вилайете Диярбекир в 1915-ом”, был составлен в апреле 1919 г. в городе Мардин, где автор находился с миссией по сбору фактов, поэтому большинство описываемых случаев массовых убийств относится к указанной местности.

В качестве приложения к донесению Ноэля прилагаем письмо Артура Калторпа, британского верховного комиссара в Константинополе, британскому министру иностранных дел лорду Джорджу Керзону от 2 июля 1919 года, в котором он представляет оценку майора Ноэля численности населения вилайета Диярбекир до и после Первой мировой войны.

Майор Ноэль характеризуется исследователями как “эксперт по Курдистану и курдам”, а также как “главный британский агент Великобритании как в Анатолийском, так и в Иракском Курдистане с 1919 по 1922 годы”, поэтому данные документы, публикуемые в армянском переводе, а также другие материалы, связанные с его миссией в 1919 году, примечательны с точки зрения изучения демографии южных районов Западной Армении, хода Геноцида армян, а также истории армяно-курдских, армяно-турецких, турецко-курдских взаимоотношений после Первой мировой войны.

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, провинция Диарбекир, Мардин, Великобритания, британская разведка, британская дипломатия, Армянский вопрос, курды.

REFERENCES

«Բաղդաստական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մէջ տեղահանությունէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 Ապրիլ 1921)» [Comparative Statistics of the Armenian population in the Ottoman Empire before and after the deportations (Compiled on April 1, 1921)], T'eodik. Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի [Calendar for Everyone 16]. Constantinople: M. Hovakimyan Publishing house, 1922: 261-265.

Kemal, Mustafa. Путь новой Турции 1919-1927. Т. 1. Первые шаги национально-освободительного движения, 1919 [The Way of New Turkey. Vol 1. First Steps of National-Liberation Movement, 1919]. Moscow: State Publishing House “Litizdat”, 1929.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Ռոբերտ Ա. Թատոյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. փոստի հասցե՝ r.tatoyan@genocide-museum.am

Robert A. Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide source studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian Genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@genocide-museum.am

Роберт А. Татоян, канд. ист. наук, старший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян Фонда «Музей-институт Геноцида армян».

Область исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@genocide-museum.am

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Դավիթ Վ. Գասպարյան

ՀՀ ԳԱԱ պաշտոնական ինստիտուտ, Հայաստան

Հայոց ցեղասպանությանը՝ սկսած 1915 թվականից՝ հենց Եղեռնի զոհ գրողներից, մինչև այսօր, հսկայական գեղարվեստական գրականություն է նվիրված: Գեղարվեստական գրականությունն ի սկզբանե պայքարել է ցեղասպանության դեմ՝ նախ և առաջ բացահայտելով դրա բուն էությունը, որը հայրենիքների, քաղաքակրթությունների, լեզուների, ազգությունների, մեծ հաշվով՝ մարդու և ամեն տեսակի մարդկային ոչնչացումն է:

Սույն հոդվածում նյութը ներկայացվում է երեք տեսանկյունից՝ նկատի ունենալով՝ ա. խորհրդային առաջին տասնամյակները, բ. ցեղասպանության հետևանքով հայրենիքից հեռացած և օտարագիր դարձած հայ գրողների վերադարձը իրենց արմատներին, գ. օտար՝ այս դեպքում թուրք գրողի դիրքորոշումը ներսից:

Բանալի բառեր՝ Ցեղասպանություն, Հայաստան, հայոց պատմություն, հայ գրականություն, հայ ժողովուրդ, մարդու ճակատագիր, փաստ, հիշողություն, հեղինակ, Եղիշեն Զարենց, Մայքլ Առլեն, Փիթեր Բալաքյան, Քեմալ Յալչըն:

Հոդվածը ներկայացվել է՝ 02.11.2021: Ընդունվել է տպագրության՝ 10.05.2022:

The article was submitted on 02.11.2021 and accepted for publication on 10.05.2022.

Статья поступила 02.11.2021 и была принята к публикации 10.05.2022.

Ինչպես հղել՝ Դավիթ Վ. Գասպարյան, «Ցեղասպանության արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 1 (2022), 84-96:

How to cite: Davit V. Gasparyan, “Reflection of the Genocide in the Fiction,” *Ts’eghaspanagitakan handes* 10, no. 1 (2022): 84-96.

Как сослаться: Давид В. Гаспарян, “Отображение Геноцида в художественной литературе,” *Цехаспанагитакан андес* 10, no. 1 (2022): 84-96.

Ներածություն

Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարասկզբի շատ գրողներ՝ Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Արտաշես Հարությունյան, Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան, Եղիշեն Զարենց և ուրիշներ, վերածում են գեղարվեստական գրականության: Հսկայական է այդ երկերի թիվը: Արևմտահայ գրողներից շատերը դառնում են Եղեռնի զոհ: Նրանց ավանդույթները շարունակող սփյուռքահայ գրականությունը տարիների ընթացքում գրական հնարավոր բոլոր ձևերով ստեղծում է հարուստ վաստակ, որի հիմքում միմիայն վավերական պատմություններ են: Համանման գործեր են ստեղծում նաև հենց Եղեռնի խորշակից հեռացած և օտարագիր դարձած բազմաթիվ հայ գրողներ:

Այս հսկայական նյութը կներկայացնենք երեք տեսանկյունից՝ նկատի ունենալով. ա. խորհրդային առաջին տասնամյակները,

բ. հայոց լեզվից հեռացած օտարազիր հայ գրողներին,
գ. թուրք գրողներից մի քանիսի դիրքորոշումը:

Ա. Խորհրդային առաջին տասնամյակներ

1915 թ. կամավորների ջոկատում *Չարենցը* հասնում է մինչև Վան, տեսնում Յեղասպանության արիավիրքները, վերադառնում ու գրում «Դանթեական առասպել» (1915-1916), «Վահագն» (1916), «Ազգային երազ» («Պոեմ երգիծական և ողբերգական») (1917) պոեմները, նույն ակունքից սերված այլևայլ բանաստեղծություններ: Ասելիքն ասում է, վերաբերմունքը ճշտում, բայց ցավը չի անցնում, և նա խորհրդային առաջին տարիներին գնում է սխրանքի ու ստեղծում «Երկիր Նայիրի» վեպը¹:

Վեպում ծննդավայր Կարսի նախատիպային կերպարներով, առօրյայով, կուսակցական գործիչների ճատերով ու խոստումներով հյուսում է 1914-1920 թթ. հայոց պատմությունը: Սկիզբն Առաջին համաշխարհային պատերազմն է՝ նոր սպասումներով, անգամ ոգևորությամբ, վերջը՝ Կարսի ամոթալի անկումը՝ կործանարար պարտությամբ: Չարենցն այս վեպը գրում է անմիջական տաք հետքերով: Այն տարիներին, երբ ինտերնացիոնալիզմի գաղափարներով տոգորված ԽՍՀՄ-ում պաշտոնապես արգելվում էր խոսել Յեղասպանության մասին, նա իրատեսորեն պատկերում է մոտակա անցյալը:

Իսկ նրանք, ովքեր փորձում են ետ նայել՝ Գուրգեն Մահարին, Վահան Թոթովենցը, Ակսել Բակունցը, հռչակվում են նացիոնալիստ և դատապարտվում կրկնակի աքսորի կամ գնդակահարության: Գրական ճիշտ հայացքի համար նրանք կյանքով են հատուցում՝ Մահարին՝ «Մանկություն» և «Պատանեկություն» (1929-1930), Թոթովենցը՝ «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (1933) վիպակների, Բակունցը՝ «Ծիրանի փողը» (1933) պատմվածքի համար:

Նացիոնալիզմի մեղադրանքով քաղաքական հալածանքը շատերին էր ստիպում ոչ միայն լռել, այլև գրել անցյալը ուրացող գործեր, ինչպես Նաիրի Չարյանի «Խուճապ» (1922) բանաստեղծությունը՝ նվիրված ծննդավայր Խառակոնիս գյուղին, ինչպես Հրաչյա Քոչարի մեղադրանքը Խաչիկ Դաշտենցի հասցեին, ըստ որի՝ «Նացիոնալիստ տականքների հոգեորդին՝ Խաչիկ Դաշտենցը մեկն էր այն երիտասարդ գրողներից, որոնց վրա ոչ պատահական կերպով նացիոնալիստ գրչակները (սկստի ունի Չարենցին ու Բակունցին՝ Դ. Գ.) դրել են իրենց մատը: <...> Նա գովերգում է Արագածն ու Արարատը, որոնց ստվերները դրոշ են երիտասարդ նացիոնալիստի համար»²: Այսպես էր, որովհետև Աթաթուրք-Լենին դաշինքն անցնում էր Հայաստանի սրտի միջով, այլ կերպ ասած՝ Եդեռնը շարունակվում էր:

Իսկ ինչ էին գրում հայ գրականագետները խորհրդայնացումից անմիջապես հետո, Չարենցի վեպի ստեղծման օրերին: Գրում էին. «Բուրժուական և մանր բուրժուական գրականության բնորոշիչ հատկանիշը հենց ազգայնամոլությունն է որպես իշխող

1 Գրել է 1921-1924 թթ., 1922-1925 թթ. տպագրել «Նորք» հանդեսում, 1926 թ.՝ առանձին գրքով՝ Երևանում՝ հայերեն, Մոսկվայում՝ ռուսերեն:

2 Հրաչյա Քոչար, «Նացիոնալիստ տականքների հոգեորդին», *Գրական թերթ*, 10 մարտ 1937, թիվ 6:

աշխարհայացք: <...> Այդ մարտնչող նացիոնալիզմի կարկառուն դեմքերը գեղարվեստական գրականության մեջ Րաֆֆին է և Գամառ Քաթիպան»³:

Այս պայմաններում Չարենցի համար ամենևին հեշտ չէր ճշմարտությունն ասել մինչև վերջ, բայց գեղարվեստական վարպետության հնարավոր միջոցներով և հատկապես երգիծանքի շղարշով պարուրված՝ ասում է: Հիշենք վերջին տեսարանը, երբ Կարսի քաղաքագլուխ Մազուրի Համոյին թուրքերը կախում են Կարսի բերդում և գլխավերևում տախտակ փակցնում՝ այսպիսի գրությամբ՝ «Մ. Հ. Ա. Ն»⁴, որ նշանակում է՝ Մազուրի Համո արքա Նայիրի. այդպես՝ խաչված Քրիստոսի գլխավերևում էին տախտակի վրա գրել՝ «Հ. Ն. Ա. Հ», որ նշանակում է՝ Հիսուս Նազովրեցի արքա հրեից: Իբր ծաղրում էին, բայց ժամանակի մեջ ծաղրվածները նրանք էին, ովքեր չէին հավատում Քրիստոսի հավատի հաղթանակին և Մազուրի Համոյի հայրենասիրությանը: Այստեղ է իր հերոսին թեկուզև գրոտեսկով, բայց արժանիորեն ներկայացնելու գրողի վարպետությունը:

Եվ ահա Չարենցի վեպն ընդունվում է խանդավառությամբ, արժանանում հայերեն (1926, 1934) ու ռուսերեն (1926, 1933, 1935՝ երկու անգամ) մի քանի հրատարակության ու նպաստավոր գրախոսությունների: Այդպես, որովհետև տեսնում են վեպի արտաքին շերտը, այն, ինչ պետք էր ժամանակի համար՝ ազգային իդեալների ու հերոսների ծաղր, մինչդեռ խորքում ազգային ողբերգությունն էր, բոլշևիկների հրահրած դասավրությամբ պայմանավորված պարտության ամոթը:

Ո՞րն էր Չարենցին առաջնորդող բուն նպատակը: Նրա գերխնդիրը *մնացածը և մնացածին փրկելն էր*, Խորհրդային Հայաստանում մնացողաց սերունդին հոգեբանորեն կյանքի կոչելը, որովհետև հայի պատմական ճակատագրի առջև ոչ միայն թուրքն էր, այլև ներքին քաղաքական փոփոխությանը՝ Առաջին Հանրապետությունից խորհրդային վարչակարգի անցմանը հոգեբանորեն հարմարվելու անհրաժեշտությունը: Եվ պատահական չէ, որ վեպի երկրորդ գլուխը սկսվում է դագաղի պատկերով: Գրում է. «Սրտի բռն տրոփով սկսեցի գրել նայիրյան այդ քաղաքի պատմությունը, բայց հիմա, երբ ուզում եմ անցնել հետագա օրերին ու դեպքերին, պատկերել նրա օրերն ու վաստակները – դառն, ծանր մի մորմոք թանձրանում է սրտիս, ուտում է սիրտս»⁵:

Հաջորդում է այլասացությունն այն մասին, թե ինչպես մի անգամ տեսել է փողոցի մեջտեղով անձրևի ու ցեխաջրերի միջով գնացող գավառական վարժապետի կամ փոստ-հեռագրային ցրիչի արտաքինով մի մարդու, որ սիրած, հարազատ հանգուցյալի համար իրենից շատ ավելի ծանր ու մեծ մի դեղնավուն դագաղ է գլխին դրած տանելիս եղել: Հաջորդում է հեղինակի ողբերգական անդրադարձը. «Այդպես էլ ես, ընթերցող, ճիշտ այդ վարժապետի նման, – ո՞ր եմ գնում: Ինչո՞ւ եմ հպել, բայց ոչ թե ողնաշարիս, այլ գանգիս ուղեղին դագաղանման այն բեռը, երբ ուզում եմ տեղ հասցնեմ... ո՞ր: Եվ միթե այնտեղ, տքնությանս վերջում, որպես նվիրական սիրելի մի մեռել – չպիտի պատկերանա ինձ երկիրը Նայիրի, որին դամբանելու համար տանում եմ ահա ես խոհերիս տողաշար դագաղը – տանում եմ կամքիս հակառակ, որովհետև, այո, հար-

3 ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 216, թ. 41:

4 Եղիշե Չարենց, *Երկերի ժողովածու*, հ. 5 (Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1966), 270:

5 Նույն տեղում, 77:

կավոր է տանել: Չէ՞ որ, այո՛ – թաղել է հարկավոր բոլոր մեռելներին, որքան էլ նրանք սիրելի ու հարազատ լինեն, չէ՞ որ, միննույն է, հակառակ դեպքում կքայքայվեն նոքա գազրելի և անտաքույր, այնպես որ անգամ սիրահարը կզգվի պաշտելի աճյունից»⁶:

Սա պարտության ողբերգության գույժն է՝ նայիրյան հույզերի փուլումը, որից հետո դեռ պետք է ապրել և համակերպվել դառը իրականությանը. թանկ հարազատն այլևս չկա, մեռել է, և նրան պետք է հուղարկավորել: Հոգեբանորեն մահացու ծանր դժվարություններ հաղթահարելու ճանապարհով Չարենցը ձեռքը մեկնում է՝ ցավակցելու ապրողներին, բայց նաև նրանց սատարելու և գոնե այդքանով փրկելու մեծ հույսի վերջին տրոփած հանգրվանը: Չմոռանանք՝ այդպես էր ավարտվում նաև «Դանթեական առասպել» պոեմը. ահա վերջին տողերը.

... Ու պետք է քայլել ու քայլել համառ՝
Ապրելու հսկա տենչը բեռ արած...⁷:

Խորհրդային գրաքննության գաղափարական արգելանքը Ցեղասպանության գեղարվեստական պատկերման վրա մնում է մինչև 1950-ականների կեսերը: Դրանից հետո ճանապարհը բացվում է՝ ասպարեզ հանելով բազմաթիվ երկեր, որոնք գրվել էին նաև այդ մութ տարիներին և մնացել անտիպ: Այդպիսին է Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեական» պոեմը (սկսել է գրել դեռևս 1940 թվականից. տպագրվել է 1990-ին): Մյուսներից կառանձնացնեմ Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն» (1959), «Եռաձայն պատարագ» (1969) պոեմները, Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» (1966) և Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» (1979) վիպասերը, Մուշեղ Գալշյանի «Մարտի սարի ամպերը» (1980) պատմվածաշարը: Սփյուռքում ստեղծված բազմաթիվ գործերից հիշատակության արժանի են Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» (Փարիզ, 1929), Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» (Բոստոն, 1943) վեպերը և վերջինիս «Տարագոմի հարսը» (Բոստոն, 1930) պոեմը:

Բ. Հայոց լեզվից հեռացած օտարազիր հայ գրողներ

Ցեղասպանությունն իրենով էր թելադրում հայության առանձին բեկորների հեռացումն ու աստիճանական ուժացումը, որոնք պայմանավորում էին օտարացած գրողների առկայություն՝ լեզվով, միջավայրով. նրանք ստեղծում էին իրենց յուրահատուկ գրականությունը: Այս գրողներին հիշատակենք իրենց հիմնական գործերով՝ Վիլյամ Սարոյան («Հայը և հայը», «Մարդկային կատակերգություն», «Յոթանասուն հազար ասորի», «Սպիտակ ձիու ամառը» և բազմաթիվ այլ պատմվածքներ), Լևոն-Ջավեն Սյուրմելյան («Ձեզ եմ դիմում, տիկիներ և պարոններ»), Դավիթ Խրդյան («Ճանապարհ տնից»), Փիթեր Սուրյան («Սպասումի մեկ դար», «Դարպաս»), Փիթեր Նաջարյան («Վերջին հայը»), Նենսի Գրիգորյան («Ջաբել»), Վահե Քաչա («Մի դաշտյն այս պարտեզի մեջ»), Աշոտ Մալաքյան – Անրի Վերնոյ («Մայրիկ»), Դայանա

6 Նույն տեղում, 78-79:

7 Եղիշե Չարենց, *Երկերի ժողովածու*, հ. 2 (Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963), 36:

Տեր-Հովհաննիսյան (բանաստեղծություններ), Մերջրի Հուսեփյան (պատմվածքներ, «Հմյուտնիայի դեպքը» հետազոտություն), Մայքլ Առլեն Կրտսեր («Դեպի Արարատ»), Փիթեր Բալաքյան («Ճակատագրի սև շունը»), Մարի-Անտուանետ Վարդենի Արգումանյան («Աստվածամոր նրբանցքը»), Մարսելա Փոլեյն-Վարտնարյան («Աշխարհի եզրը»), Սևդա Սևան («Ռոդոստո, Ռոդոստո»), Վարուժան Ոսկանյան («Շշուկների մատյան»), Քրիս Բոհջալյան («Ավագի ամրոցի աղջիկները»), Մելինե Թուման («Եղել է, չի եղել»), Մարգարեթ Աճեմյան («Թակոց դռանը»), Մարկ Մուսթյան («Ժանդարմը») և ուրիշներ: Ավելացնենք նաև Զարեհ Սուրյանին, որն արժանացել է Սարոյանի գնահատությանը: Այս ամբողջից կառանձնացնեմ անգլիագիր երկու հեղինակի՝ Մայքլ Առլեն Կրտսերին և Փիթեր Բալաքյանին:

Մայքլ Առլեն Կրտսերը որդին է անգլիագիր արձակագիր *Մայքլ Առլենի* (ավագանի անունը՝ Տիգրան Գույումճյան (1897-1956)): Նա համաշխարհային համբավի է հասնում «Կանաչ գլխարկը» (1924) վեպով: Սարոյանի հետ բանավեճի մեջ էր. Սարոյանը նրան մեղադրում էր հայությունից հեռանալու և իր ստեղծագործությամբ ամբողջովին անգլիական արիստոկրատիային նվիրվելու համար⁸:

Մեծահամբավ Մայքլ Առլենը հույն կնոջից ծնված որդուն՝ Մայքլ Առլեն Կրտսերին, այնպես է դաստիարակում, որ վերջինս չիմանա անգամ իր հայկական ծագման մասին: Եվ երբ մի անգամ հայրն այցելում է գիշերօթիկ դպրոցում սովորող որդուն, և որդին որպես գաղտնիք հայտնում է, թե ինքն իմացել է, որ ազգությամբ հայ է, այդ օրը դառնում է հայր Մայքլ Առլենի կյանքի ամենասև օրերից մեկը: Այս մասին «Դեպի Արարատ» վավերապատում գրքում գրում է ինքը որդին և ավելացնում, որ հայրն իրեն մեծացրել է արևմտյան արժեքներով՝ խնամքով թաքցնելով ազգային ամեն հուշ ու հիշատակ, կտրելով հայկական միջավայրից ու ժառանգորդական հիշողությունից⁹:

ԱՄՆ-ի հայկական եկեղեցիներից մեկում բանախոսությանը հաջորդած սուրճի հրավերքի ընթացքում հայության հետ շփվելուց հետո, ահա, այսպես մեծացած որդու մեջ արթնանում է գլխավոր հարցը՝ իսկ ինչ է նշանակում հայ լինել: Եվ այդ հարցի պատասխանը գտնելու հույսով հասունանում է Հայաստան այցելելու պահանջը: Որոշում է ամերիկոսի տիկնոջ հետ մեկնել նախնիների երկիր: Այդ մտորումներով հանդիպում է Վիլյամ Սարոյանին և հարցնում՝ գնա՛լ, թե՛ ոչ: Սարոյանը լայնասիրտ ասում է՝ գնա՛, և ավելացնում. «Շատ վատ է, որ հայերեն չգիտես: Այդուհանդերձ, ապրելու ես որպես հայ: Բայց սքանչելի լեզու է, սքանչելի հնչյուններ: Իրենց երգերը գիտե՛ս: Հիմա կերգեմ քեզ համար»¹⁰:

Ամբողջ շարադրանքի ընթացքում որդի Առլենը վրեժ է լուծում հայր Առլենից, ասում՝ մենք օտար էինք իրար և մեր մեջ չխոսված բաներ կային: Հոր հանդեպ անգամ ատելություն է զգում և ավելացնում, որ նրա մահվան արարողությունն արվել է ոչ թե հայկական, այլ հունական եկեղեցում¹¹:

8 Դավիթ Գասպարյան, *Հայ գրականություն*, գիրք 2 (Երևան, Զանգակ-97, 2002), 397-401: Այդ բանավեճով է սկսվում նաև Վ. Սարոյանի «Յոթանասուն հազար ասորի» պատմվածքը: 704 էջ:

9 Մայքլ Առլեն Կրտսեր, *Դեպի Արարատ*, թարգմ.՝ Լ. Զիլֆուղարյան (Երևան, «Նաիրի», 2000), 236:

10 Նույն տեղում, 44:

11 Նույն տեղում, 10:

Կասկածները փարատելու նպատակով կարդում է հայոց պատմությանը վերաբերող գրականություն: Ինքնավերագտնումը գալիս է խորքից՝ հաղթահարելով հոր պատենշը և ուղեկցվում խորհրդածություններով. «Օ՛, հայեր: Որքան դժվար է հայ լինել», նույն է թե՛ հայ լինել նշանակում է «որոշ չափով խենթ լինել»¹²: Մտաբերում է իրենց տոհմի անցած հետագիծը՝ Անի – Կ.Պոլիս – Ռուսե – Լոնդոն – Նյու Յորք: Հայաստան ուղևորվելու սկզբում ևս որոշակի կասկածներ ու անտարբերություն ուղեկցում են նրան՝ անգամ Եղեռնի հուշարձանի անմար կրակի առջև կանգնած, երբ նրան ծաղիկներ են տալիս, բայց ինքը չգիտի՝ ո՞ր պետք է դնի դրանք և ինչո՞ւ:

Աստիճանաբար նրա մեջ արթնանում է հայը, և վերածվում հայրենիքի ոտնահարված արժանապատվությունը վերականգնելու ճիչի. նրան հատկապես ցնցում ու դարձի է բերում 1915 թ. Ցեղասպանության պատմությունը: Անգամ մտաբերում է Հիտլերի խոսքը. «Ո՛վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին»: Նորից, այս անգամ ինքնակամ, այցելում է Եղեռնի հուշարձան՝ արդեն լավ իմանալով, թե ինչն է ծաղիկների հետ նաև ինքը խոնարհվում: Հայկականության հանդեպ ունեցած նախկին խորշանքը փոխվում է գիտակցված ազգասիրության: Երևանից Ստամբուլ մեկնելուց հետո հետադարձ հայացք է գցում. Երևանում առնվազն հաստատ հողի վրա էր: Դա նշանակում է, որ այս մեծ աշխարհում մարդու հենարանը հայրենիքն է:

Շարադրանքն ավարտվում է երագի տեսարանով. երկար ճանապարհի սկզբում պապն է, որ հայերեն խոսում է հոր հետ. վերջինս չի հասկանում, բայց ավելի հեռու կանգնած թողը հասկանում է, այսինքն՝ հայրը դուրս է մղվում սերունդների շղթայից, պապի ու թոռան ժառանգորդական խզված կապը վերականգնվում է¹³:

Համանման նախատիպ ունի նաև ԱՄՆ-ում ծնված (1951) *Փիթեր Բալաքյանի* «Ճակատագրի սև շունը» վեպը¹⁴, որը հեղինակը բնորոշել է որպես հուշագրություն: Նա նշանավոր արքեպիսկոպոս Գրիգոր Պալաքյանի¹⁵ հորեղբորդու՝ Տիրան Պալաքյանի թոռն է: Այստեղ ևս պատմության հիշողությամբ ազգային արժանապատվության վերադարձն է: Այստեղ ևս պատանի հերոսին ծնողներն ամեն կերպ հեռու են պահել հայությունից: Անգամ նրան թվացել է, թե ինքը հրեա է, իսկ եթե չէ, ապա, նրանց կազմակերպվածությունը նկատի ունենալով, կցանկանար լինել¹⁶:

Վիպական շարադրանքում հիշվում, գործողությունների մասնակից են դառնում բազմաթիվ իրական անուններ՝ հիմնականում արվեստի մարդիկ: Ճակատագրի սև շունը 1915 թ. է՝ Ցեղասպանությունը: Իրադարձությունների կենտրոնում Դիարբեքի վերանվանված հայոց հնագույն Տիգրանակերտ քաղաքն է՝ Բալաքյանների տոհմի

12 Նույն տեղում, 144:

13 Նույն տեղում, 232-234:

14 Փիթեր Բալաքյան, *Ճակատագրի սև շունը*, թարգմ.՝ Արտեմ Հարությունյան (Երևան, «Տիգրան Մեծ», 2002), 364:

15 Գրիգոր Պալաքյանը հայտնի է «Հայկական Գողգոթա» (հայերեն վերջին հրատարակությունը՝ Երևան, 1991) խորագրով ծավալուն հուշագրությամբ: Գողգոթայի ճանապարհից՝ Ադանայից, Տիրան Պալաքյանի՝ հարազատներին գրած նամակները կարդալով, որտեղ ջարդի տեսարաններ էին, Միամանթոն գրել է իր «Կարմիր լուրեր բարեկամես» (1909) բանաստեղծությունների շարքը:

16 Բալաքյան, *Ճակատագրի սև շունը*, 47-54:

պատմությունը, որ հետո շարունակվում է ամերիկյան քաղաքներում: Գիրքը բացվում է Հայաստանի պատմական քարտեզով և Բալաքյանների տոհմածառով: Հայրենիքում ծնված առաջին սերունդի Բալաքյաններն անվանակոչված են Մկրտիչ, Հովհաննես, Կարապետ, ԱՄՆ տեղափոխվածները՝ Պամելա, Ջեյմս, Ջերալդ. օտարացումն ակնհայտ է: Շարադրանքի կենտրոնում հեղինակն է՝ կյանքի և ինքնագիտակցման տարբեր տարիների: Անգլիախոս միջավայրում միայն տատից երբեմն լսած «երկիր» բառն է, որ նրա մանկությունը աստիճանաբար «ազգայնացնում» ու կապում է հետագա տարիների հետ, երբ դառնում է գրող, հանրային գործիչ և Հայ դատի պաշտպան: Աստիճանաբար, որովհետև ոչ հայրենի արժեքների փայլը դեռևս կուրացնում էր: Տատի թաղման օրը 13-ամյա թողը օտար էր նրան, օտար էր նաև մահվան տասնամյակին, բայց ավելի ուշ տատն արդեն թանկ հիշատակ էր: Տոհմն ավելի հայ էր կիրակնօրյա խնջույքների ժամանակ, երբ մատուցվում էին ազգային կերակուրներ, իսկ ավագները, փոքրերից գաղտնի, առանձին նաև հայերեն էին խոսում:

Հայրը ստեղծել էր բժշկի ապահով կենցաղ, հորաքույրները ազդեցիկ գրականագետ ու քննադատ էին, միջավայրում, որպես տան այցելուներ, գրական հնչեղ անուններ էին՝ Վիլյամ Սարոյանից ու Կուրտ Վոնեգուտից մինչև Ալեն Գինզբերգ: Մանրադիտակի տակ դրված փոխադարձ հարաբերություններ են, հոր հանդեպ որդու անհանդուրժողականությունը, մանավանդ այն բանից հետո, երբ, որպես տնային աշխատանք, Հայաստանի փոխարեն Թուրքիայի մասին է գրում և ենթարկվում հոր նախատիքին. «Իսկ գիտե՞ս, թե թուրքերն ինչ են արել մեզ: Քո հրեա ընկերները գերմանացիների մասին կգրե՞ին»¹⁷: Բալաքյան հայրը, ըստ որդու, մի քանի ես ուներ, որոնցից մեկը նրա ներսում խոր թաքնված հայն էր: Ինչպես տատին, այնպես և հորը նա ուշ էր հասկանալու. «Տարիների ընթացքում տատս վերադարձել էր ինձ մոտ»¹⁸, – գրում է նա և այս կապակցությամբ տեսակետ զարգացնում, թե Ցեղասպանության հիշողության վրա չպետք է անընդհատ ողբալ, այլ դրան պետք է հակադրել կյանքը, որովհետև մահվան հիշատակը կյանքի մեջ է կենդանի: Չարենցի տեսակետն է:

Ազգային արթնացման ճանապարհին հասակ առնող հերոսին մեծապես օգնում է 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի տպագրած հիշողությունների գիրքը (1918, հայերեն՝ 1919), որից հեղինակը էջերով մեջբերումներ է անում իր վեպում: Այս գիրքը վերջնականապես բացում է նրա աչքերը: Դրան հաջորդում են պատմագիտական ուսումնասիրություններ ու վավերագրեր: Հաղթահարվում է անցյալին կապող հոգեբանական մի կաշկանդվածություն ևս. «Երևի վախենում ենք նաև ամեն ինչ իմանալուց»¹⁹:

Այսպես, սարսափը մթագնել էր իրականությունը: Այս բոլոր փաստերից հերոսը ցնցվում է. այդքան ժամանակ ինչո՞ւ էին իրենից թաքցրել ճշմարտությունը: Եվ հանգում է այն հետևությանը, որ այդ ճշմարտությունը ոչ միայն իրեն է պետք, այլև աշխարհին:

Այսպես աստիճանաբար հայությունից հեռացած հերոսը վերադառնում է ազգային նկարագրին և դառնում Հայ դատի հրապարակային պաշտպաններից մեկը: Շարա-

17 Նույն տեղում, 115:

18 Նույն տեղում, 172:

19 Նույն տեղում, 119:

դրանքի մեջ պատմական դեպքերի նկարագրությունը հասնում է մինչև 1920 թ., որին զուգահեռ ընթանում է գրողի կյանքի ժամանակը՝ ընդգրկելով 1950-90-ականները: Մեջբերում է անում Մայքլ Առլեն Կրոսերից, ըստ որի՝ զանգվածային ոչնչացման գեների գործադրումը սկսվել է Հայոց ցեղասպանությունից²⁰:

Այս գրքի հաջողությունից հետո Փիթեր Բալաքյանը 2003 թ. հանդես է գալիս «Այրվող Տիգրիս. Հայոց ցեղասպանությունը և Ամերիկայի արձագանքը» փաստավավերագրական աշխատությամբ:

Գ. Թուրք գրողի դիրքորոշումը

Առանձին պետք է դիտել այլազգի գրողներին՝ Ֆրանց Վերֆել («Մուսա լեռան քառասուն օրը»), Էդգար Հիլգենրատ («Վերջին մտքի հեքիաթը»), Կուրտ Վոնեգուտ («Կապույտ մորուք»), Ֆեթհիե Չեթին («Իմ տատը»), Օրհան Փամուկ («Չյունը»), Քեմալ Յալչըն («Հոգիս քեզմով կը խայտա») և ուրիշներ:

Կանդրադատնանք Քեմալ Յալչընի վեպին²¹: Ազատամտության համար հեղինակը 13 տարի ապրել է վտարանդիության մեջ: Գրքի գաղափարը հեղինակին ներշնչել են թուրքերենի իր ուսուցիչը («ուսուցիչների ուսուցիչ»)՝ պոլսահայ տիկին Մելինեն, որին երախտապարտ էր, և մայրը, որին ժամանակին մահից փրկել էր աղոթամատյան Նարեկը: Երբ հետաքրքրվում է միայնության դատապարտված տիկին Մելինեի կյանքով ու ինքնությամբ, վերջինս նրան խորհուրդ է տալիս այցելել Հայաստան. դա՛ է իր կյանքը: Եվ ահա նա վերադառնում է հայրենի օջախ և տիկին Մելինեի ծանր լուրջության գաղտնիքը բացահայտելու համար ուզում գնալ Հայաստան, այսինքն՝ Արևմտյան Հայաստան՝ քարտեզով՝ Թուրքիայի արևելք, որ խոսքի մեջ դեռ Հայաստան են ասում: Հայրը և եղբայրները, զգուշանալով նրա կյանքի համար, դեմ են լինում: Միայն Ամասիայում ծնված մայրը, հիշելով, որ մանկության տարիներին իրեն Սուրբ գրքով բուժել է մի հայ, արտոնում է մեկնել:

Ուղևորությունը սկսում է 1998 թ. հուլիսին: Հասնում է Ամասիա: Մտադիր էր լինել Կարինում, Կարսում, Անիում, Վանում, Աղթամարում, հանդիպել Եղեռնից փրկված իսլամացած ծպտյալ հայերի և խոսել նրանց հետ՝ հասկանալու՝ ինչ է հայը, տեսնելու հայի հոգին: Սակայն ամենուր նրա դեմ պաշտոնական արգելքներ են: Ծառոթների միջոցով ուզում է գտնել ծպտյալ հայերի և բացահայտել նրանց ինքնությունը: Ծառերը վախենում և զգուշանում են, բայց ի վերջո նա դուրս է գալիս հետքի վրա:

Սա կենսագրությունների գիրք է, և յուրաքանչյուր կենսագրություն ժողովրդի պատմական ճակատագրի վկայություն է: Իսլամացած, անուն, լեզու ու մշակույթ փոխած հայեր են, որոնք դեռ հիշում են միայն իրենց հայ լինելը: Զարուհին դարձել է Սաֆիյե, որպես երկրորդ կին ամուսնացել թուրքի հետ, առաջնեկ աղջկա անունն էլ դրել

20 Նույն տեղում, 315:

21 Քեմալ Յալչըն, *Հոգիս քեզմով կը խայտա*, թուրքերենից թարգմ.՝ Գարեգին արքեպիսկոպոս Պերճյանի (Երևան, 2003), 406: Ստամբուլի «Տողան» հրատարակչությունում այս գրքի տպաքանակն արգելվում է, և 3000 օրինակը մկրատվում ու վերածվում է թղթաթափոնի: Առաջին անգամ 2002 թ. տպագրվել է Գերմանիայի Բոխում քաղաքում, որտեղ հեղինակը զբաղված էր թուրք ուսուցիչների վերապատրաստմամբ:

Թյուրքան: Սրան հաջորդում է Հյուրիեթ վերամկրտված մեկ ուրիշ հայուհի, որ լալով պատմում է Այնթափի, Մարաշի փախեւիսիսի դրվագներ՝ իրական եղեռն, վկայի աչքերով:

Կարինում նրան պատմում են ունևորության տուրքի գոհերի մասին, երբ 1942 թ. պետականորեն հարկ են դնում Պոլսում դեռևս մնացած հայերի և այլազգիների վրա. մուծողն ազատվում էր, մուծել չկարողացողը՝ տեղահանվում և Կարինին մերձակա արքայավայր Աշքալա աշխատանքային ճամբարում սառնամանիքների մեջ մահանում: Այսինքն՝ կոտորածը շարունակվում է:

Հասնում է Անի. քաղաքի ամբողջ պատմությունն է, մոտակայքում Կարսն է: Նրա հանդեպ հետապնդումները շարունակվում են. վերջիվերջո, Անին սահմանային քաղաք է: Նորից հայի ճակատագիրն է. դառնում են թուրք, ընդունում իսլամ, բայց դա էլ չի օգնում: Ապտակի պես իջնում է հարվածը՝ դու այդ երբ թուրք եղար: Ապրես որպես հայ քրիստոնյա՝ կսպանեն, ներկայանաս որպես թուրք մուսուլման՝ կնստեցնեն տեղը՝ ծագումդ հիշիր և չսփոք ճանաչիր. 1927 թ. առանց թույլտվության հայերը չէին կարող Թուրքիայի մի քաղաքից մյուսը գնալ:

Այս ամենը տեսնելուց և նախատեսված բոլոր վայրերն այցելել չկարողանալուց հետո հեղինակը վերստին հանդիպում է տիկին Մելինեին, ասում, որ նրա շնորհիվ հայերին ճանաչեց և սիրեց:

Այստեղից արդեն հայ տիկնոջ տոհմի պատմությունն է Եղեռնի բոլոր բնութագրական մանրամասներով: Հայի ճակատագիրն է ճիշտ այն կետից, որտեղ «Մնացորդաց» վեպում կանգ է առնում Հակոբ Օշականը և այլևս չի կարողանում գրել վերջին չորրորդ հատորը, որովհետև հոգեբանորեն այլևս չէր կարող վերապրել Եղեռնի մանրամասնությունները²²: Այստեղ Օշականի չգրած հատորի շարունակությունն է, երբ վեպի գլխավոր հերոս Սողոմը թուրքական բանտում ստիպողաբար հրապարակավ թլպատվում է և իսլամ ընդունում. այդ ամենից մայրը խելագարվում է ու հոր գերեզմանին հոգին ավանդում: Իսկ Սողոմը դեռևս պետք է փորձեր ապրել: Այդ ապրել փորձելն անհա այս ծպտյալ հայերից յուրաքանչյուրի վթարված պատմությունն է:

Վիպական հյուսվածքի առանցքում նորից տիկին Մելինեն է՝ կորցրած հայրենիքի ծանր հիշողությամբ և գերմանացի ամուսնու սառը շնչառությամբ: Նորից նրա շուրջ հյուսվող պատմությունը ճեղքվում է և տեղ բացում համանման բազմաթիվ այլ կենսագրությունների ու ճակատագրերի: Իսկ շարունակվող Ցեղասպանությունը թունավորում է սերունդների կյանքը, որոնք թուրքի համար այլ բան չեն, քան սրածության մնացորդներ:

Շարադրանքը հարյուր տարուց ավելի ժամանակաշրջանի ընդգրկում ունի: Գործող հերոսների հիշողության մի ծայրին 1894 թվականից սկսված ջարդերն են, իսկ մյուս ծայրը գալիս հասնում է 1999 թ.: Իրենց ազգային արժանապատվության հաշվին Եղեռնից հետո մնացորդ հայերը Թուրքիայում դառնում են ծպտյալ հայեր: Մահվան սարսափը գիտակից մարդուն դարձնում է կենսաբանական միավոր, բայց «Ան ծածուկ կերպով իր հայությունը կ'ապրի: Հայկական պաշտամունք կ'ընեն: Բայց դեպի

22 Հակոբ Օշական, *Մնացորդաց*, գիրք 1-3 (Անթիլիաս, 1988): Տես նաև՝ Գասպարյան, *Հայ գրականություն*, 34-96:

դուրս իսլամ ցույց կու տա»²³: Ազգային, քաղաքական, կրոնական հալածանքները, ամենօրյա ստորացումները փոխում են մարդուն: Վախը դառնում է գլխավոր հոգեբանական գործոն: Մի հայ կին պատմում է. «Գիտեմ, որ այս թուրքը սպանեց ամուսնուս, իմ աչքերով տեսա: Ինձ էլ պիտի սպաներ, վախից նրա կինը դարձա»²⁴: Վախից հնազանդվում է, երեխաների մայր դառնում, որոնք, սակայն, չպետք է իմանան, որ իրենց մայրը հայ է, և մխիթարվում է նրանով, որ այդ մարդուն ինքը երբեք չի ների, և Աստված նրա պատիժը կանի: Առաքինությանը փոխարինում է կենսաբանական բնագործ. մտածում է՝ եթե թուրք լինեմ, չեմ վախենա, և ստիպված ուր պատահի կրկնում է՝ ես թուրք եմ: Այդ ծպտյալ հայերը նաև ասում են. «Ինչ պիտի փոխվի, եթե ասենք՝ հայ ենք, ինչ պիտի շահենք. մի քիչ խաղաղություն ունենք, դա էլ պիտի կորցնենք»²⁵, և իրենց ինքնությամբ հետաքրքրվող թուրք գրողին հասկացնում են. «Այստեղ մեզ փորձանքի մի մատնեք»²⁶: Ահա նաև դրա համար էին նրանք ամեն կերպ խուսափում ինքնաբացահայտմից: Սա եթե Յեղասպանության շարունակությունն է, հապա ինչ է:

Գիտական հետազոտությունները պարզել են, որ Թուրքիայի ազգաբնակչության սոսկ հինգ տոկոսն է էթնիկ թուրք, մնացածը ժամանակի ընթացքում թուրքացված հայեր են, հույներ, ասորիներ, սլավոններ, քրդեր և այլազգիներ: Խլված են հունական, հայկական տարածքներ, գյուղեր ու քաղաքներ, մշակութային մի ամբողջ ժառանգություն, թուրքացված են մարդկային զանգվածներ: Այդ ամենը պետք է վերադառնա իրական տիրոջը:

Քեմալ Յալչընի «Հոգիս քեզմով կը խայտա» փաստավավերագրական վեպը բացահայտում է ծպտյալ հայերին, հայկական տարածքներին վերադարձնում Հայաստան անունը և ասում՝ արթնացեք, սա է իրականությունը:

Յեղասպանությանը նվիրված բոլոր գեղարվեստական գործերն ունեն պատմականազգրական հիմք: Չարենցը փորձում էր ապրողներին առայժմ հաշտեցնել նոր իրականության հետ՝ փրկելու գոնե եղածը՝ մնացածը թողնելով ապագային: Մայքլ Առլեն Կրտսերը և Փիթեր Բալաքյանը, Յեղասպանության պատմական իրողության գիտակցմամբ, կոչ էին անում վերադառնալ ազգային ինքնությանը: Քեմալ Յալչընը Եղեռնի շարունակվող հետևանքների բացահայտման ճանապարհով էր գնում՝ աչքի առաջ ունենալով մնացորդաց սերունդին, այլ կերպ ասած՝ ծպտյալ հայությանը:

Կա տեսակետ, ըստ որի՝ ցեղասպանության մասին հնարավոր չէ և պետք չէ գրել՝ Հակոբ Օշական, Հակոբ Կարապենց, Հրանտ Մաթևոսյան: Երևելի անուններ են: Սակայն հարյուրամյակը թևակոխած նման գրականության փորձը ցույց է տալիս, որ պետք է գրել, պետք է գրել բարձր արվեստով և այն դարձնել համամարդկային սեփականություն: Այդպես, որովհետև ցեղասպանությունը Թուրքիայի ուրացությամբ ու ժխտողականությամբ այսօր շարունակվում է:

Իսկ սա նշանակում է, որ գեղարվեստական գրականությունը, և ընդհանրապես արվեստը, այս ասպարեզում դեռևս մեծ ու կարևոր հանձնառություն ունի:

23 Յալչըն, *Հոգիս քեզմով կը խայտա*, 205:

24 Նույն տեղում, 237:

25 Նույն տեղում, 257:

26 Նույն տեղում, 269:

REFLECTION OF THE GENOCIDE IN THE FICTION

David V. Gasparyan

Institute of History of National Academy of Sciences, Armenia

SUMMARY

A huge amount of fiction has been created, starting from 1915 to the present day, by writers who became victims of the genocide themselves, devoted to the Armenian Genocide. The material in this article is presented from three points of view, considering: (a) the first decades of Soviet rule; (b) the return to their roots of Armenian writers who left their homeland because of the genocide and became foreign writers; and (c) foreign writers, in this case the position of a Turkish writer from within Turkey.

In the first decades of the Soviet Union's existence, the view of the historical past, in this case of the genocide, was assessed by official critics not as patriotism, but as nationalism. Under these conditions, the publication of Charents' novel "Yerkir Nairi" was a serious achievement. Covering the national tragedy with a veil of satire, he portrayed Armenian life as it was between 1914 and 1920. His goal was to bring the remnants of the generation that survived the massacres back to life. The influence of this novel on 20th century Armenian literature is very great and had, at one time, two Armenian and four Russian translation editions.

Many writers of Armenian origin have switched to foreign languages, starting with William Saroyan. Among such writers, this article presents the book "Towards Ararat" by Michael Arlen Jr. and the memoir "The Black Dog of Fate" by Peter Balakian. They were written in English, have autobiographical content and been translated into Armenian. This article shows how the authors, who were in a foreign language environment, realised that and looked for their Armenian roots.

Among foreign writers, the Turkish writer Kemal Yalcin's novel "My soul is full of you" is presented in this article. To become acquainted with the life of his Armenian teacher who had been subjected to the Genocide, the author travelled to historical Armenia and became acquainted with Armenians who, out of fear, had hidden their nationality and faith. He found out that the life of each of them was a novel.

Fiction from the very beginning fought against genocide, initially revealing its essence, which consists of the destruction of homeland, civilisation, language, nationality, people and humanity in general.

Keywords: Genocide, Armenia, Armenian history, Armenian literature, Armenian people, human destiny, fact, memory, author, Yeghishe Charents, Michael Arlen, Peter Balakian, Kemal Yalcin.

ОТОБРАЖЕНИЕ ГЕНОЦИДА В ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ

Давид В. Гаспарян

Институт истории Национальной академии наук, Армения

РЕЗЮМЕ

Начиная с 1915 года и до сегодняшнего дня Геноциду армян посвящено огромное количество художественной литературы, авторами которой являются в том числе ставшие жертвами Геноцида

писатели. Материал этой статьи представлен с трех точек зрения, учитывая: а. первые декады Советского Союза, б. возвращение к своим корням армянских писателей, покинувших родину в результате Геноцида армян и ставших иноязычными, в. внутренняя позиция иностранных писателей, в данном случае - турецких.

В первые десятилетия существования Советского Союза взгляд на историческое прошлое, в данном случае на Геноцид армян, оценивался официальной критикой не как патриотизм, а как национализм. В этих условиях серьезным достижением стало издание романа Чаренца “Еркир Наири”. Прикрывая национальную трагедию пеленой сатиры, он изобразил армянскую жизнь 1914-1920 годов. Его целью было вернуть к жизни остатки поколения, пережившего Геноцид. Влияние этого романа на армянскую литературу XX века велико. В свое время роман имел два издания на армянском языке и четыре издания в русском переводе.

Многие писатели армянского происхождения перешли на иностранные языки, начиная с Уильяма Сарояна. Среди таких писателей в статье представлены роман Майкла Арлена-младшего “Навстречу Арарату” и роман Питера Балакяна “Черный пес судьбы”. Они были написаны на английском языке и переведены на армянский и имеют автобиографическое содержание. Представлено, как пришедшие в иноязычную среду авторы ищут свои армянские корни.

Среди зарубежных писателей представлен роман турецкого писателя Кемаль Ялчина “Моя душа полна тобой”. Для того, чтобы познакомиться с жизнью своего учителя армянина, ставшего жертвой Геноцида, автор отправляется в историческую Армению и знакомится с армянами, которые из страха скрывали свою национальность и веру, и жизнь каждого из которых представляет собой роман.

Художественная литература с самого начала боролась с геноцидом, раскрывая, прежде всего, его сущность, которая заключается в уничтожении родины, цивилизации, языка, народности, людей и человечества в целом.

Ключевые слова: Геноцид, Армения, история Армении, армянская литература, армянский народ, человеческая судьба, факт, память, автор, Египсе Чаренц, Майкл Арлен, Питер Балакян, Кемаль Ялчин.

REFERENCES

- Balakyan, Peter. *Շուկաշագորի և շուկ* [Black Dog of Fate]. Yerevan, 2002. 364 էջ
- Gasparyan, David. *Հայ գրականություն*, գիրք 2 [The Armenian Literature, Book 2]. Yerevan: Zangak-97, 2002.
- Yalchn, Kemal. *Հոգիս քեզմով կը խաղա* [My Soul is Filled with you]. Yerevan, 2003.
- Kochar, Hrachya. «Նացիոնալիստ տաղանքների հոգևորը» [Son of Nationalist Scum], *Grakan tert*, 10 March 1937.
- Arlen Krtser, Michael. *Դեպի Արարատ* [To Ararat]. Yerevan: Nairi, 2000.
- Charents Eghishe, *Երկերի ժողովածու*, հ. 2 [Collection of Works, V. 2]. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of Armenian SSR, 1963.
- Charents Eghishe, *Երկերի ժողովածու*, հ. 5 [Collection of Works, V. 5]. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of Armenian SSR, 1966.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Դավիթ Վ. Գասպարյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն շրջանի բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայ գրականության տեսություն և պատմություն, 20-րդ դարի հայ գրականություն, Եղիշե Չարենց:

Էլ. փոստի հասցե՝ grakanagetgasparyan@mail.ru

David V. Gasparyan, PhD in Philology, professor, literary critic, Leading researcher at the Department of Modern History of the Institute of History of National Academy of Sciences of Armenia, honored artist of the Republic of Armenia.

Research fields – theory and history of Armenian literature, Armenian literature of the 20th century, Yeghishe Charents.

E-mail: grakanagetgasparyan@mail.ru

Давид В. Гаспарян, доктор филологических наук, профессор, литературовед, ведущий научный сотрудник отдела новейшего периода Института истории Национальной академии наук Республики Армения, заслуженный деятель искусств Армении.

Область исследований – теория и история армянской литературы, армянская литература 20 века, Егише Чаренц.

Эл. почта: grakanagetgasparyan@mail.ru

**ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ԳԻՒՏ ՄԽԻԹ-ԱՐԵԱՆԻ
«ԴՐՈՒԱԳՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՂԳՈԹ-ԱՅԷՆ»
ԱՆՏԻՊ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ**

Արծուի Հ. Բախչինեան

ՀՀ ԳԱԱ պարամության ինստիտուտ, Հայաստան

Հրապարակումը ներկայացնում է արեւմտահայ հոգեւոր գործիչ, մտաւորական Գիւտ Մխիթարեանի (1877–1940) «Դրուագներ հայկական Գողգոթայէն. 1912–1937» անտիպ յուշագրութիւնից մէկ հատուած՝ «Սահակ կաթողիկոս կրկին ի Հալէպ» գլուխը: Մխիթարեանը, որ 1903–1919 թթ. աշխատել է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում որպէս Սահակ Բ. կաթողիկոսի յաշուակալ-քարտուղար, իր յուշագրութեան մէջ ներկայացրել է Կիլիկիայի Հայոց կաթողիկոս Սահակ Բ Խապայեանի գործունէութիւնը Օսմանեան կայսրութեան իրադարձութիւնների խորապատկերին:

Ներկայացուող հատուածում պատմում է 1915 թուականի մայիս-յուլիս ամիսներին Սահակ կաթողիկոսի՝ Հալէպ կատարած ուղևորութիւնը, մէքերումներ են կատարում տարբեր անձնատրութիւնների նրա յղած գրութիւններից, որոնցում նա վկայել է հայ բնակչութեան տարագրութեան և կոտորածների մասին: Յիշատակում են եղեռնամահ մտաւորականներ, հայերին բռնի իսլամացնելու վերաբերեալ վկայութիւններ:

Բանալի բառեր՝ Գիւտ Մխիթարեան, Կիլիկիոյ կաթողիկոսարան, Մեծ եղեռն, 1915 թուական, եղեռնամահ մտաւորականներ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս, Հալէպ, տարագրութիւն, բռնի իսլամացում:

Հոդվածը ներկայացվել է՝ 02.03.2022: Ընդունվել է տպագրության՝ 16.05.2022:

The article was submitted on 02.03.2022 and accepted for publication on 16.05.2022.

Статья поступила 02.03.2022 и была принята к публикации 16.05.2022.

Ինչպէս հղել՝ Արծուի Հ. Բախչինեան, «Մի հատուած Գիւտ Մխիթարեանի «Դրուագներ հայկական գողգոթայէն» անտիպ յուշագրութիւնից», *Յեղասպանագիտական հանդես* 10, no. 1 (2022), 97-109:

How to cite: Artsvi H. Bakhchinyan, “An Excerpt from Kud Mkhitarian’s Unpublished Memoires ‘Episodes from Armenian golgotha,’” *Ts’eghaspanagitakan handes* 10, no. 1 (2022): 97-109.

Как сослаться: Арцви Г. Бахчинян, “Отрывок из неизданных мемуаров Кюда Мхитаряна «Фрагменты армянской голгофы»,” *Цехаспанагитакан андес* 10, no. 1 (2022): 97-109.

Ներածութիւն

2017 թուականին բրազիլացի պատմաբան Էյտոր Լոուրէյրոն, որ զբաղւում է Բրազիլիայի հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութեամբ, ինձ յանձնեց Գիւտ Մխիթարեանի «Դրուագներ հայկական Գողգոթայէն. 1912–1937» 183 էջ կազմող ձեռագիր յուշագրութեան լուսապատճէնը: Նա յայտնեց, որ բնագիրը պահւում է Գիւտ Մխիթարեանի դստեր՝ Շաքէ Աւետիսեանի արխիւում:

Այս յուշագրութիւնը ամբողջովին անծանօթ էր, նրա մասին վկայել էր Գառնիկ Ստեփանեան իր «Կենսագրական բառարանում»¹, սակայն ձեռագիրը, առաջին անգամ յայտնուելով

1 Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան, հարոր Գ* (Երեւան, «Խորհրդային գրող», 1990), 56:

Հայաստանում, հնարաւորութիւն է ստեղծել ծանօթանալու բովանդակութեանը եւ հրատարակութեան պատրաստելու:

Գիտ Մխիթարեանը (1877 (կամ 1878), Սկիւտար, Կ.Պոլիս – 1940, Բրազիլիա) հոգեւոր, կրթական գործիչ եւ բանասէր էր: Աւագանի անունը եղել է Մանուկ: Կրթութիւնը ստացել է ծննդավայրում՝ Ս. Խաչ ծխական վարժարանում եւ Ազգային Կեդրոնական վարժարանում, որն ւարժելուց յետոյ 1896–1898 թթ. ուսանել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում: 1903–1919 թթ. աշխատել է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում որպէս Սահակ Բ. Խաչայեան կաթողիկոսի յաշուակալ-քարտուղար, նաեւ դպրոցի տեսուչ եւ ուսուցիչ Կիլիկիայում: 1905-ին արեղայ է ձեռնադրուել՝ Գիտ անունով: 1907–1914 թթ. ստացել է վարդապետի, ծայրագոյն վարդապետի եւ եպիսկոպոսի աստիճաններ: 1910–1915 թթ. վարել է Սոյ ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը: Մեծ եղեռնը վերապրելուց յետոյ 1920–1923 թթ. վարել է Խարբերդի առաջնորդական տեղապահի պաշտօնը: 1923-ի սկզբին Գիտ Մխիթարեանը մեկնել է Մարսէլ, որտեղ հրաժարուել է հոգեւոր կոչումից: Ֆրանսիայից մեկնել է ԱՄՆ, այնտեղից՝ Բրազիլիա, հաստատուել Սան Պաուլուում: Այստեղ ամուսնացել է եւ աշխոյժ դերակատարութիւն ունեցել հայ համայնքի կեանքում: Աշխատակցել է ամերիկահայ պարբերականներին²: Առանձին գրքերով լոյս է բնծայել «Յուշեր եւ վերլիշումներ (1918–1935)» (Անթիլիաս, 1937), «Պրազիլիոյ հայ գաղութը: Սկիզբէն մինչեւ մեր օրերը» (1938) եւ «Պրազիլիոյ հանրապետութիւն (համառօտ ուսումնասիրութիւն)» (Պուէնտս Այրէս, 1938) գրքերը³:

Մխիթարեանի «Դրուագներ հայկական Գողգոթայէն» յուշագրութիւնը մասնաւորապէս ներկայացնում է Սահակ կաթողիկոս Խաչայեանի գործունէութեանը Մեծ եղեռնից առաջ, 1915-ին եւ դրանից յետոյ, նրա այցելութիւնները Հալէպ, Հաճըն, Ադանա, Սոյ վանքի խուզարկութիւնը եւ ապա պարպումը, Սահակ կաթողիկոսի տարագրումը եւ ժամանակաւոր վերադարձը Կիլիկիա, նրա ուղեւորութիւնը Եգիպտոս եւ Եւրոպա: Յուշագրութիւնը յաւելեալ տեղեկութիւններ է տրամադրում 1914–1921 թթ. արեւմտահայութեան հանդէպ կիրառուած ցեղասպանութեան եւ տարագրութեան, ժամանակի հոգեւոր-եկեղեցական կեանքի վերաբերեալ, յիշատակում են ժամանակաշրջանի հայ եւ օտարագրի տարբեր գործիչներ:

Յուշագրութեան հաւաստիութիւնը ամրապնդում է Սահակ կաթողիկոսի նամակներից եւ հեռագրերից կատարուած բառացի մէջբերումների առկայութեամբ, Մխիթարեանը քարտուղարի իր պաշտօնի բերումով յաճախ ձեռքի տակ է ունեցել կաթողիկոսի գրութիւնների պատճենները, իսկ երբ չի ունեցել, յարկ է համարել նշել այդ մասին: Օրինակ՝ խօսելով Գրիգոր Զօհրապի՝ Սահակ կաթողիկոսին յանձնած կտակի մասին՝ Մխիթարեանը նշել է. «*Ժամանակին թէւ ընդօրինակած էինք կտակը, բայց դժբախտաբար այսօր չունինք մեր տրամադրութեան տակ: Ոչ ալ՝ Զօհրապի՝ Սահակ կաթողիկոսին գրած նամակը, որով ցաւ կը յայտնէր Կիրակի օրը եկեղեցի չի կրնար երթալուն եւ Ն. Ս. Օծութեան օրհնութիւններէն զրկուած ըլլալուն համար*»: Նրա ձեռքի տակ անշուշտ եղել է նաեւ «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն, 1903–1915» հատորը (Պէլլոյթ, 1927), որտեղ ընդգրկուած է Սահակ կաթողիկոսի թղթակցութիւնների մի մասը:

Յուշագրութեան էջերից յառնում են նաեւ մի շարք արժէքաւոր խորհրդածութիւններ ժամանակի իրադարձութիւնների վերաբերեալ: Այսպէս, Սահակ կաթողիկոսը 1914-ին Զաւէն պատրիարքին գրել է. «*Բնաւ սխալած չենք ըլլար, եթէ ըսենք, թէ՛ ներկայ կառավարութիւնը նախորդ ռեժիմէն շարժ աւելի առիթ կուրայ լեցնելու դատութեան բաժակը*»: Եւ կամ՝ յիշելով Մարաշի

2 Տե՛ս՝ Կ. (sic) Մխիթարեան, «Նամակներ Պրազիլիայէն», Հայրենիք, 17 ապրիլի 1926, 1:

3 Տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լարիս Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950 (Անթիլիաս, 2005), 263–264:

կուսակալի բնորոշումը հայ-թուրքական բախումների վերաբերեալ որպես «*հոր ու զակի կռիւներ*»՝ Մխիթարեանը պարզաբանել է. «*Թուրքը երբեք զաւակ չէ նկատած հայը, ընդհակառակը, միշտ իբրեւ սպորուկ՝ հալածած, կողոպտած, բռնաբարած եւ սպաննած է, իսկ նեղը մնացած պարագային է, որ օգնութիւն ակնկալած է իր ըայաէն*», եւ այլն:

Ներկայացուող հատուածը վերաբերում է Գիւտ Մխիթարեանի յուշագրութեան 1915 թուականին, մասնատրապէս Կիլիկիայից բռնագաղթուած հայ տարագրութեանը: Յիշում են Գրիգոր Զոհրապի, Վարդգէսի եւ եղեռնամահ այլ մտաւորականների անուններ, վկայութիւններ հայերին բռնի իսլամացնելու վերաբերեալ: Յուշագրութեան տոյն հատուածում յիշուած բազմաթիւ դէպքեր արդէն ծանօթ են (ինչպէս՝ Սահակ Կաթողիկոսի՝ Զաւէն պատրիարքին յղած նամակը), որոնց մի մասին ինքը Գիւտ Մխիթարեանն անդրադարձել է իր «Յուշեր եւ վերյիշումներ (1918-1935 թթ.)» հատորում:

Սահակ կաթողիկոս կրկին ի Հալէպ

Հետզհետէ Հալէպէն հասած տխուր եւ սարսռազդեցիկ յուրերուն վրայ Սահակ կաթողիկոսը Մայիս 25ին՝ Ատանայի կուսակալին գիտութեամբ եւ հաւանութեամբ կը մեկնի եւ 28ին «վիշտէն ու տառապանքէն ընկճուած» կը հասնի Հալէպ: Նոյն օրն իսկ կ'այցելէ կուսակալին եւ կը պատմէ ճանապարհին տեսածները:

Յունիս 2ին՝ Դրդ բանակի ընդհանուր հրամանատարութեան ուղղեալ ընդարձակ գրութիւնով մը նորէն գրութիւն կը հայցէ, որուն ճէմալ⁴ Յունիս 8ին կը պատասխանէ. «1. Զանազան վայրեր դրկուած հայ ժողովուրդէն մէկուն ինչքին, անձին կամ պատուոյն ո՛ր եւ է հարձակում տեղի կ'ունենայ. եթէ կ'ըլլայ կամ եղեր է, դէպքը ինձի մանրամասնօրէն գիտցնելիդ կը խնդրեմ: 2. Հնար եղած օգնութիւնն ու դիւրութիւնը ցոյց պիտի տրուին: 3. Կը յուսամ ի մօտոյ Հալէպի մէջ ձեզի հետ տեսնուիլ»:

Սահակ կաթողիկոսը ճէմալի հարցումներուն ի պատասխանի 12 յօդուածներէ բաղկացեալ ընդարձակ գրութիւն մը կը պատրաստէ՝ Հալէպ ժամանումին մատուցանելու համար: Ատոր մէջ մի առ մի կը թուէ տեղահանութենէ առաջ եւ ճամբու ընթացքին պատահած բոլոր դէպքերը. հրապարակային ծննդաբերութիւն, նորածիններու աղբանոցներու մէջ նետուիլ՝ զանոնք կրելու յոգնութենէն ազատելու համար, մէկ ընտանիքէն հայրը կամ մայրը բաժնելով՝ տարբեր վայրեր դրկուիլ, գիշերանց անասուններու փախցուիլը, որուն հետեւանքով շատ մը ծերերու, հիւանդներու եւ անչափահասներու օրերով քալելու հարկադրուած ըլլալին, ճամբու պաշար եւ կամ զգեստեղէն առնելու միջոց չտրուիլ, թանկագին իրեղէններու եւ նոյն իսկ ճամբու պաշարի սովորական դարձած գողութիւնները եւ այդ առթիւ տեղական կառավարութեան մօտ կատարուած դիմումներուն անլսելի մնալը, ռոճիկ պատրաստելու եւ տալու պատրուակով թշուառ ժողովուրդին օրերով արեւու տակ բացօթեայ վար դրուիլը, իրենց ընկերացող ոստիկաններու, զինուորներու եւ մանթրգայի ու մէնզէլի⁵ պաշտօնեաներու կողմէ ի գործ դրուած անարգական եւ տգեղ արարքները, տրուած պաշարի անբաւականութիւնը, եւ յուսկ յետոյ կ'աւելցնէ. «...Եթէ համարձակութիւն կը տրուի՝ սա ալ ըսեմ յաւելուածա-

4 Ջէմալ փաշան (1872–1922) Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է Սիրիայում եւ շրջակայքում գործող Օսմանեան 4-րդ բանակի հրամանատար:

5 Մենզել – իջեւան, օթեւան (թուրքերէն):

բար, որ խրատ կամ պատիժ՝ այսքանը բաւ համարելով՝ մնացեալներուն այդ անտանելի վիճակէն վերջ մը թող տրուի, զանոնք ընդ միշտ Օսմանեան փառապանծ գահուն կապուած պահելու համար»:

Յունիս 8ին՝ կ'եսգիշերէն յետոյ, Հալէպ կը հասնին Է. Ակնունի, Գ. Խաժակ, տօքտոր Տաղաւարեան, Յ. Ճանկիլեան, Ս. Մինասեան, Ռ. Զարդարեան⁶ եւ ուղղակի կը տարուին ոստիկանատուն:

Յաջորդ օրը լուր կը դրկին Սահակ կաթողիկոսին եւ դրամի կարօտ ըլլալին կը յայտնին: Սահակ կաթողիկոսը 30 օսմանեան ոսկի կը դրկէ իրենց: Նոյն օրը փօլիսի⁷ մը ընկերակցութեամբ կ'երթան Առաջնորդարան՝ ներկայանալու համար Սահակ կաթողիկոսին եւ հայցելու անոր հայրական օրհնութիւնը:

Յունիս 10ին ճամբայ կը հանուին դէպի Տիգրանակերտ՝ դատուելու համար պատերազմական ատենի առջեւ: Ճանապարհին չէթէներու կողմէ կը սպաննուին խժոժօրէն:

Յունիս 12-ին Զօհրապ եւ Վարդգէս⁸ կը հասնին եւ կը դրուին օթել մը⁹: Կը տեսնուին Ճէմալ փաշայի եւ կուսակալ Ճէլալ պէյի հետ: Ճէմալ կը խոստանայ Զօհրապը՝ Հալէպ թողելու համար աշխատիլ, բայց իբր թէ չը յաջողիր:

Երիցս կը տեսնուին Սահակ կաթողիկոսին հետ, որուն կը յանձնէ Զօհրապ՝ Հալէպի մէջ պատրաստած կտակը՝ դրկուելու համար իր ընտանիքին: Ժամանակին թէն ընդօրինակած էինք կտակը, բայց դժբախտաբար այսօր չունինք մեր տրամադրութեան տակ: Ոչ ալ՝ Զօհրապի՝ Սահակ կաթողիկոսին գրած նամակը, որով ցաւ կը յայտնէր Կիրակի օրը եկեղեցի չի կրնար երթալուն եւ Ն. Ս. Օծութեան օրհնութիւններէն զրկուած ըլլալուն համար:

Զօհրապ՝ Գօնիայի մէջ պատրաստած էր ընդարձակ յիշատակագիր մը՝ Տիգրանակերտի պատերազմական ատենի նախագահին ուղղեալ: Այդ յիշատակագիրին մէջ ըսելէ յետոյ, թէ «Հնչակ»ներու հետ երբէք յարաբերութիւն ունեցած չէ, իսկ «Դաշնակ»ներու հետ ունեցած յարաբերութիւնն ալ «սէլամ-սապահ»էն¹⁰ անդին անցած չէ՝ մի առ մի կը թուէ օսմանեան երեսփոխանական ժողովին, Ծովային նախարարութեան պիտոճէի պատրաստութեան եւ ուրիշ խնդիրներու մէջ իր մատուցած ծառայութիւնները, կը յիշէ, թէ ինքը եղած է Զաւէն պատրիարքին¹¹ թելադրողը ազգային հիւանդանոցի մէջ վիրատր գինուորներու համար որոշ չափով մահճակալներ տրամադրելու անհրաժեշտութիւնը, ինքը եղած է առաջարկողը, որ Զաւէն պատրիարքը *հեռագրէ առաջնորդներուն՝ հրահանգէ ժողովուրդը ժամանակի փափկութիւնը*:

6 Է. Ակնունի (Խաչատուր Մալումեան, 1860–1915), Գարեգին Խաժակ (1867–1915), Նազարէք Տաղաւարեան (1862–1915), Յարութիւն Ճանկիլեան (1856–1915), Սարգիս Մինասեան (1873–12915), Ռուբէն Զարդարեան (1874–1915), եղեռնամահ մտաւորականներ:

7 Ոստիկան:

8 Վարդգէս (Յովհաննէս Սէրէնկիլեան, 1871–1915), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ:

9 Հիւրանոցը կոչուել է «Ռատուոյ Ֆարաջ»:

10 Բարի առաւօտ (թուրքերէն):

11 Զաւէն Տէր-Եղիայեան (1868–1947), Կ.Պոլսի հայոց պատրիարք (1913–1916):

Սահակ կաթողիկոսը կը ներկայանայ իրեն եւ պատրաստած գրութիւնը կը մատուցանէ: Ճէմալ կարդալէ յետոյ կը խոստանայ յատուկ ծայտեալ պաշտօնեաներ դրկել ճամբաները եւ ստուգել, թէ իրօք կը պատահին այդպիսի դէպքեր:

Յունիս 26ին՝ Ճէմալի Հալեպէն մեկնումին առթիւ յիշատակագիր մը եւս կը մատուցանէ, որն այսպէս կը վերջանայ. «...*Եւս գօմանարանը պէտալէթինսկան հազրէթլէ-րի, էլվէտան, ճէնասպը միթէալ հազրէթլէրի եօլճըլըրընըզա մուին վէ ռէհպլէրինիզ օլսուն, մուզաֆէրիյէթըլէն մուզաֆէրիյէթէ, շանլը ֆիթուհաթլարա, վէթան մուազզէզի օսմանիյէի միւրախէլաթըր ասքարըլէն մունաֆազաք մուվաֆֆըզ օլսարընըզ, սօն տուամ տաշուրուր քի ճէնասպը հազգ տախլէրինիտէ վապըր սամիլէրի իլէ միթէսէլլի օյըր»¹²:*

* * *

Զօհրապ եւ Վարդգէս Յունիս ...-ին Հալեպէն ճամբայ կը հանուին դէպի Տիգրանակերտ՝ պատերազմական ատեանին առջեւ դատուելու պատրուակաւ եւ Զէյթուն-Պօղազիի մէջ վայրագօրէն կը սպաննուին չերքէզ Ահմէտի կողմէ:

Չերքէզ Ահմէտ՝ Տիգրանակերտի եւ Ուրֆայի ճամբաներուն վրայ իրեն յանձնուած դահճային պաշտօնը գլուխ հանելէ յետոյ կու գայ Հալեպ եւ կ'իջեալանի աննշան օթել մը՝ չի ճանչցուելու համար թերեւս:

Լուր կը դրկէ կուսակալ Պէքիր Սամիի¹³, թէ եկած է եւ իր տրամադրութեան տակ կը գտնուի եւ պատրաստ է իր հրամանները գործադրելու:

Պէքիր Սամի՝ ծածկագիր հեռագրով կ'իմացնէ Ճէմալ փաշայի՝ Ահմէտի գալուստը:

Ճէմալ զինքը Դամասկոս կը հրաւիրէ: Ահմէտ, խորհելով, որ իր շահատակութեանց վարձատրութիւնը պիտի ստանայ Սուրիոյ միահեծան իշխանաւորէն, առանց ժամանակ կորսնցնելու կը փութայ Դամասկոս, հոն՝ իր արդար հատուցումը կ'ստանայ՝ Ճէմալի հրամանով կախաղան հանուելով:

Գառնուկի մորթիով իրենց գազանութիւնը ծածկող գայլերուն պէտք է հարցնել, թէ ո՞ր են մեր այդ ծաղիկ ու ճիւղի մտաւորականները եւ հերոսատիպ դէմքերը, որոնց պակասը դեռ մինչեւ այսօր ալ զգալի է մեր քամբախտ ժողովուրդի համար ...

«...Բայ մէզարըմա տօղրու եօլճըլըզ նասիպ էլլէսուն պագի էլվէտա վէ էմրու իրատէ»¹⁴:

Հալեպի մէջ տիրող թշուառութեան տեսարաններէն ազդուած՝ գերման կայսեր ուղեղեալ հեռագիր մըն ալ կը պատրաստէ եւ Սինանեան եղբայրներու թարգմանել տալէ

12 «Ո՛վ հերոս հրամանատար, մնաս բարո՛վ, (վսեմ) Աստուած ճամփորդութեանդ օգնական եւ ուղեցոյց թող լինի, յաղթանակից յաղթանակ, պատուաւոր նուաճումների (ֆէթիհ), Օսմանեան սուրբ հայրենիքի զինուորական միջամտութենէ պաշտպանէ եւ յաղթական լինէք: Վերջին աղօթքս էլ այն է, որ Աստուած աւելի լաւ էլ Աստծոյ խոստումով անի» (թուրքերէն):

13 Սամի Բեքիր (1865–1933, ազգութեամբ օսթթ թուրք քաղաքական գործիչ: Դէմ է եղել հայերի կոտորածներին, սակայն յետագայում թուրքական պատուիրակութեան կազմում Մոսկուայում մասնակցել է բանակցութիւններին, որոնք ասարտուել են կողմերի հակահայկական պայմանագրի կնքմամբ:

14 «Աստուած գերեզմանիս ճամբորդութիւն թող վիճակէ, յաւերժ մնաս բարով եւ Աստուծոյ կամքը» (թուրքերէն):

յետոյ կը յանձնէ մատամ Գօխի¹⁵ Պօլսոյ դեսպանին դրկելու եւ անոր միջոցաւ հասցէին տրուելու համար: Հեռագրին մէջ հայ ժողովուրդին կողմէ խաչակիրներու մատուցուած ծառայութիւնները յիշելէ յետոյ՝ կ'ըսէ. «...Ձեր ձայնը երեքօրեայ մեռեալին կենդանութիւն տուող Աստուածային ձայնը պիտի ըլլայ, իսկ պատմութիւնը Ձեզի պիտի վերագրէ հայ ցեղի բնաջնջումին պատասխանատուութիւնը»:

1919ի Փետրուարին Սահակ կաթողիկոսին Եգիպտոս ժամանման օրը՝ Սուրէն Պարթեւեան¹⁶ «Յուսաբեր»ին մէջ գրած իր հայակապ առաջնորդող յօդուածին ճակատն այդ հեռագրով կը զարդարէ:

1915 Յուլիս 5ին կը գրէ Զաւէն պատրիարքի. «...Հալէպի մէջ թշուառութեան տեսարանը աւելի արտակեղեք է: Մեր եկեղեցւոյ բակը, դպրոցները, տանիքները մարդկային խեղճերանքով¹⁷ լեցուած են: Հարուստ, աղքատ, վարժապետ, աշակերտ. ամէնքն ալ նոյն վիճակն ունին: Սուտ են ընկերվարականաց վարդապետութիւնք, միայն թշուառութիւնը, միայն հալածանքը դիրք, աստիճան, խելք եւ յիմարութիւն մէկ խմոր, մէկ զանգուած կ'ընէ»:

* * *

1915 թ. Յուլիսի սկիզբները Պօլսէն եկած մասնաւոր հրամանի մը համաձայն Հալէպ համախոնտած տարագիրներէն՝ բողոքականները եւ գաթօլիքները գերծ պիտի մնային սոր աքսորանքի մը դառնութիւնը ճաշակելէ:

Այս լուրը լուսատրչականներու մէջ յուսահատութիւն եւ բարոյալքում յառաջ կը բերէ:

Ըսողներ ալ կ'ըլլան, որ հրամանը արդիւնք է գերման եւ աստրիական կայսրերու ազդու միջամտութեան, քանի որ առաջինը բողոքականութեան եւ երկրորդը գաթօլիքութեան ամենաջերմ պաշտպաններն են:

Ատկէ գատ լսուեցաւ ալ, որ Մարաշէն Հալէպ տարագրուած վերապատուելի Ահարոն Շիրաճեան՝ յանուն բողոքական յարանուանութեան հեռագրած է Ներքին եւ Արդարութեան գործոց նախարարներուն, որ իրենք հայերու նման զօմիթճիներ¹⁸ չեն եւ անջատողական գաղափարներ չունին:

Անոնք, որ դիրութիւն կամ դրամական միջոց կ'ունենան՝ կը դիմեն այդ յարանուանութեանց պետերուն եւ անունսին արձանագրել տալով մէկուն կամ միւսին տօմարին մէջ եւ այդ կերպով կ'ազատին աքսորի ահաւոր մղձաւանջէն, իսկ այդ միջոցներէն

15 Մարթա Կոյս (ծնեալ ֆոն Վինքլեր), գերմանացի առեւտրական Կառլ Կոյսի կինը (30-ից աւելի տարիներ բնակուել են Հալէպում): Կապեր է ունեցել հայ եւ քուրդ գործիչների հետ: «Տիկին Քօյս սկիզբները զարհուրելի ատելութեամբ մը լեցուած էր նաեւ Հայոց դէմ, բայց այն ահաւոր թշուառութիւնը, որուն աւելի ետքը ենթարկուեցաւ հայ ժողովուրդը, զինքը այնքա՛ն յուզեց, որ միջոց մը ձեռքը խարազան մը առած Հալէպի փողոցներուն մէջ կը ծեծէր հայ խոշտանգող ոստիկանները: Նոյն իսկ ժամանակ մըն ալ հաւաքելով խնամեց հայ որբերը, զորս կառավարութիւնը ձեռքէն առաւ վերջէ» (Արամ Աստուծեան, էջ 76-77): Նրա մասին տե՛ս նաեւ՝ Թաներ Աքչամ, Սպանութեան հրամաններ: Թաւեաթ փաշայի հեռագրերն ու Հայոց ցեղասպանութիւնը, Երեւան, 2019, էջ 172-173, 238:

16 Սուրէն Պարթեւեան (1876–1921), գրող, հրապարակախօս:

17 Մնացորդներ:

18 Յեղափոխականներ:

գուրկ եղողները կը մնան իրենց գլխուն վերեւ դամոկլեան սուրի նման կախուած կարմիր ու սպիտակ վարդերու սպառնալիքին տակ:

Այդ հրամանը ոչ միայն Հալէպ, այլեւ ուրիշ տեղեր ալ գացած էր: Այդ շնորհիւ է, որ *Տօք. Յ. Պողոսեան* կ'ազատի թրքական վայրագութեան զոհ երթալէ, երբ *Գալաթիայէն* ամբողջութեամբ գաթօլիքներէ բաղկացած կարաւանի մը հետ ճամբայ կ'ելլէ: Այս պարագան՝ յարգելի *Տօք.ը* ինքը պատմած է Հալէպի Առաջնորդարանին մէջ Սահակ կաթողիկոսի, Կօթիսոնի գայմագամ Էմմանուէլ Պալեանի¹⁹ (նախկին վարդապետ) եւ մեր ներկայութեան:

Խարբերդի գերման միսիոնար մ-ր Էյման²⁰ ալ նոյն այդ մասնաւոր հրամանին զօրութեամբ կրցած է տարագրութենէ գերծ պահել իր հաստատութեան պաշտօնեաները եւ բողաքականներէն շատերը, ինչպէս նաեւ լուսաւորչականներէն անոնք, որ ինքզինքնին բողոքականութեան համակիր ցոյց տուած են:

Այդ օրերուն ժողովուրդի վիճակը անհանդուրժելի ըլլալէ աւելի ընդվզեցուցիչ եղած է, եւ ամենակարծր սրտերն անգամ շարժած, անշուշտ, ոչ թուրքերունը, որոնք մասնաւոր հրճուանքով կը դիտէին այդ տեսարանները:

Առաջնորդարանի շրջափակին եւ շրջակայ փողոցներու մէջ՝ հազիւ ծածկուած մարդկային խեղճներ կ'երեւէին, որոնցմէ օրական յիսունով, հարիւրով մահուան գիրք կը կ'իյնային: Միջոց մը միայն Հալէպի մէջ մեռնողներու թիւը 300-ի կը բարձրանայ՝ ըստ վիճակագրութեան Մատթէոս Երէցեանի²¹, որ շատ մեծ եւ գնահատելի ծառայութիւններ կը մատուցանէ՝ արեւելեան գաւառներէն կարաւաններու ողբերգական վիճակը նկարելով եւ մատամ Գօլսի միջոցաւ արտասահմանի թերթերուն մէջ հրատարակութեան տալով եւ խղճամիտ վիճակագրութիւններ եւ տեղեկագրեր պատրաստելով:

Մատթէոս Երէցեան՝ 1916ի սկզբները կը բանտարկուի Հալէպի Քաղաքային ժողովի անդամներէն՝ Ճիւրեճեան Մանուկի, Պարսամեան Յակոբի, *Առաջնորդարանի* փոխանորդ Եսայեան տէր Յարութիւն քահանայի²² եւ ուրիշներու հետ եւ հրաշքով կ'ազատի կախաղանի պատժին ենթարկուելէ:

Դժբախտաբար, բանտէն ինծի դրկած նամակները ներկայիս չ'ունիմ ձեռքիս տակ՝ մէջբերումներ ընելու համար անոնցմէ:

Քաղաքապետարանը իր աղբի սայլերու թիւը եռապատկելով հանդերձ դարձեալ չէր կրնար բաւականութիւն տալ պէտքին: Ազգային գոյգ գերեզմանատուները գրեթէ անանցանելի կը դառնան հողակոյտերէ: Այդ հաշուէն դուրս են այն տասնեակ հազարաւորները, որոնք Հալէպէն դէպի Տէր-էլ-Զօր երկարող ճամբուն վրայ կ'իյնան:

19 Էմմանուէլ Պալեանը եղել է Տրապիզոնի կաթողիկ հայոց հոգեւոր առաջնորդ, 1908-ին կարգաթող է եղել:

20 Եոհաննէս Էյման (1870–), մանկավարժական գործունէութիւն է ծաւալել Մեզրէում եւ Խարբերդում, փրկել է բազմաթիւ հայերի:

21 Մատթէոս Երէցեան (1885–), գրող, թարգմանիչ, խմբագիր, Հալէպի Հայոց Առաջնորդարանի քարտուղար:

22 Յարութիւն քահանայ Եսայեանը բանտում մնացել է մինչեւ 1918 թուականը (տե՛ս՝ Բիւզանդ Եղիայեան, *Ժամանակակից պապմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս, 1975, էջ 80):

Միայն Մէսքէնէի²³ մէջ՝ թիֆլիսէ եւ տիգանթերիէ մեռնողներու թիւը հարիւր հազարը անցած է՝ ինչպէս կը հաւաստէր մեզ Նիկոմիդիոյ հոգեւոյս առաջնորդը՝ Ստեփաննոս արքեպիսկոպոս Յովակիմեան²⁴, որ իր ազգականներուն հետ մինչեւ հոն տաւազորուելու դժբախտութիւնը կ'ունենայ:

Սահակ կաթողիկոսը կ'ուզէ թէեւ զինքը Հալէպի մէջ պահել, բայց Ստեփաննոս արքեպիսկոպոս չ'ուզէր իրեններէն բաժնուիլ եւ սիրայօժար կ'ենթարկէ ինքզինքը այդ տառապանքին: Այս տեսարաններուն առջեւ է, որ կուսակալ Ճէլալ պէյ կ'ըսէ. «Երանի գետինը բացուեր եւ զիս ծածկեր, որ այս մանգարէն²⁵ չը տեսնէի»²⁶:

Ճիշտ այդ օրերուն կը զուգադիպի հայ ազատագրութեան պատմութեան էջերէն մին կազմող Ուրֆայի եւ Սուլտիոյ հերոսամարտերը, որոնց իբր հակազդեցութիւն՝ կառավարութիւնն անելի կը սաստկացնէ իր հալածանքը եւ *մուհաճիր մուրիւրը* տխրահռչակ Էյուպի²⁷ ամենախիստ հրամաններուն վրայ Սէվզընթաթի պաշտօնեաները եւ ոստիկանները որսկան շուններու նման չորս կողմ ինկած հայ *կը փնտրին* եւ գտածսին Սէպիլ կը դրկեն, հոնկէ ալ խոշոր զանգուածներու վերածելով դէպի Տէր-էլ-Զօր քշելու համար:

* * *

Տէր-էլ-Զօրի նոյն ատենուայ կառավարիչ Ալի Սուալիի մասին թէեւ նպաստաւոր կը խօսուէր Հալէպի մէջ, մանաւանդ որ ան՝ Սահակ կաթողիկոսին հետ տեսնուած ատեն՝ իր իրաւասութեան տակ գտնուող հայերուն նկատմամբ գթօտ վերաբերմունք ունենալ կը խոստանայ²⁸, բայց յաջորդին՝ տխրահռչակ Զէքիին օրօք իրական դժոխք մը

23 Մէսքէնէ, Մապրանա – Եփրատի սահմանակից անապատներից մէկը եւ համանուն քաղաք Սիրիայի հիւսիսում:

24 Ստեփաննոս արքեպիսկոպոս Յովակիմեան (1846–1934), եկեղեցական-հանրային գործիչ: Իր երկարամեայ առաջնորդութեան շրջանում կառուցել եւ հաստատել է բազմաթիւ եկեղեցիներ, դպրոցներ եւ անգամ գիւղեր:

25 Տեսարան (արաբերէն):

26 Ժամանակակիցների վկայութեամբ՝ Հալէպի կուսակալ Ջէլալ բէյը նման չի եղել միւս օսմանեան պաշտօնեաներին: «Բարեբախտութիւն մըն է նաեւ, որ Հալէպի վալին՝ Ճէլալ Պէյ, բարեխնամ դիրք կը պահէ հայ գաղթականութեան հանդէպ եւ ամէն դիւրութիւն կ'ընծայէ Սահակ Կաթողիկոսի նախագահութեան ներքեւ գործող խնամապար մարմիններու» (Բիւզանդ Եղիայեան, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, էջ 47):

27 Էյուպ բէյ – Հալէպի գաղթականների գրասենեակի տնօրէն, յայտնի իր հայատեացութեամբ:

28 Ըստ Արամ Անտոնեանի՝ Ալի Սուալի (Ալի Սուալ) «անելի բարի եւ ազդեցիկ մարդ մըն էր..... Բէւ-Իւլ-Այն իր վարչութեան շրջանակին մէջ ըլլալով, մինչեւ այն ատեն ամէն ջանք ըրեր էր որպէս զի հոն խոնարած հայ գաղթականներու գոլումը մեղմուի: Գիւղին մօտ՝ բարձունքի մը կատարը հաստատել հուած էր անոնց վրասները, եւ տեսակ մը թաղ ալ նոյն ինքն գիւղին շրջանակին մէջ հաստատած էր այն Հայոց համար, որոնք տակաւին քիչ շատ դրամագլուխ ունենալով, կրնային խանութպանութիւն ընել:Բայց նոյն իսկ այս բարի մարդը ամբողջովին զերծ չէ մեղադրանքէ: Կարծես ճակատագրուած էր, որ ոչ մէկ թուրք պաշտօնեայ, այդ ընդհանուր անբարոյականացման օրերուն, պիտի կրնար լիովին պարկեշտ, արդար ու մաքուր մնալ:Ինչ որ ալ ըլլայ սակայն, բաղդատմամբ միւս Թուրք պաշտօնեաներուն, Սուալ Պէյ աստուածային բարիք մըն էր այդ միջոցին՝ նոյն կողմերը քշուած հայ գաղթականներուն համար» (Արամ Անտոնեան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա: Պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ

կ'ըլլայ Տէր-էլ-Զօրը, եւ Արաբ-Բունարի Բաս-իւլ-Այնի, Ճարապուլուսի մէջ արարներու, չէէններու եւ նոյն իսկ կարաւաններու ընկերացող ոստիկաններու ի գործ դրած վայրագութիւններու արձագանգը օր օրին կը լսուին Հալէպի մէջ եւ սարսուռ կ'ազդեն ժողովուրդին:

Այդքան դժնդակ պարագաներու տակ բնականաբար ոչ որ պիտի ուզեր ձեռք առնել դժոխքի այդ ճամբան, որով շատեր իսլամանալու *գաղափարն անցնել* կ'ունենան պահ մը, որովհետեւ Էյուպ՝ օր մը օթէլ-Պարօնի մէջ օդիի սեղանին շուրջը գլուխը լաւ մը տաքցնելէ յետոյ իրեն սեղանակից եղող հայու մը անվերապահօրէն կ'ըսէ. «Փրկութեան միակ ճամբան իսլամացումի մէջ կը կայանայ»:

Իթթիհատի ներկայացուցիչ Ճէմալ ալ, որ յատկապէս եկած էր Հալէպ՝ տարագրումի գործը վարելու՝ կեդրոնէն ստացած հրահանգին համաձայն՝ կը խոստանայ ամէն դիրքութիւն տալ իսլամացողներուն՝ ինչ որ կը վայելէն իսլամ գաղթականները:

Իթթիհատի կեդրոնն արդէն որդեգրած էր այդ սկզբունքը եւ Ապրիլի սկիզբները՝ Ներքին գործոց նախարարէն՝ ոճրածին Թալէպէն ծածկագիր հեռագրով մը հրամայուած Ատանայի կուսակալ Իսմայիլ Հազգիի, որ բացի ճանչցուած կուսակցականներէ եւ ժողովուրդին վրայ ազդեցութիւն ունեցողներէն՝ միւսներուն կողմէ իսլամացման առաջարկ եղած պարագային՝ ընդունի անոնց առաջարկը եւ զերծ կացուցանէ տարագրութենէ:²⁹ Այս լուրը Ատանայի փօլիս Միտիքի գմիռնիացի չերքէզ Ճէմալ պէյ յայտնած էր վստահելի բարեկամի մը:

Պօլսոյ մէջ այդ ուղղութեամբ առաջարկներ կ'ըլլան ոմանց եւ անոնցմէ երկուքը, երբ Ապրիլի վերջերը կը դիմեն Զաւէն պատրիարքի, կը պատասխանէ. «Ինծի ինչո՞ւ կը հարցնէք, ձեր փրկութիւնը ինչ բանի մէջ որ կը տեսնէք՝ զայն ի գործ դրէք»:

Այս պարագան լսած ենք Եր. Վարդապետ Փէրտահճեանէ³⁰, որ 1916ին Երուսաղէմ արքայութեան էր Մկրտիչ եպիսկոպոս Աղանունիի³¹, Դանիէլ արքեպիսկոպոս Յակոբեանի, Մամբրէ վարդապետ Սիրունեանի³² եւ Խորէն վարդապետ Թաշճեանի³³ հետ:

1916–17ին բռնի իսլամացումներ տեղի կ'ունենան Համայի, Հոմսի, Դամասկոսի եւ շրջակայ գիւղերու, ինչպէս նաեւ Անդր Յորդանանու եւ Հաւրանի կողմերը՝ Պօլսէն եկած մասնաւոր մարմնոյ կողմէ:

Բռնի իսլամացումէ զերծ չեն մնար Թաֆիլէ արքայութեան 18 քահանաներէն եւ պատուելիներէն ոմանք՝ իրենց ընտանիքներէն անջատուելով՝ Տէր-էլ-Զօրի սպանդանոցը չը դրկուելու համար:

պատկերներով, Պօսթըն, 1921, էջ 46–47):

29 Իրականում իսլամացումն էլ յաճախ չի փրկել հայերին: Բազմաթիւ դէպքերից յիշենք Թաներ Աբչամի վկայակոչումը մարգուանցի մի իսլամացած հայ ընտանիքի մասին, որը, սակայն, արքայութեան է Հալէպ: «Թէեւ պարզ էր, որ այդ մարդն իսլամ է ընդունել եւ ստացել Եռուսի Զիեմ անունը, Արդուլախադ բէյն ասաց. «Կարեւոր չէ՝ ընդունել է, երբ է ընդունել, միեւնոյն է, չի ազատում գաղթից...» (Թաներ Աբչամ, էջ 214–215): Իսլամացման մասին տե՛ս նաեւ՝ Անտոնեան, էջ 123, 178–179:

30 Երուսաղէմ արքեպիսկոպոս Փէրտահճեան (1874–1936), հոգևոր գործիչ:

31 Մկրտիչ եպիսկոպոս Աղանունի (1863–1941), հոգևոր գործիչ, բանասէր:

32 Մամբրէ վարդապետ Սիրունեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու եգիպտահայ թեմի առաջնորդ:

33 Խորէն վարդապետ Թաշճեան (1891–1955), եկեղեցական գործիչ:

Թաֆիլէի քահանաներուն մէջ կը գտնուէին ողբացեալ «երիցապետ»ը՝ տէր Ներսէս քահանայ Թաւութեան եւ *Ծովական քահանայ Կիւղալեան*, որ այդ առթիւ բաւական ընդարձակ տեղեկագիր մը կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Սահակ կաթողիկոսին՝ անոր կաթողիկոս-պատրիարքութեան օրերուն:

Խարբերդի կուսակալ Սապիթ պէյ՝ ինքը կ'առաջարկէ շատերուն, որ իսլամանալով գերծ մնան տեղահանութենէ: Խարբերդի մէջ գտնուած միջոցիս՝ ժողովուրդի մեծ մասը իսլամական անունով կը ճանչցուէին թուրքերէն. Աքիֆ Ուսհա Նէգուրթի, Միւֆիթ Շէվալթէ, Արիֆ Մէքազի կամ շատերուն ալ իմամիլները եւ հանած եմ ձեռքովս:

* * *

Սահակ կաթողիկոսը համար 4980-94 եւ Յուլիս 19 թուակիր նամակով կը գրէ Ջաւէն պատրիարքին. «Անօթութիւնը հիւանդութեան չափ կոտորած կ'ընէ, թախնաթ³⁴ Հալէպի մէջ գրեթէ կանոնաւորապէս կը տրուի կառավարութեան կողմէ. միակ չնչին նպաստը ամբողջ գաղթականութեան, բայց դուրսերը հաց կ'աղաղակեն: Կամ Քրիստոսի հրաշագործ զօրութիւնը եւ կամ թագաւորական գանձ պէտք է, որ կէս միլիոն կիլիկեցիք, թերեւս նոյնչափ կամ աւելի արեւելեան գաւառներէն գալիքները կարողանան կերակրուիլ Սուրիոյ անապատներուն մէջ: Թողունք Ամերիկայի եւ Եւրոպայի մարդասէրները, ի՞նչ կ'ընեն տարաբնակ, եգիպտաբնակ եւ ամերիկաբնակ հայերը, ժամանակ է, որ գաղթականաց հոսանքին պէս նպաստի հոսանքներ կազմուին. աշխարհ տեսած չէ եւ չպիտի տեսնայ այսքան արհաւիրք, այսքան թշուառութիւն եւ կարօտութիւն, Երուսաղէմի *աւերը* բաղդաւորութիւն է հայութեան աւերանաց բաղդատմամբ:

Կոտորած, բռնաբարութիւնք, *էրկրիս* մանուկներու անհամար առեւանգութիւն, գեղատես կանանց, հարսներու եւ կոյսերու վաճառում մինչեւ անգամ երեք մէճիտիէի չ'համրուիր եւ չ'բացատրուիր:

...Ո՛ր են Իսաչի ընկերութիւնները՝ խաչին զոհուող ցեղի մը եթէ ձեռք չ'երկնցնին, ինչո՞ւ խաչին անունը կ'արատաւորեն: Վիրաւոր կը փնտռեն. նիթապէս, բարոյապէս, կրօնապէս եւ մտաւորապէս վիրաւոր մըն է հայ ժողովուրդը: Դրամ հասցուցէք, 500 ոսկիները չեն բաւէր: Անշունչ բնութիւնը, քարերն ու ապառաժները կու լան, սրտերը թող լան. ըլլան օտար, ըլլան ընտանի:

Ի՞նչ պիտի ըլլան Աստծոյ տաճարները, ի՞նչ պիտի ըլլան վանքերն ու մենաստանները, ի՞նչ պիտի ըլլան եկեղեցապատկան կալուածները, սպասները, գիրքերը ու զգեստեղէնք: Խորհո՛ւրդ տուէք, մենակ եմ, խելք չը մնաց գլուխս, արտասուք չը մնաց աչքերուս մէջ, զգացում չը մնաց սրտիս մէջ, չորս կողմս գիշեր եւ ցերեկ մերկութիւն, անօթութիւն, նուաղում, լաց ու վայնասուն, պատառ մը թո՛ղը հասցուցէք, ըսէ՛ք, թէ ի՞նչ կ'ընէք, ի՞նչ յոյս ունիք, ի՞նչ ապագայ կը նշմարէք: Ժողովուրդը կը հարցնէ ամէն օր՝ ի՞նչ կ'ընէ Պօլիսը, *ի՞նչ կ'ընէս*. Պատրիարքը, ի՞նչ կ'ընեն ժողովները:

...Արտասուքով կը գրեմ, բաական է, միայն կը խնդրեմ, որ այս ընդհանուր ցաւի մէջ մոռնանք անձնական ցաւերը: Հաճընի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը տառա-

34 Կառավարութեան կողմէ յատկացուած նպաստ՝ կերակրորի կամ դրամի տեսքով (թուրքերէն):

պեցաւ, մխիթարութեան եւ քաջալերանքի պէտք ունի... Մնացած այրիները իսկական որբեր են եւ անօթութեամբ կը տառապեն եւ կը տառապեցնեն անբաղդ եպիսկոպոսը»:

Յուլիս 23ին՝ Սահակ կաթողիկոսը Ճէմալի տրուած հեռագրով մը. «Տիարպէքիրի եւ շրջակայից մէջ այրերը անխտիր սպաննուելէ յետոյ՝ ընտանիքները հոս դրկուած էին, 5էն 10 տարեկան աղջիկներու եւ տղայքներու, ինչպէս նաեւ Տէր-Զօրի, Բաս-իւ-Այնի եւ այրի ու կոյս գտնուած բոլոր վայրերուն մէջ բռնաբարումը, կուսապղծութիւնը, արուամուլութիւնը, կիներու եւ աղջիկներու ասարառութիւնը սովորական դարձած ըլլալը եւ շատերուն ալ պատիւը լկուելէ յետոյ սպաննուած ըլլալին, հազարաւորներ երկաթ. կայարաններուն առանց մօտեցնելու՝ շարաքներով անջրդի անապատներու մէջ իրենց ընկերացող ոստիկաններուն եւ գիւղացիներուն կողմէ մարդկային խղճին անհաղորդ դէպքեր տեղի ունենալը, Արաբ-Բունար եւ շրջակայքը թողուած կիներու, աղջիկներու եւ երեխաներու հոս փոխադրուելուն համար կրկնակի դիմումներ կատարուած ըլլալով մէկտեղ՝ դիտմամբ վար դրուելով՝ խստութիւններու շարունակութիւնը, Այնթապէն երկու անգամով տեղահանուած ընտանիքներուն ճանապարհին ոստիկաններու եւ ժողովուրդին կողմէ շրջապատուելով՝ կողոպտուած ըլլալին, մէկուն սպաննուիլը եւ տասներկուսին ալ վիրաւորուիլը» թուելէ յետոյ կը բացագանչէ. *«Էլաման, ավազէի իսթիմարարները իսթիմա պույուրլարաք ինսանիյէթ նամընա շու հալ-լերէ պիր իսպօմը վերիլմէսինի քենալը թէշարրու իլէ իսթիրհամ իյլերիմ»*³⁵:

«Դժբախտաբար Ֆրնտճագի պատահարը մէհաճիրութեան³⁶ հետաձգումը անհնարին դարձուցած է թէւ, բայց հայ ժողովուրդին ամէն տեսակ թշուառութենէ պաշտպանուելուն համար ամէն կողմ հրամաններ տուի»։ Կ'ըլլայ Ճէմալի պատասխանը:

Նոյնիմաստ եւ քիչ մը ւելի խիստ լեզուով խմբագրուած գրութիւն մըն ալ Հալէպի կուսակալ Պէքիր Սամիի կը դրկէ տէր Յարութիւն քահանայի միջոցաւ: Կուսակալը կարդալէ յետոյ՝ քահանայի երեսին կը պոռայ. «Տակաւին երես ունի՞ք իբր ազգ ներկայանալու եւ այս կարգի դիմումներ ընելու»:

Իսեղճ տէր Յարութիւնը սահմեկած կը հեռանայ կուսակալի քովէն եւ դողահար ու գունաթափ վիճակի մէջ Առաջնորդարան գալով՝ եղելութիւնը կը պատմէ Սահակ կաթողիկոսին, որ չափազանց կ'ազդուի թէւ, բայց կը պահէ իր պաղարիւնութիւնը³⁷:

35 «Բաւակա՛ն է, իմ օգնութեան աղաղակը լսելով՝ յանուն մարդկութեան այս վիճակին վերջ տալը խնդրում եմ օրէնքի համաձայն» (թուրքերէն):

36 Մէհաջիր – գաղթական (արաբերէն):

37 Հեղինակը երախտապարտ է պոլսահայ մտաւորական Ճան Էրզորումլուօղլուին՝ շարադրանքում առկայ թուրքերէն (օսմաներէն) բառերն ու նախադասութիւնները թարգմանելու համար:

AN EXCERPT FROM KUD MKHITARIAN'S UNPUBLISHED MEMOIRES
“EPISODES FROM ARMENIAN GOLGOTHA”

Artsvi H. Bakhchinyan

Institute of History of National Academy of Sciences, Armenia

SUMMARY

The publication presents an excerpt from the unpublished memoirs, “Episodes from the Armenian Golgotha. 1912–1937” by Kud Mkhitarian - the chapter “Catholicos Sahak again in Aleppo.”

Kud Mkhitarian (1877-1940) in 1903–1919 worked at the Armenian Catholicosate of the Great House of Cilicia as the secretary of the Catholicos Sahak II Khabayan. In his memoirs, in particular, he presented Catholicos's activities on the background of political events in the Ottoman Empire.

The presented excerpt presents Catholicos Sahak's trip to Aleppo in May-July 1915, quotes from his correspondence with various figures, in which he testifies to the deportation and massacres of the Armenian population. Mention is made of the names of the Armenian creative intelligentsia - victims of the Genocide, as well as evidences of attempts to forcibly Islamize Armenians.

Key-words: Kud Mkhitarian, Catholicosate of Cilicia, Armenian genocide, 1915, genocide victim intellectuals, Catholicos Sahak II Khabayan, Aleppo, deportation, forced Islamization.

ОТРЫВОК ИЗ НЕИЗДАННЫХ МЕМУАРОВ КЮДА МХИТАРЯНА
“ФРАГМЕНТЫ АРМЯНСКОЙ ГОЛГОФЫ”

Արցւի Դ. Բախչինյան

Институт истории Национальной академии наук, Армения

РЕЗЮМЕ

В публикации представлен отрывок из неизданных воспоминаний “Фрагменты Армянской Голгофы: 1912–1937” Кюда Мхитаряна – глава “Католикос Саак снова в Алеппо”.

Кюд Мхитарян (1877-1940) в 1903-1919 гг. работал в Киликийском католикосате Армянской апостольской церкви секретарем католикоса Саака II Хабаяна. В своих мемуарах он, в частности, представил деятельность католикоса Саака на фоне политических событий в Османской империи.

В представленном отрывке рассказывается о поездке католикоса Саака в Алеппо в мае-июле 1915 г., цитируются фразы из его переписки с различными деятелями, в которых он свидетельствует о депортации и массовых убийствах армянского населения. Упоминаются имена армянской творческой интеллигенции – жертв Геноцида, а также свидетельства о попытках насильственной исламизации армян.

Ключевые слова: Кюд Мхитарян, католикосат Киликии, Геноцид армян 1915 г., представители армянской интеллигенции – жертвы Геноцида, католикос Саак II Хабаян, Алеппо, депортация, насильственная исламизация.

REFERENCES

- Matt'eosean Vardan. *Հարավային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950* (Անթիլիաս, 2005): [The Southern Side of the Earth: Armenians in Latin America from the Beginnings to 1950]. Antelias, Armenian Catholicosate of Cilicia, 2005;
- Mkhitarean K. *Նամակներ Պրագիկայէն* [Letters from Brazil]. “Hairenik,” Boston, 1926, April 17;
- Stepanyan Garnik. *Կենսագրական բառարան*, հատոր Գ [Biographic Dictionary]. Yerevan, Khorhrdayin grogh, 1990.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Արծվի Հ. Բախչինյան, բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայ գաղթավայրեր և Սփյուռք, մշակույթի պատմություն, հայազգի ականվոր գործիչներ:

Էլ. փոստի հասցե՝ artsvi@yahoo.com

Artsvi H. Bakhchinyan, PhD in Philology, Senior Researcher, Institute of History, National Academy of Sciences, Armenia.

Research fields – history of Armenian communities and Diaspora, history of art, eminent figures of Armenian origin.

E-mail: artsvi@yahoo.com

Арцви Г. Бахчинян, кандидат филологических наук, старший научный сотрудник Института истории Национальной академии наук Республики Армения.

Область исследований – история армянских общин и диаспоры, история искусства, знаменитые деятели армянского происхождения.

Эл. почта: artsvi@yahoo.com

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Յեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորոյթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Յեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժանկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Յեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, դրական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հայտոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Հարաբառյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալներ», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)”

in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաւորութիւններ Հայաստան-Սփիւք յարաբերութիւնների համատեքստում», *Սփիւք եւ ինքնութիւն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքս. Ալթունյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոպյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը,

գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.¹

Թորոսյան, *Դարդանեղից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.¹

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.¹

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.¹

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 280.

2. Վերժինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հոդվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.

2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:

3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև՝ DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.

Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>

3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.

4. Շուշան Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտականեր, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.

2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.

6. Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չափերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
 Բ բ - B b
 Գ գ - G g
 Դ դ - D d
 Ե ե - E e
 Չ զ - Z z
 Է է - E' e'
 Ը ը - Ë ë
 Թ թ - T' t'
 Ժ ժ - Zh zh
 Ի ի - I i
 Լ լ - L l
 Խ ք - Kh kh
 Ծ ծ - Ts ts
 Կ կ - K k
 Հ հ - H h
 Ձ ձ - Dz dz
 Դ դ - Gh gh
 Ճ ճ - Ch ch
 Մ մ - M m
 Յ յ - Y y
 Ն ն - N n
 Շ շ - Sh sh
 Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
 Չ չ - Ch' ch'
 Պ պ - P p
 Զ շ - J j
 Ռ ռ - R' r'
 Ս ս - S s
 Վ վ - V v
 Տ տ - T t
 Բ բ - R r
 Յ գ - Ts' ts'
 Ու ու - U u
 Փ փ - P'p'
 Ք կ - Q q
 Եվ է - Ev ev
 Օ օ - O' o'
 Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
 Б б - B b
 В в - V v
 Г г - G g
 Д д - D d
 Е е - E e
 Ё ё - Io io
 Ж ж - Zh zh
 З з - Z z
 И и - I i
 Й й - İ i
 К к - K k
 Л л - L l
 М м - M m
 Н н - N n
 О о - O o
 П п - P p
 Р р - R r
 С с - S s
 Т т - T t
 У у - U u
 Ф ф - F f
 Х х - Kh kh
 Ц ц - Ts ts
 Ч ч - Ch ch
 Ш ш - Sh sh
 Щ щ - Shch shch
 Ъ ъ - “
 Ы ы - Y y
 Ь ь - ‘
 Э э - E' e'
 Ю ю - Iu iu
 Я я - Ia ia

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթ՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 150:

Համակարգչային ձևավորումը՝ Քրիստինե Վարդանյանի

Տպագրվել է